ԱՐԱՐԱՏ ԵՓՐԱՍԻՈՍ ՍԱՐՏՈՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ՍԵՍՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՌԱՔ ՕՐԻՆԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2011

947.925:27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 105485

ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ՍԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՆՄԻՈՒ ԳՈՏԻԿՈՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2013

ՀՏԴ 941 (479.25) : 27
ԳՄԴ 63.3 (2 Հ) + 86.37
Ա 161

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում

Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյան
Ա 161 Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակաշրջանում/ Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյան – Եր.: Պատմության ինստիտուտ, 2013. – 164 էջ:

Աշխատությունում աղբյուրագիտական և պատմագիտական լայն հենքի վրա ներկայացվում է Սյունյաց աթոռի պատմության՝ Օրբելյան հոգևոր գործիչների ժամանակաշրջանը: Օրբելյանների գործունեությունը Սյունիքում հանդիսանում է Հայ եկեղեցու և, ընդհանրապես, հայոց պատմության լուսավոր էջերից մեկը:

Աշխատության հիմքում հեղինակի թեկնածուական ատենախոսությունն է, որի հրապարակային պաշտպանության համար նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գիրքը հասցեագրված է ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 941 (479.25) : 27
ԳՄԴ 63.3 (2 Հ) + 86.37
ISBN 978-99941-73-80-8
©Պատմության ինստիտուտ, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սյունիքը հայ ժողովրդի եւ Հայ եկեղեցու պատմության մեջ բացառիկ կարեւոր դեր կատարած երկրամասերից է: Միջնադարում այստեղ էր հաստատված Հայ եկեղեցու ամենամեծ եւ ազդեցիկ եպիսկոպոսական աթոռներից մեկը, որը պատմական որոշակի ժամանակաշրջանում վերածվել է մետրոպոլիտական աթոռի, կարեւոր դեր կատարել ոչ միայն երկրամասի, այլեւ ողջ երկրի եկեղեցական, կրթական, մշակութային կյանքում:

Վերջին շրջանում Հայ եկեղեցու պատմության հարցերը հայտնվել են հայագիտության ուշադրության կենտրոնում: Եւ դա հասկանալի է, քանի որ խորհրդային շրջանում Հայ եկեղեցու պատմության նկատմամբ համարժեք մոտեցում չկար, որի հետեւանքով հայոց պատմության ուսումնասիրությունը եւս ամբողջական չէր: Հայ առաքելական եկեղեցին իր գործունեությամբ սերտորեն կապված է եղել եւ կապված է հայ ժողովրդի քաղաքական պատմության հետ: Պատմության ընթացքում այն հաճախ իր վրա է կրել երկրի ե՛ւ կրոնական-հոգեւոր, ե՛ւ քաղաքական-աշխարհիկ իշխանությունների պարտականություններն ու պատասխանատվությունը: Հետեւաբար, բուն հայոց պատմությանն անդրադարձողները ոչ միայն չպետք է անտեսեն

եկեղեցական պատմությունն ու եկեղեցու դերը տվյալ ժամանակահատվածում, այլ նաև պետք է փորձեն առավելագույնս ընկալել ստեղծված պատմական իրավիճակը և այդ լույսի ներքո վեր հանել և ներկայացնել տվյալ եկեղեցականի գործունեությունը, չանտեսելով նաև ծագումը, կրթությունը, իմացական ու հոգևոր կարողությունները:

Այս առումով անչափ հետաքրքիր է Սյունյաց աթոռի պատմության Օրբելյան հոգևոր գործիչների ժամանակաշրջանը: Քանզի այն, ինչ հաջողվեց Օրբելյաններին Սյունիքում, հանդիսանում է և Հայ եկեղեցու, և ընդհանրապես հայոց պատմության լուսավոր էջերից մեկը:

Համաշխարհային պատմությունից ակնհայտ է, որ կայացած կայսրություններում, երբ դրանք գտնվում են հատկապես խաղաղության, իրենց հզորության ու ծաղկման շրջանում, կայսրության մեջ ներգրավված ժողովուրդներն ու ազգերն ապրում են որոշակի վերելք հասարակական, տնտեսական ու մշակութային կյանքի զանազան բնագավառներում, եթե հատկապես դա չի հակասում կայսրության որդեգրած գաղափարախոսությանն ու քաղաքականությանը: Թերևս բնական պետք է համարել նաև այն իրավիճակը, երբ կայսրությունների ինչպես ստեղծման ու ձևավորման, այնպես էլ թուլացման, տրոհման, քայքայման կամ վերացման ժամանակաշրջանը կատարյալ պատուհաս, երբեմն էլ ամբողջական աղետ են դառնում առանձին ազգերի ու ժողովուրդների, կամ առանձին շրջանների համար: Եվ վերջնական արդյունքում շահած է դուրս գալիս այն ազգը, որ կայսրությունների ինչպես ստեղծման, այնպես էլ վերացման տվյալ ժամանակահատվածում ունենում է նվիրյալ ու հեռատես քաղաքական գործիչներ ու առաջնորդներ և կատարում է հաշվարկված ճիշտ քայլեր: Հայաստանի պատմությանն անդրադառնալիս արժե ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ երբ Հայաստանը գտնվել է որևէ կայսրության կազմում, ապա

գրեթե միշտ հայտնվել է այդ կայսրության ամենահեռավոր, հաճախ սահմանային երկրի կարգավիճակում՝ դրանից բխող բոլոր դրական ու բացասական հետևանքներով (Հռոմեական, Բյուզանդական, Թուրքական կայսրությունների ամենահեռավոր արևելյան երկիր, Արաբական կայսրության ամենահեռավոր հյուսիսային երկիր, Պարսկական ու Մոնղոլական կայսրությունների ամենահեռավոր արևմտյան երկիր, Ռուսական կայսրության ամենահեռավոր հարավային երկիր): Օրբելյանների աշխարհիկ ու հոգևոր իշխանապետությունը, որ հիմնականում համընկնում է Մոնղոլական կայսրության ժամանակաշրջանին, վերն ասվածի լավագույն հիմնավորումն է: Մերօրյա անկախ Հայաստանի պայմաններում հայ ժողովրդի և Հայ եկեղեցու պատմության բաղմակողմանի ուսումնասիրումը, զերծ արտաքին գաղափարական և այլ պարտադրանքներից, ունի նաև ազգային արժեհամակարգի ճիշտ ընկալման խնդիր:

Թերևս պատմական անցյալի վերարժևորման և եկեղեցին իր ազգապահպան ու քրիստոնեական ճշմարիտ դավանանքի, փրկագործության առաքելության մեջ վերստին տեսնելու հրամայականն է, որ ներկայիս պատմաբանների ու տարբեր մասնագետների մոտ հետաքրքրություն են առաջացրել նաև Սյունյաց աթոռի պատմության հարցերը: Վ. Ալեքսանյանի «Սյունիքի եպիսկոպոսությունը վաղ միջնադարում» թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը (1999), ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ ու առանձին աշխատությունները վերը նշվածի վկայություններն են: Վերջին մեկ ու կես տասնամյակում հայտնաբերված վիմագիր նոր արձանագրությունները, Սյունիքում եւ Վայոց ձորում ընթացող հնագիտական պեղումները նոր նյութեր են տալիս թեմի և ընդհանրապես երկրամասի պատմության առավել հանգամանալից ուսումնասիրման համար:

Սյունյաց աթոռի՝ Օրբելյանների իշխանության շրջանի պատմության ստորև ներկայացվող ժամանակաշրջանն ընդգրկում է շուրջ 300 տարվա պատմություն՝ 12-րդ դարի վերջերից մինչև 15-րդ դարի վերջերը. Ներկա աշխատությամբ փորձել ենք, համակարգված կերպով, հայտնի եւ նորահայտ փաստերի ու տեղեկությունների համադրմամբ ներկայացնել Սյունյաց հնավանդ աթոռի պատմության հետաքրքրական եւ քիչ ուսումնասիրված ժամանակաշրջաններից մեկը: Թեեւ աշխատությունը շարադրելիս մեր առջեւ գիտական խնդիրներ ենք դրել, բայց նաեւ կարծում ենք, որ Հայ եկեղեցու պատմության, կամ նրա առանձին եպիսկոպոսական աթոռների վերաբերյալ ուսումնասիրությունների երեւան գալը դառնում է միջոց, որով նոր սերունդը հնարավորություն է ունենում հաղորդակցվելու իր մեծագործ նախնիների կյանքին ու գործին, նրանց ապրած պատմական ժամանակաշրջանին, անվերապահ հայրենասիրությանն ու նվիրումին, պայքարին ու մաքառումին, եւ համոզվելու, թե որքան կարեւոր դեր է կատարել եկեղեցին հայոց պատմության ընթացքում՝ դարեր շարունակ մեր ունեցած միակ ազգային կառույցը, ուր կրթվում և ապաստան էին գտնում մեր ազգի բազում հանճարեղ ու տաղանդավոր անհատներ: Դա նաև լավագույն ձևն է՝ ճանաչելու և արժևորելու դարերի ընթացքում նախկին սերունդների թողած հոգևոր ու մշակութային ժառանգությունը, այն պահպանելու, առավել հարստացնելու և հաջորդ սերունդներին փոխանցելու համար: Իսկ մեր օրերի հոգևորականների համար նախկին հայրենասեր մեծագործ հոգևորական անհատների օրինակը ուսանելի մխիթարանք է մնում: Նաև այս առումով Սյունյաց աթոռի պատմությունը անսպառ աղբյուր է մերօրյա նվիրումի ու մաքառումի:

Սյունյաց թագավորությունը (970–1170), որի կազմի մեջ մտնում էին պատմական Սյունիքի 12 գավառներից 6-ը միայն, ուներ 43 բերդ: Սա մի պարզ ապացույց է այն բանի, թե ռազմա-

կան տեսակետից որքան կարևոր էր այս նահանգը և թե ինչու էր Սյունիքի համար հաճախ օգտագործվում «անառիկ» տերմինը: Աշխարհագրական դիրքն ու ռազմական կարողությունները ապահովում էին տնտեսության ու մշակույթի զարգացումը: Սյունիքում դարեր շարունակ կառուցվել էին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ: Վանքերի թիվը հասնում էր շուրջ 150-ի, որոնցից նշանավոր են՝ Տաթևը, Վահանավանքը, Նորավանքը, Արատեսը, Ցախացքարը, Որոտնավանքը, Թանահատը եւ այլն: Վանքերում ոչ միայն կրոնական պաշտամունք էր կատարվում, այլ դրանք նաեւ դպրության ու դրչության խոշոր կենտրոններ էին: Հիշենք Մաքենիսի, Տաթեւի, Գլաձորի, Հերմոնի, Վերին Նորավանքի եւ այլ բազմաթիվ վանքերին կից ստեղծված համալսարանները, դպրոցներն ու դրչության կենտրոնները: Այս վանքերում դրվել ու նկարագրվել են տասնյակ հազարավոր մատյաններ, որոնց մի մասը ոչնչացվեց բարբարոս նվաճողների կողմից, մի մասը հափշտակվեց ու անդառնալի կորստյան մատնվեց, իսկ մի մասն էլ այժմ գտնվում է աշխարհի տարբեր մատենադարաններում, գրադարաններում, թանգարաններում, մասնավոր անձանց մոտ:

Քանի դեռ հզոր էր Սյունյաց նախարարությունը՝ բարեկարգ, հաստատուն էր Սյունյաց աթոռը, եկեղեցական հարցերի մեջ ազդեցիկ էր այդ աթոռի գահակալի խոսքը: Սյունյաց նախարարությունը, որի իշխանության տակ էր գտնվում շուրջ 15.000 քառ. կմ տարածություն, պատմական Հայաստանի նախարարություններից միակն էր, որ կոչվում էր «բյուրավոր», քանի որ նրա միայն հեծյալ զորքի թիվը հասնում էր 19.400-ի: Իսկ ռազմական հզորությունը ենթադրում էր նաեւ տնտեսական հզորություն: Հոգեւոր, մշակութային, ռազմական, տնտեսական եւ նյութական մեծ կարողությունների ապացույց է բազմաթիվ վանքերի, բերդերի ու քարավանատների առկայությունը: Թերեւս այսպիսի հզորությունն են նկատի ունեցել հայ Արշակունի

թագավորները, որ Սյունյաց նախարարներին հատուկ հարգանքի ու պատվի են արժանացրել: Այսպես, «Թորգոմի տան ընտիր իշխաններից» մեկն էր եւ Սյունյաց իշխանը, որը Տրդատ Մեծի կողմից Ս. Գրիգոր Լուսավորչի շքախմբում կեսարիա էր ուղարկվել[1]:

«Գահնամակում» Սյունյաց նախարարը նշվում է առաջին տեղում: Սյունիքի ռազմական ու տնտեսական հզորությունն ու երկրի ղեկավարման գործում ունեցած ազդեցությունը քաջ գիտակցել են նաեւ օտար նվաճողները: Երբեմն, օգտագործելով միջֆեոդալական խռովությունները, ինչպես նաեւ Սյունյաց իշխողներից ոմանց փառասիրական ձգտումները, նրանք փորձեր են արել պառակտում մտցնել ու անջատել Սյունիքը Հայաստանի կենտրոնական իշխանությունից:

Սյունյաց իշխանությունը հայոց թագավորության ու անկախության կորուստից հետո էլ կարողացավ իր գոյությունը պահպանել ինչպես պարսկական, այնպես էլ արաբական խալիֆայության, ավելի ուշ՝ մոնղոլական աշխարհակալության ժամանակ, կիսանկախ ձեւով: Իսկ Բագրատունյաց շրջանում՝ 970 թվականին Սյունիքը հռչակվեց թագավորություն, որը գոյատեւեց շուրջ 200 տարի եւ կործանվեց սելջուկների տեւական հարվածների հետեւանքով, 1170 թվականին: Սյունյաց թագավորությունը պատմական Հայաստանի տարածքի վրա գոյություն ունեցած վերջին հայկական թագավորությունն էր:

Թագավորության կործանումից մոտ 40 տարի հետո՝ 1211 թվականին, հայ-վրացական միացյալ ուժերի կողմից ազատագրված Սյունիքում հաստատվեց Օրբելյանների իշխանական տունը: Նրանց իշխանության ժամանակաշրջանը Սյունիքում նշանավորվեց կրթական, մշակութային, շինարարական մի նոր վերելքով: Լինելով ազգանվեր, հավատավոր, եկեղեցասեր ու հեռա-

---

[1] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1983, էջ 447:

հայաց քաղաքական գործիչներ, Օրբելյան իշխանները հատուկ ջանադրությամբ աշխատանք էին տանում Սյունյաց աթոռի միասնության, հզորացման, ամրապնդման, հեղինակության բարձրացման համար: Նախ, նրանց ջանքերի շնորհիվ վերամիավորվեց Սյունյաց երկփեղկված աթոռը, վերականգնվեց ու վերարժևորվեց Հայ եկեղեցու միակ մետրոպոլիտությունը, ազատվեց ամեն տեսակ հարկերից և տևական մի շրջան Օրբելյան եղբայրներից մեկն ստանձնում էր մետրոպոլիտությունը, մյուսը՝ աշխարհիկ իշխանությունը: Այդ համագործակցության շնորհիվ է, որ կառուցվեցին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, ջրատարներ ու կամուրջներ, բերդեր ու քարավանատներ: Վանքերին կից ստեղծվեցին կրթական ու մշակութային բացառիկ կենտրոններ, արարվեցին հոգեզմայլ եկեղեցական ու վեհազգային հիրավի անգին արժեքներ: Օրբելյանների շրջանը Սյունիքի պատմության ոսկեդարն է:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Կաթողիկոսական աթոռը գտնվում էր պատմական Հայաստանի տարածքից դուրս: Բազմաբնույթ ու տևական էին Հռոմեական ու Բյուզանդական եկեղեցիների և իշխանությունների ճնշումները հատկապես Կիլիկիայի հայկական թագավորության ու Մայր Աթոռի գահակալների վրա: Հեռավորության, ճամփորդությունների հետ կապված վտանգների ու դժվարությունների պատճառով Հայաստանի թեմերի ու հոգևոր կենտրոնների կապը Մայր Աթոռի հետ շատ թույլ էր: Լինելով բոլորովին այլ քաղաքական իրավիճակում, երբեմն Ամենայն Հայոց կաթողիկոսներն ու Կիլիկիայի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները չէին կարողանում ճիշտ ընկալել բուն Հայաստանում առկա իրավիճակը: Տեղի էին ունենում ներեկեղեցական տարբեր խմորումներ, վեճեր ու վիճաբանություններ, ժողովներ, կաթողիկոսների ու առաջնորդների գահակալություններ ու գահազրկումներ:

Հայաստանի տարածքում Հայ եկեղեցու միակ մետրոպոլիտական աթոռը՝ Սյունյաց մետրոպոլիտությունը, իր ակտիվ մասնակցությունն էր ունենում ներեկեղեցական ու քաղաքական գործընթացներում՝ որպես Հայոց դավանանքի, ազգային ինքնության ու ավանդույթների, մշակույթի, կրթության ախոյան ու կազմակերպող: Այն իր կարևոր ներդրումն ունեցավ ոչ միայն Սյունիքի, այլև ողջ Հայաստանի հոգևոր, քաղաքական, մշակութային, կրթական զարգացման մեջ:

Սյունյաց եպիսկոպոսական աթոռի պատմության Օրբելյանների շրջանի առանձնահատկություններից մեկն այն է, որ եկեղեցական իշխանությունն առավել չափով մերձեցած է եղել տիրապետող իշխանական տան հետ, դեռևս Սյունիքում Օրբելյանների հաստատվելուց առաջ: Իսկ հետագայում Սյունյաց եպիսկոպոսներ ու մետրոպոլիտներ դարձան հենց այս տոհմից սերող իշխանազունները: Պատմական տվյալ ժամանակաշրջանում դա արդարացված էր ամբողջովին, քանզի այդ էր պահանջում երկրի ու ժողովրդի շահը և միայն այդ կերպ հնարավոր էր դուրս գալ խուսափել օտար իշխողների ճնշումներից: Հարկերից հիմնականում ազատ լինելու եկեղեցու արտոնությունը հնարավորություն էր տալիս իշխաններին և ունևոր անհատների տարբեր նյութական միջոցներ, կալվածքներ, երբեմն նաև ամբողջական գյուղեր նվիրել եկեղեցուն, որպեսզի դրանցից ստացված հարկերից զերծ եկամուտներով հնարավոր լինի զարգացնել երկրում տնտեսությունն ու մշակույթը:

Օրբելյան իշխանազուններից առաջինը Ստեփանոս Օրբելյանն էր, որի աթոռակալությունը Սյունյաց թեմում նշանավորվեց Տաթևի ու Նորավանքի բաժանված աթոռների միավորմամբ: Նրա ժամանակ փոփոխություններ են կատարվում նաև Սյունյաց աթոռի կարգավիճակում: Կիլիկիայում գտնվող կաթողիկոսական աթոռի հեռավորությունը, եկեղեցու ներսում առկա անկայուն ու հեղհեղուկ վիճակը, առանձին կաթողիկոսների և կի-

լիկիայի Հայոց թագավորների կողմից հույն եւ կաթոլիկ եկեղեցիներին արվող դավանաբանական զիջումները թերևս այն հիմնական պատճառներն էին, որ Սյունյաց մետրոպոլիտները ձեռնադրության համար այլեւս չէին դիմում Հայոց կաթողիկոսին, չէին մեկնում Կիլիկիա: Ստեփանոս Օրբելյանն ինքը ձեռնադրեց իր հաջորդ մետրոպոլիտին, նա էլ՝ իր հաջորդին:

Միաժամանակ, Օրբելյաններն ընտրեցին հոգեւոր եւ աշխարհիկ իշխանության յուրօրինակ զուգորդման ուղին: Օրբելյան իշխանազունները Սյունյաց աթոռակալ դառնալով օժտվում էին «կրկնակի իշխանությամբ» հոգեւոր եւ աշխարհիկ: Նրանց մի մասն ուներ աշխարհիկ եւ ձեռնադրության ժամանակ ստացած հոգեւոր անունից կազմված երկանուն (Հովհաննես-Օրբել, Ստեփանոս-Տարսայիճ, Ստեփանոս-Սուլթանշահ, Ստեփանոս-Իվանե):

Օրբելյանների ծաղկման շրջանին հաջորդել են դժվարին ժամանակներ: 15-րդ դարի սկզբներից նրանք հալածանքների են ենթարկվել եւ իշխանների մի մասը գաղթել է Վրաստան: Սյունյաց աթոռը թեեւ գրկվել է հովանավորությունից, սակայն շարունակել է գործունեությունը, զորացրել ժողովրդի ոգին, պահպանել դպրոցները:

Օրբելյան վերջին շառավիղներից Ռոստամը եւ սյունեցի եկեղեցական գործիչները մեծապես նպաստել են 1441 թ. Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Ս. Էջմիածնում վերահաստատվելու գործին:

Սյունյաց աթոռի մեր քննած ժամանակի պատմությունը ուսանելի է այն առումով, որ ցույց է տալիս աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների՝ ազգային եկեղեցու հզորացման, հայրենիքի շենացման, կրթության ու ազգային մշակույթի բոլոր ճյուղերի հովանավորման ու կազմակերպման, ժողովրդի համախմբման, տնտեսության զարգացման և հայրենաշեն բազում այլ գործերում համագործակցության արդյունավետությունը: Թեմի

կարևոր մեկ առաքելությունն է դառնում Հայոց դավանանքի անաղարտ պահպանումը, կրթական գործի կազմակերպումը: Բավական է նշել, որ հենց Օրբելյան, Պռոշյան իշխանների ու երկրամասի եկեղեցական իշխանության՝ եպիսկոպոսների ու մետրոպոլիտների հովանավորությամբ ու խրախուսանքով է գործել Գլաձորից սկզբնավորվող Հայոց միջնադարյան համալսարանը, որն այնուհետև տեղափոխվեց Հերմոն, Որոտնավանք, Տաթև, իսկ շրջանավարտները բազում կրթական հաստատություններ հիմնեցին պատմական Հայաստանում, Կիլիկիայում, գաղթօջախներում: Սյունյաց եպիսկոպոսներից շատերը հենց այդ համալսարանի շրջանավարտներ էին, որոնց գործունեությունն իսկ ապացույց էր նրանց ստացած բարձր կրթության և հիմնավոր դիտելիքների: Իսկ դրանք ոչ միայն աստվածաբանական ու վարդապետական էին, այլ նաև ազգային-հայրենասիրական: Դրանով կարելի է բացատրել այն հաստատակամությունը, որով Սյունյաց աթոռակալներն ընդդիմանում էին Կիլիկիայում գտնվող Հայոց կաթողիկոսության առաջարկած կրոնածիսական ու դավանաբանական նորամուծություններին, որոնք իրենց հետ բերելու էին նախնյաց ավանդների անտեսում, վերջնական արդյունքում՝ հոգևոր ինքնության կորուստ: Այս նույն մտահոգությամբ էին Սյունյաց եպիսկոպոսներն ու բարեպաշտները պայքարում կաթոլիկ քարոզչության առաջամարտիկների՝ ունիթորների (միաբարներ) դեմ: Նրանց ծավալած ազգային, եկեղեցական, մշակութային գործունեությունը խորապես գիտակցում և բոլոր հնարավոր միջոցներով աջակցում էին Սյունյաց իշխանները:

Սույն աշխատության նպատակն է ներկայացնել Սյունյաց մետրոպոլիտության պատմությունը Օրբելյանների իշխանության շրջանում: Դրա համար նախ սկզբնաղբյուրների քննությամբ ներկայացվում է մետրոպոլիտության սկզբնավորումը Հայ եկեղեցում, ապա Սյունիքի իրավիճակը Օրբելյանների հաստատ-

ման նախօրյակին, որից հետո Սյունյաց աթոռի պատմությունն Օրբելյանների իշխանության ժամանակ:

Ուսումնասիրության խնդիրներն են.

- պարզել Օրբելյան իշխանական տան եւ Սյունյաց աթոռի առնչությունները,

- Ներկայացնել Նորավանքի աթոռի ստեղծման հանգամանքները, Նորավանքի ու Տաթեւի աթոռակալների գործունեությունը, ապա աթոռի միավորումը,

- Ստեփանոս Օրբելյանի բազմաճյուղ գործունեությունը՝ աթոռի միավորման, մոնղոլական արքունիքում Սյունյաց աթոռի վարչական իրավունքների հաստատման եւ Հայ եկեղեցու ավանդական կարգերի անխախտ պահպանման ուղղությամբ,

- քննել Օրբելյան տոհմից սերող մյուս մետրոպոլիտների գործունեությունը, ապա Հովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու՝ Սյունյաց աթոռի տեղապահ դառնալու հանգամանքները եւ նրանց կատարած դերը,

- ցույց տալ Սյունյաց աթոռակալների եւ տեղապահների դերը՝ ուսումնակրթական գործի կազմակերպման գործում,

- կազմել 12-րդ դ. վերջ – 15-րդ դ. վերջերի Սյունյաց աթոռակալների գավազանագիրքը եւ տոհմագրությունը:

Սյունյաց աթոռի պատմության շուրջ 300-ամյա ուշագրավ ժամանակաշրջանի ներկա ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հայ ժողովրդի եւ Հայ եկեղեցու պատմության շարադրանքում, բուհական դասընթացներում:

Մեր ուսումնասիրության հիմնական ***սկզբնաղբյուրները*** *հայ մատենագիրների երկերն են, հայերեն ձեռագրերի հիշատակարանները, վիմագիր արձանագրությունները: Առաջնային սկզբնաղբյուր է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությու-*

նը» («Պատմութիւն տանն Սիսական»), ուր հեղինակը, կարելի է ասել, գիտական բարեխղճությամբ ներկայացնում է Սյունյաց աթոռի պատմության նախընթաց շրջանը եւ իր ապրած ժամանակի հարուստ իրադարձությունները[2]: Նա օգտվել է ոչ միայն նախորդ պատմիչների երկերից, այլեւ վիմագիր արձանագրություններից, դիվանական փաստաթղթերից, որոնցից երբեմն ծավալուն մեջբերումներ է կատարում: Սակայն նա ոչ միայն փաստերի արձանագրող է, այլեւ մեկնաբան, որը կարողանում է ճիշտ ընկալել ժամանակի առաջադրած պահանջները: Նրա հիմնական նպատակը Հայ եկեղեցու ավանդության եւ դավանական անսասանության պահպանումն էր եւ հանուն այդ դերադույն նպատակի նա պատրաստ էր հակադրվել Կիլիկիայում գտնվող եւ հույն ու կաթոլիկ եկեղեցիներին զիջումներ անելու պատրաստ կաթողիկոսական իշխանությանը:

Մինչեւ Ստ. Օրբելյանի աշխատության ավարտը (1297 թ.) նրա պատմությունը հիմնական սկզբնաղբյուր է, իսկ ձեռագրերի հիշատակարանները եւ վիմագիր արձանագրությունները՝ օժանդակ: Սակայն դրանից հետո, մինչեւ 15-րդ դարի վերջ, հենց հիշատակարաններն ու վիմագրերն են դառնում մեր ուսումնասիրության հիմնական աղբյուրները:

Սյունիքը միջնադարում հայ ձեռագրական մշակույթի ամենամեծ կենտրոններից էր, իսկ 14–15-րդ դարերում Գլաձորի եւ նրան հաջորդած Հերմոնի, Որոտնավանքի, Տաթեւի համալսարանների գործունեության շրջանում այստեղ եւ երկրամասի բազմաթիվ վանքերում ու բնակավայրերում հազարավոր ձեռագրեր են ընդօրինակվել: Այդ ձեռագրերի հիշատակարաններն անգնահատելի սկզբնաղբյուր են, քանի որ տեղեկություններ են

---

[2] Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861 (այսուհետեւ՝ Ստ. Օրբելյան), Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986 (այսուհետեւ՝ Սյունիքի պատմություն):

պարունակում ոչ միայն մատյանների գրչության հանգամանքների (գրիչ, ստացող, գրչության վայր, ժամանակ եւ այլն), այլեւ ժամանակի կարեւոր իրադարձությունների, աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդների, նրանց գործունեության մասին: Հիմնականում հենց հիշատակարանների շնորհիվ է հնարավոր դարձել շարադրել 14–15-րդ դարերի հայոց պատմությունը:

Մեր հետազոտության տեսակետից հիշատակարաններն ավելի քան կարեւոր են: Պատահական չէ, որ Օրբելյանների Բուրթելյան ճյուղին նվիրված իր հանգամանալից հոդվածը գրելիս ակադեմիկոս Լ. Խաչիկյանը հիմնվել է գլխավորապես հիշատակարանների վրա եւ կարողացել է բավական ամբողջական պատկեր ներկայացնել, կազմել Բուրթելյանների տոհմածառը, ինչպես նաեւ կարեւոր լրացումներ կատարել ժամանակի եպիսկոպոսների գավազանագրքում[3]:

Աշխատությունը գրելիս օգտվել ենք Ա. Մաթեւոսյանի[4], Լ. Խաչիկյանի[5] և այլ մասնագետների կազմած հիշատակարանների ժողովածուներից, ինչպես նաեւ այդ ժողովածուներից դուրս մնացած որոշ հիշատակարաններից, որոնք տեղ են գտել ձեռագրացուցակներում[6]:

Հիշատակարանների շնորհիվ հնարավոր է դառնում ոչ միայն տեղեկանալ Սյունյաց աթոռակալների հաջորդականության, տոհմական ծագման, գործունեության մասին, այլեւ տեսնել, թե գրիչներն ինչ տիտղոսներով են նրանց կոչում, ըստ

---

[3] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, Բանբեր Մատենադարանի, 9, Երեւան, 1969, էջ 173–199:

[4] ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Ա. Մաթեւոսյան), Երեւան, 1984:

[5] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի ձեռ. հիշատակարաններ, Երեւան, 1950, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Ա, Երեւան, 1955, մասն Բ, Երեւան, 1958, մասն Գ, Երեւան, 1967:

[6] Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, Երուսաղէմ, 1990, հ. 11, Երուսաղէմ, 1991, Ս. Տէր-Ավետիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970 եւ այլն:

այդմ՝ ինչ կարգավիճակ ունեին նրանք տարբեր ժամանակահատվածներում: Հիշատակարանների միջոցով ենք իմանում, որ մահմեդականների հալածանքների պատճառով 14-րդ դ. 70-ական թվականներից Սյունյաց աթոռը ժամանակավորապես կառավարվել է տեղապահների միջոցով, որոնք եղել են հայոց վարդապետարանի բաբունապետներ Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին: Նույն սկզբնաղբյուրների շնորհիվ հնարավոր է դառնում պարզել ոչ միայն հետագա աթոռակալների հաջորդականությունը, այլեւ նրանց տոհմական ծագումը: Պարզվում է, բացի Օրբելյաններից աթոռը զբաղեցրել են նաև եպիսկոպոսներ այլ տոհմերից, որոնք եւս երբեմն ազդակից փոքր խմբեր են կազմում:

Սյունյաց աթոռի պատմության 15-րդ դարի որոշ հարցերի պարզաբանմանն օժանդակում է Թովմա Մեծոփեցու երկը[7]:

Վիմագիր սկզբնաղբյուրների տեսակետից կարեւոր են Ս. Բարխուդարյանի կազմած «Դիվան հայ վիմագրության» 2-րդ եւ 3-րդ սլրակները, որոնք վերաբերում են Սյունիքի ու Վայոց ձոր գավառի արձանագրություններին[8]: Օգտագործել ենք նաեւ Նորավանքի արձանագրությունների՝ Ս. Սաղումյանի լրացումները[9] եւ վիմագրական նյութին վերաբերող այլ հրապարակումներ:

Սյունիքի պատմության եւ հատկապես եկեղեցական կյանքի վերաբերյալ առաջին ընդգրկուն հետազոտությունը պատկանում է Ղ. Ալիշանի գրչին[10]: Նրա ժամանակ դեռեւս չէին հրապարակված հայերեն վիմագրերի ու հիշատակարանների գիտական հրատարակությունները, ուստի հեղինակի որոշ վրիպումնե-

---

[7] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999:

[8] Դիվան հայ վիմագրության, պր. Բ, (կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան), Երեւան, 1960, Դիվան հայ վիմագրության, պր. Գ, (կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան), Երեւան, 1967:

[9] Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Նորավանքից, «Հուշարձան» տարեգիրք, Երեւան, 1993, էջ 91–102:

[10] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893:

ը գալիս են փաստական նյութի սակավությունից: Ալիշանն իրեն հայտնի պատմական նյութի հիման վրա կազմել է նաեւ Սյունյաց եպիսկոպոսների գավազանագիրքը:

Մեր քննած ժամանակաշրջանի եւ Օրբելյանների գործունեության վերաբերյալ մի քանի արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ է Գ. Գրիգորյանը[11], որն անդրադարձել է նաեւ Սյունյաց աթոռի պատմության հարցերին, առավել հայտնի եպիսկոպոսների գործունեությանը:

Օրբելյանների վաղ շրջանի գործունեության, մասնավորապես Վրաց արքունիքի դեմ նրանց ասպստամբության ու դրա հետեւանքների վերաբերյալ կարեւոր է Հ. Մարգարյանի ուսումնասիրությունը[12]:

Օրբելյանների շրջանում Վայոց ձորում եւ այլ գավառներում կալվածքներ ունեցող Խաղբակյան կամ Պռոշյան տոհմի պատմությանը նվիրված Գ. Հովսեփյանի մեծարժեք ուսումնասիրությունը[13] նույնպես նպաստել է մեր աշխատանքին, քանի որ Խաղբակյանների եւ Օրբելյանների առնչությունները թե՛ քաղաքական, եւ թե՛ եկեղեցական ու կրթամշակութային գանազան հարցերում բավական սերտ են եղել:

Օրբելյանների իշխանության վերջին շրջանի (Բուրթելյանների) վերաբերյալ չափազանց կարեւոր է Լ. Խաչիկյանի վերը նշված հրապարակումը: Հեղինակի որոշ տեսակետներ, մասնավորապես Հովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու՝ եպիսկոպոս եւ Սյունյաց առաջնորդ եղած լինելու մասին ենթադրությունը,

---

[11] Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երեւան, 1981, նույնի Սյունիքի վանական կալվածատիրությունը 9–13-րդ դարերում, Երեւան, 1973: М. Григорян, Очерки истории Сюника IX–XV вв., Ереван, 1990.

[12] Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեւան, 1980:

[13] Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969:

Հ 205485

բավարար հիմնավորում չունի: Դատելով աղբյուրներից, այս երկու գործիչները Սյունյաց աթոռի տեղապահի դեր են կատարել:

Սյունյաց մետրոպոլիտական աթոռի պատմության որոշ հարցերի վերաբերյալ «Էջմիածին» ամսագրում հոդվածաշար[14] եւ 1995-ին գրքույկ է հրատարակվել մեր կողմից[15]:

Չնայած առկա հարուստ գրականությանը, Սյունյաց աթոռի պատմությունը Օրբելյանների շրջանում մեկ ամբողջության մեջ առայժմ չի ներկայացվել, ինչին եւ կոչված է ներկա աշխատությունը:

---

[14] Աբրահամ աբեղա Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակ, «Էջմիածին», 1988, Ե–Զ, էջ 35–43, Է, էջ 49–54, Ը, էջ 32–40:

[15] Աբրահամ վարդապետ Մկրտչյան, Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՄԻՆՉԵՒ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԸ

1. Մատենագրական վկայություններ Սյունյաց մետրոպոլիտության վերաբերյալ

Մեր բուն ուսումնասիրության ընդգրկած ժամանակաշրջանին անցնելուց առաջ անհրաժեշտ է, որ նախ համառոտակի անդրադառնանք Սյունյաց մետրոպոլիտության սկզբնավորմանը, նրա դերին ու նշանակությանը:

Հայ եկեղեցում մետրոպոլիտության հաստատման մասին մատենագրության մեջ կան բավականաչափ տեղեկություններ, որոնք երբեմն հակասում են միմյանց: Նախ ներկայացնենք դրանք եւ տեսնենք, թե պատմական ինչ նախադրյալներ են եղել մետրոպոլիտության հաստատման համար:

Ըստ կաթողիկոս պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու (898–929), Հայ եկեղեցում մետրոպոլիտական աստիճանը հաստատել է Ներսես Մեծը (353–373): Նա նշում է, թե նկատի ունենալով այն ավանդությունը, որ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալներն են հիմնադրել Հայ եկեղեցին, Արշակ թագավորը, նախարարներն ու Ներսես Մեծը եկեղեցու մեջ հաստատեցին ինը դասերը՝ եկեղեցու ինը աստիճանները, որոնցից Վրաց ու Աղվանից աթոռները հռչակվեցին արքեպիսկոպոսական, իսկ Սեբաստիայի, Մելիտինեի ու Մարտիրոսաց քաղաքի աթոռները՝ մետրոպոլիտական[16]:

---

[16] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Երեւան, 1996, էջ 50–51:

Սակայն այլ աղբյուրներից երևում է, որ Հայաստանում եկեղեցու ինը դասերի հաստատման խնդիրը 4-րդ դարից ավելի ուշ է ծագել: 6-րդ դարի վերջերին բյուզանդացիների նախաձեռնությամբ Հայոց կաթողիկոսանիստ Դվինից ոչ հեռու հիմնվում է քաղկեդոնական դավանանք որդեգրած Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը (591–602): Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ բաժանված երկրում երկփեղկվում է նաեւ Հայ եկեղեցին՝ առաջին անգամ հակաթոռ կաթողիկոսություն ունենալով: Հարկ է նշել, որ Հայաստանի պարսկական մասում գտնվող Սյունիքն այդ ժամանակ (571 թվականից) վարչականորեն դուրս էր բերված մարզպանական Հայաստանի կազմից եւ որպես առանձին շահր ենթարկվում էր Ատրպատականի Գանձակում նստող փոխարքային[17]:

Ուխտանես եպիսկոպոսը (մոտ. 935–1000), պատմելով 6-րդ դարի վերջերի դեպքերի մասին, գրում է, որ Սյունյաց Պետրոս եպիսկոպոսը հրաժարվում է ենթարկվել երկատված աթոռին. «Իսկ զերկուեալն Աթոռ Հայրապետութեան խոտեցան Տեարքն Սիւնեաց եւ ոչ հաւանեցան ընդ հակառակութեան հնազանդել ումեք հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինոյն Պետրոսի, որ հասեալ ի վախճան՝ պատուէր եւտ վիճակին իւրոյ առնուլ ձեռնադրութիւն յԱղուանից եւ զմեռոնն օրհնութեան մինչեւ միաւցին Աթոռ Հայրապետութեան Սրբոյն Գրիգորի»[18]: Հայ եկեղեցին ցածր դասերու համար հույները ձեւական պատճառաբանություն էին դտել, թե իբր եկեղեցու ինը դասերի շարքում (պատրիարք, արքեպիսկոպոս, մետրոպոլիտ, եպիսկոպոս եւ այլն), հայերի մոտ բացակայում է մետրոպոլիտը, ուստի, ըստ նրանց, կաթողիկոսը չպետք է հավասարեցվի պատրիարքին, այլ արքեպիսկոպոսին (ուստի Հայ եկեղեցին պետք է ենթարկվի առկա պատրիարքական աթոռներից մեկին): Ուխտանես պատ-

[17] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. Բ, Երեւան, 1984, էջ 256–257:
[18] Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 119–120:

միչն անդրադառնալով հույների մեղադրանքին, գրում է. «Վասն զի դարձեալ աղմուկ եւ չվոթ իմն շարժեալ ի կողմանէ Յունաց ի նոյն խնդիր եկեղեցական կարգաց դասուց, եւ շարժեցան ամենայն մեծամեծքն Յունաց, եւ ուր Առաքեալ էր վախճանեալ՝ զամենեցուն աթոռ Պատրիարգ խոստովանեցին», միաժամանակ՝ «առ ի փոքրացուցանել ջանացան զկայս հանգստեան սրբոյն Թադէոսի առաքելոյ, ոչ ունել Պատրիարք, եւ Արք եպիսկոպոս, եւ Մետրոպոլիտ հանդերձ այլ դասակարգօքն»[19]:

Քաղաքական բավական բարդ իրավիճակում գտնվող Հայաստանում այնուամենայնիվ կարողանում են դուրս գալ ստեղծված ճգնաժամից: Նախ պարսիկների հաղթական պատերազմից հետո վերանում է Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը (602 թ.), ապա կայանում է Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի (607–615) ընտրությունը, որի ժամանակ կարեւոր դեր է կատարում նաեւ Սյունյաց Քրիստափոր եպիսկոպոսը: Սյունյաց աթոռը վերականգնում եւ առավել սերտացնում է հարաբերությունները Հայոց կաթողիկոսության հետ:

Մովսես Կաղանկատվացին[20], պատմելով նույն դեպքերի մասին, գրում է. «...ի սակս ինն դասակարգութեան՝ գլխաւոր եկեղեցականք անձնահաճ կամաւ ըստ նպերտ բարուց Հայաստանեայց, կարգեն զԱբրահամ պատրիարք, եւ զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս, եւ զՎրացն՝ մետրոպոլիտ»[21]: Սակայն վրացիները, ըստ պատմիչի, դժգոհ մնալով, Կյուրիոն եպիսկոպոսի

---

[19] Նույն տեղում, էջ 121–122:

[20] Կաղանկատվացու անունով հայտնի «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գործի գրման ժամանակի մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ: Ըստ վերջին տվյալների, այս գործը գրվել է 7-րդ դարից եւ իր վերջնական տեսքին է հասել 10-րդ դարի առաջին կեսին (տե՛ս Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, էջ Ե):

[21] Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 274:

գլխավորությամբ անջատվում են Հայ եկեղեցուց եւ դառնում քաղկեդոնական:

Եկեղեցական նվիրապետական ինը աստիճանների խնդիրը Հայ եկեղեցում կրկին մնում է բաց: Այդ ժամանակ որոշում է կայացվում մետրոպոլիտությունը շնորհել Սյունյաց աթոռին: Ուխտանեսը գրում է՝ «ետուր զԱրք եպիսկոպոսութիւնն տանն Աղուանից՝ իրաւունս համարելով, եւ զՄետրոպոլտութիւնն տանն Սիւնեաց: Իսկ Կիւրեղն ի բաց գնացեալ եւ այն անդամ, եւ մեծի հայրապետին Աբրահամա միապետեալ ընդ յինքեամբ զԱղուանս եւ զՍիւնիս, եւ յայնմհետէ եղեն մի հօտ եւ մի հովիւ, եւ հնազանդ սուրբ երկնայարկի աթոռոյ սրբոյն Գրիգորի»[22]:

Ուխտանեսը շարունակում է, հիմնավորելով կայացված որոշումը, որ նկատի ունենալով Աղվանից եկեղեցու սկզբնավորումը Թադեոս առաքյալի աշակերտ եւ Հակոբոս Տեառնեղբոր կողմից Աղվանից եւ Արեւելքի առաջնորդ ձեռնադրված Եղիշեից, ինչպես նաեւ՝ «զմիաբանութիւն հաւատոյն Աղուանից առ Հայս, նոցա ետուն պատիւ լինել Արք Եպիսկոպոս Հայոց. նոյնպես տեսանելով զաստուածերկիւղ եւ հաւատարիմ ի հաւատս զՏէրսն Սիւնեաց, եւ քաջուամունս եւ ուղղափառ յամենայնի, եւ նոցա ետուն պատիւս լինել Մետրապոլիտս Հայոց, եւ խաչանիշ մեծարանօք պատուեալ զնոսա. եւ այսպէս կարգ ըստ կարգի հաստատեցին զինն դասս, եւ եղեն մի հօտ եւ մի հովիւ՝ յայնժամ եւ այժմ...»[23]: Գրեթե նույն բառերով Սյունյաց մետրոպոլիտության հաստատման մասին պատմում է Կաղանկատվացին. «...տեսանելով միշտ աստուածերկիւղս եւ հլուս եւ հաւանս պատուիրանաց զտեարսն Սիւնեաց, եւ զկղերս զեկեղեցեացն քաջուամունս եւ ուղղափառս յամենայնի, նոցա ետուն

[22] Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, էջ 120–121:
[23] Նույն տեղում, էջ 121–122:

զպատիւն լինելոյ մետրոպոլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք»[24]: Մինչ այդ նա գրում է, որ հայ հոգեւոր ու աշխարհիկ բարձրաստիճան անձինք հույների մեղադրանքներից ձերբազատվելու համար, որոշում են «առնել մետրոպոլիտ զՄարդպետական եպիսկոպոսն»[25]: Սակայն վերջինս ցանկանում է իր ձեռքի տակ ունենալ երկու կամ երեք եպիսկոպոսներ, ինչպես որ ընդունված է հույն եկեղեցու մեջ: Այս առաջարկը կասկածի տեղիք է տալիս, որ չլինի թե նոր բաժանման դուռ բացվի, որի պատճառով հրաժարվում են Մարդպետական եպիսկոպոսին այդ պատիվը շնորհելուց եւ նախապատվություն են տալիս Սյունյաց աթոռին:

Հարցի քննությամբ զբաղված Շահե արք. Աճեմյանը գրում է. «Աբրահամ կաթողիկոս... հրաւիրեց աշխարհաժողով մը, արքեպիսկոպոսի եւ մետրոպոլիտի աթոռներ կազմելու համար, որպեսզի կաթողիկոսութիւնը իններորդի բարձրանայ եւ հաւասարի պատրիարքութեան: Սոյն աշխարհաժողովին Հայոց աթոռը կանուանուի պատրիարքական, Աղուանից աթոռը՝ արքեպիսկոպոսական, Սիւնեաց աթոռը՝ մետրոպոլիտական»[26]: Ա. Ղազարյանը նշում է, որ դա տեղի է ունեցել Դվինի Գ ժողովի (609/10) ժամանակ. «Ժողովը որոշում է ընդունել Հայոց, Աղվանից, Սյունյաց աթոռների աստիճանների մասին եւ սահմանել ինը դասերի կարգը: Հայ եկեղեցու գահակալը հռչակվել է պատրիարք, Աղվանից եկեղեցունը՝ արքեպիսկոպոս, Սյունյացը՝ մետրոպոլիտ»[27]: Հարկ է նշել, որ այս որոշման կայացման համար էական էր նաեւ Սյունիքի կարգավիճակը, որը վարչականորեն մարզպանական Հայաստանի կազմում չէր, ուստի Հայ

---

[24] Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 275:
[25] Նույն տեղում:
[26] Շ. Աճեմեան, Մետրոպոլիտութիւնը Հայոց մէջ, «Նորավանք» ժողովածու, Մոնրեալ-Երեւան, 2001, էջ 30:
[27] Ա. Ղազարյան, Դվինի եկեղեցական ժողովներ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 277:

եկեղեցու առաջնորդները Սյունյաց եպիսկոպոսի կարգավիճակի բարձրացմամբ փորձում էին ամրացնել կապն այդ աթոռի հետ:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի, մետրոպոլիտությունը շնորհվել է Քրիստափորի հաջորդին՝ Դավթին (Դավիթ Ա). «...կացուցանեն զ Դաւիթ մետրապոլիտ Սիւնեաց եւ տան նմա զխաչանիշ նշանն զառաջեաւ կրել հանապազ...»[28]: Ընհանրապես, Ստ. Օրբելյանն այս հարցին անդրադարձել է առավել մանրամասնորեն, վկայակոչել կամ ամբողջովին մեջ բերել նախորդ պատմիչների (Ուխտանես, Կաղանկատվացի) հայտնած տեղեկությունները:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի, Սյունիքի մետրոպոլիտությունը հաստատվել էր Ներսես Մեծի (353–373) կողմից: Նա գրում է. «Իսկ Գրիգորի՝ Սիւնեաց մետրոպոլտի, աւելի պատիւ արարեալ սուրբն Ներսէս, վասն երթալոյն ընդ նմա ի Կեսարիա, տայ նմա բազմական ոսկեթել եւ կարգէ զՍիւնիք նախաթոռ պատրիարքին որ կոչի ի հոռոմ լեզուն պռոտոֆրոնտէս Հայոց Մեծաց: Իսկ յետ ինչ բաղում աւուրց՝ յաւուրս Սահակայ եւ Մեսրովբայ կրկին պատիւ առեալ է Անանիա եպիսկոպոսն Սիւնեաց յԵսվաղեն թագաւորէն Աղուանից... Ահա այսպէս կարգեցաւ եւ պատուեցաւ եպիսկոպոսութիւն Սիւնաեց եւ սկսաւ ի սրբոյն Գրիգորէ եւ յորդւոց եւ ի թոռանց նորա, որք կոչին մետրապոլիտք»[29]: Շարունակելով խոսքը, պատմիչը նշում է, որ Գրիգորի հաջորդ Մաշտոցին Անդոկ նախարարի խնդրանքով Ներսես Մեծը «նստուցանէ յաթոռ մետրոպոլտութեան Սիւնեաց»[30]:

Սյունքի առաջին եպիսկոպոսների մետրոպոլիտական աստիճան ունենալու մասին Օրբելյանից բացի ուրիշ ոչ մի աղբյուր չի հաղորդում: Ըստ երևույթին քրիստոնեական առաջին

---

[28] Ստ. Օրբելյան, էջ 76:
[29] Նույն տեղում, էջ 17–18:
[30] Նույն տեղում, էջ 74:

դարերում Սյունյաց աթոռի գրված բարձր դիրքը եւ Սյունյաց եպիսկոպոսների ունեցած մեծ հեղինակության մասին վկայությունները Օրբելյանին թույլ են տվել վերջիններիս վերաբերյալ «մետրոպոլիտ» կոչումն օգտագործել: Սակայն իրականում մետրոպոլիտության հաստատումը պատճառաբանվում է Հայ եկեղեցու առաջ ինը դասերի խնդրի հարուցմամբ: Օրբելյանը նույնպես անդրադառնում է դրան: Նա կրկնում է Կաղանկատվացու հաղորդածը Վրաց եկեղեցու բաժանումից հետո Սյունիքում մետրոպոլիտական աթոռ հաստատելու մասին եւ ավելացնում, որ հայ բարձրաստիճան հոգեւորականները «...խնդրեցին ի Սիւնեաց մի ինչ աւելի իրս ժտել, այսինքն՝ եպիսկոպոս ունել ընդ ինքեամբ եւ ձեռնադրել»[31]: Շարունակելով, նա նշում է, որ հետագա դարերում (Սողոմոն Ա Գառնեցու եւ Մաքենիսի Սողոմոն վարդապետի ժամանակ) Սյունիքի մետրոպոլիտությունը «նուաստեալ իսկ էր անփոյթ եղեալ յաթոռակալացն»[32]:

Եզրափակելով հատվածը, Օրբելյանն ասում է, որ Սյունիքի աթոռը մետրոպոլիտության աստիճան ստացել է առաջին անգամ Աղվանից թագաւորից, երկրորդ անգամ Աբրահամ Ա կաթողիկոսից (607–615). «Եւ այսպէս կրկին անգամ եղեւ շնորհեալ նոցա պատիւ եւ նշան, առաջին՝ յԵսվաղէն թագաւորէն Աղուանից, եւ երկրորդ՝ ի ժողովոյն Հայոց ի Տէր Աբրահամէ»[33]:

Կիրակոս Գանձակեցին (1203–1269) մի ոչ այնքան որոշակի նշում ունի, ըստ որի Ստեփանոս Սյունեցին (մահ. 735 թ.) եպիսկոպոսական երեք դասերի մասին գրություն է բերել Հռոմից. «Եւ բերեալ զգրեանն երանելւոյն Ստեփանոսի ի Հռոմայ՝ յեպիսկոպոսութիւնն Սիւնեաց, յերրեակ դասու եպիսկոպոսացն

---

[31] Նույն տեղում, էջ 18:
[32] Նույն տեղում, էջ 74–75:
[33] Նույն տեղում, էջ 77:

Հայոց կարգեաւ»[34]: Սակայն, դժբախտաբար, Ստեփանոս Սյունեցու մատենագրական ժառանգության մեջ մեր կատարած որոնումները որևէ արդյունք չտվեցին հիմնավորելու համար Գանձակեցու այս վկայությունը:

Ենթադրությունն այն մասին, որ Սյունյաց մետրոպոլիտության ստեղծումը կապված է «Սյունյաց անկախ թագաւորության հռչակման (987) հետ»[35], փաստական հիմք չունի, քանի որ այդ թվականից առաջ Անանիա Մոկացին (946–968) Սյունյաց եպիսկոպոսին մետրոպոլիտ է կոչում: Ինչպես ստորև կտեսնենք, հենց նա էլ Հակոբ մետրոպոլիտի ըմբոստության պատճառով այդ պատիվը վերցնում է Սյունյաց աթոռից: Հետագայում Սյունյաց թագավորները ջանքեր են գործադրում մետրոպոլիտությունը վերականգնելու համար:

Այն, որ Սյունյաց մետրոպոլիտությունը հիմնվել է ավելի վաղ, երևում է նաև Կաղանկատվացու մի վկայությունից, ըստ որի 8-րդ դարի սկզբին, Եղիա Ա Արճիշեցու (703–717) ժամանակ, Սյունյաց աթոռը մետրոպոլիտական աստիճան ուներ եւ նույնիսկ ընդունված կարգ կար, որ Հայոց կաթողիկոսները Սյունիքի մետրոպոլիտին կոչում էին «Հոգեւոր տեր»[36]: Իսկ 10-րդ դարի կեսերին Սյունյաց աթոռակալն արդեն որոշակիորեն կոչվում է մետրոպոլիտ՝ կաթողիկոս Անանիա Մոկացու «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» թղթում: Կաթողիկոսը գրում է. «զլուխն եպիսկոպոսաց Տանն Հայոց, որ զմետրոպոլտութեանն ընկալեալ էր պատիւ. եւ նստէր յաշխարհին Սիւնեաց[37]: Այս շրջանում (950-ական թթ.) Անանիա Մոկացին գործուն քայլերի եւ անգամ պատժամիջոցների է դիմում Աղ-

---

[34] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 74:
[35] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 914:
[36] Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., 275–276:
[37] Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, «Արարատ», 1897, էջ 130–131:

վանից եւ Սյունյաց աթոռների անկախական ձգտումների առաջն առնելու համար: Կաթողիկոսական թղթերը եւ Ստեփանոս Օրբելյանը վկայում են, որ այդ ժամանակ Մոկացին Սյունյաց եպիսկոպոսին աթոռանկ է արել եւ, փաստորեն, աթոռը զրկել է մետրոպոլիտության պատիվներից ու աստիճանից:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Սյունյաց մետրոպոլիտությունը հաստատվել է Աբրահամ Աղբաթանեցու ժամանակ (607–615), կապված Հայ եկեղեցում նվիրապետական ինը դաս ունենալու անհրաժեշտության հետ: Հետագա դարերում, մինչ Անանիա Մոկացի (հատկապես արաբական խալիֆայության ժամանակաշրջանում), հայանի չէ մեկ այլ շարժառիթ, որպեսզի Հայոց կաթողիկոսական աթոռը մետրոպոլիտություն հիմնելու որոշում կայացներ[38]:

Սյունյաց մետրոպոլիտության պատմության հաջորդ դրվագը կապված է Սարգիս Ա Սեւանցի (992–1019) կաթողիկոսի անվան հետ: Անիում աթոռակալող եւ Հայ եկեղեցու պատմության մեջ բարի անուն թողած այս հայրապետը[39], անսալով Գագիկ Ա Բագրատունու կնոջ (Սյունիքի Վասակ թագավորի դստեր) Կատրամիդե թագուհու խնդրանքին, 1006 թ. Անիում Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրում Հովհաննեսին եւ Սյունիքի աթոռին վերադարձնում Անանիա Մոկացու ժամանակ՝ Հակոբ եպիսկոպոսի խռովության պատճառով նրանից խլված մետրոպոլիտության պատիվներն ու արտոնությունները, ինչպես եւ Անիի կաթողիկոսարանի «սրբարանի սենեակում» պահվող սրբությունները՝ «Սիւնեաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվա-

---

[38] Մեր նախորդ ուսումնասիրության մեջ այն ենթադրությունն ենք արել, որ Սյունիքը մետրոպոլիտական աթոռ հռչակելը տեղի է ունեցել Անանիա Ա Մոկացու ժամանակ, կամ նրա կաթողիկոս ընտրվելուց ոչ շատ առաջ (Ա. Մկրտչյան, Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995, էջ 13): Սակայն սկզբնաղբյուրների առավել մանրակրկիտ քննությունը հանգեցնում է նախկին տեսակետի վերանայմանը:

[39] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 298–260:

ոը, թանկարժէք գաւազանը եւ պատուական գահաւորակը»: Կաթողիկոսի սույն ձեռնարկը մեծապես ամրացնում է Հայաստանյայց եկեղեցու ներքին միասնությունը, իսկ Սյունիքի թագավորությունն ավելի սերտորեն է կապվում Անիի կենտրոնական թագավորության հետ: Հովհաննեսի ձեռնադրության կապակցությամբ Սարգիսը կաթողիկոսական մատանիով կնքված եւ գեղեցիկ ոճով շարադրված մի շրջաբերական է ուղարկում Սյունիք: Այն իր Պատմության մեջ ամբողջովին մեջ է բերում Ստեփանոս Օրբելյանը, որից եւ մի քանի հատված ներկայացնում ենք ստորեւ.

«Շնորհօք ամենակալին Աստուծոյ... այս գիր հրամանի եւ օրհնութեան է իմ նուաստ ծառայի Աստուծոյ Տէր Սարգսի, եւ ողորմութեամբ Նորին՝ կաթողիկոսի ամենայն Հայոց, զոր գրեցաք նամակ շրջագայական առ նախագահ եւ յաստուածամեծար տունդ Սիւնեաց, յաստուածասպակ թագաւորդ Վասակ... եւ յընդհանուր ժողովրդականդ ըստ երկոտասան կարգեալ գաւազանացդ:

Գիտութիւն ձեզ հոգեւոր որդիք մեր՝ որ թէպէտ յառաջ քան զմեզ ի կաթողիկոսացն ի Տէր Թէոդորոսէ եւ ի Տէր Անանիայէ (նկատի ունի Թեոդորոս Ա Ռշտունի կաթողիկոսին, 930–941 թթ., և Անանիա Ա Մոկացի կաթողիկոսին, 946–968 թթ., ծ.հ.) վասն իրիք ինչ պատճառի խախտեալ էր առաքելագիր աթոռդ Սիւնեաց. եւ օձտեալ եւ բաժանեալ վիճակ գաւազանիդ այդորիկ. այլ մեք ի գալ ընտրեալ առնս Աստուծոյ Յովհաննիսի՝ ձեռնադրեցաք զսա ըստ առաջին աթոռակալացն մետրապոլիտ Սիւնեաց. եւ հաստատեցաք վերստին զնոյն վիճակ երկոտասան գաւազանին յաթոռդ նախագահ եւ ի տունդ Սիսական ի Տաթեւ ի ձեռն աստուածարեալ եւ բազմերջանիկ սուրբ եպիսկոպոսիս եւ ընտրեալ մետրապոլիտիս ձեր Տէր Յովհաննիսի. եւ վերստին աւանդեցաք դմա զնախնական պատիւն իւրեանց՝ զիաչն եւ զբազմականն: Եւ այս ոչ եթէ մերով ձեռներէց իշխա-

նութեամբ. այլ զի երեր առ մեզ զմեծափառ նամակս եւ զվճիռ պայմանի գրեալ ձեռամբ նախնի հայրապետացն Հայոց, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ եւ յորդւոց եւ ի թոռանց իւրոց...

Եւ էր բովանդակն 55 նամակ շրջագայական թղթի իւրաքանչիւր հայրապետի կնքով... Վասն որոյ եւ մեք երկուցեալ յայնպիսի առաքելական հարցն հրամանէ եւ պատկառեալ ի ծերացեալ, բազմաժամանակեայ սթոռոյն Սիւնեաց՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա. եւ վերստին հաստատեցաք զեղեալ պատիւ նոցա՝ զխաչն, զբազմականն եւ զգաւազանն...

Եւ արդ գրեցաւ գիր հրամանիս մերոյ մերով ձեռամբ ի թուականիս Հայոց 455. եւ վասն առաւել հաստատութեան կնքեցաք մերով սովորական մատանեաւս ի վառս Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն»[40]:

Թերևս Սևանցու այս վկայությունը, որ Հովհաննեսի կողմից իրեն ցույց են տրվել նախորդ 55 հայրապետների «շրջագայական» թղթերը Սյունյաց մետրոպոլիտության վերաբերյալ, սկսած Սուրբ Գրիգոր Լուսավորչից, նրա որդիներից ու թոռներից, հիմք է տվել Օրբելյանին Սյունյաց մետրոպոլիտությունը Ս. Գրիգոր Լուսավորչից հաստատված համարելու: Սակայն այս վկայությունը, ինչպես տեսանք, արժանահավատ չէ, և Օրբելյանն ինքն էլ իր պատմության հետագա տողերում սրբագրում է այն, քանի որ այդ դեպքում հույները չէին կարող մեղադրել Հայ եկեղեցուն ինը տասիճանները չունենալու հարցում, և հայերն էլ այդ հարցին լուրջ չէին վերաբերվի և քննության թեմա չէին դարձնի:

Կաթողիկոսական այս հրահանգի մեջ չափազանց կարևոր է Սյունյաց մետրոպոլիտության ընդգրկած տարածքի նկարագրությունը՝ «Եւ այս իսկ են դաւառք վիճակեալք հօտի նոցա.-

---

[40] Ստ. Օրբելյան, էջ 226-228:

Սիւնիք, Բաղք, Արեւեաց տունն, Որդուատ, Արգուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ՝ որքան Երասխայ գետն հատանէ, Ճահուկ,, Վայոց ձոր Խաչերոյ խոռովն, Գեղարքունի Կոզայ բակովն, Երիշատ, Ջաղացաձորն եւ Փորակն իսկ բոլորովին...Հատանէ եւ զսահման Աղուանից Ըռմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղունոյ գետն հատանէ մինչ ի քարավազին կամուրջն եւ Հաբանդ գաւառ եւ յԵրնջակայ սահմանին Բոտի ձոր...»[41]:

Սյունյաց մետրոպոլիտի իրավունքներին անդրադառնալով, պետք է ասել, որ Հայ եկեղեցու ղեկավարները, զգուշանալով նոր պառակտումից, մետրոպոլիտին եպիսկոպոս ձեռնադրելու իրավունք չեն տվել: Դա որոշակիորեն ասում է եւ Օրբելյանը. «...մի ինչ աւելի իրս ժտել այսինքն՝ եպիսկոպոս ունել ընդ ինքեան եւ ձեռնադրել»[42], *ինչպես կարելի է եզրակացնել նաեւ Մոկացու հետեւյալ տողից, ուր, խոսելով Հակոբ մետրոպոլիտի մասին, գրում է. «...բնաւ իսկ մոռացեալ էր զաւանդ աստուածատուր ձեռնադրութեանն... յաղագս փառամոլ սնոտի փառամերժութեանն առնոյր ինքնին տուիչն շնորհին»*[43]: *Սակայն այս նույն տողն իսկ ցույց է տալիս, որ, անջատվելով Մայր աթոռից, Սյունյաց մետրոպոլիտը ինքնագլուխ եպիսկոպոսներ էր ձեռնադրում: Հետագայում եպիսկոպոս է ձեռնադրում նաեւ Սարգիս Ա-ը, որի մասին կխոսենք իր տեղում: Իսկ Ստ. Օրբելյանի ժամանակ այս իրավունքն արդեն օրինականացվել էր: Դա որոշակիորեն երեւում է Օրբելյանի հետեւյալ տողից. «եւ գործ է սոցա (իմա՝ Սյունիքի մետրոպոլիտների, ծ. Հ.) ձեռնադրել զեպիսկոպոսս գաւառաց. վասն որոյ երկոտասան եպիսկոպոսաց*

---

[41] Նույն տեղում, էջ 227–228, հմմտ. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 310, Սյունիքի պատմություն, էջ 263, 484–485:
[42] Ստ. Օրբելյան, էջ 77
[43] Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի..., էջ 130–131:

գլուխ կարգեցաւ»[44]: Շարունակելով խոսել մետրոպոլիտի մասին, Օրբելյանը գրում է. «...առանց սոցա ոչ ձեռնադրի պատրիարք Հայոց եւ ոչ լինի ժողով, այլ գլուխ եւ հրամանատար ժողովոյ սոքա լինին. եւ նախաթոռ վարդապետութեան եւ հրաման մեկնութեան եւ թարգմանութեան սոցա միայն շնորհեցաւ ի մէջ Հայոց ի սրբոյն Սահակայ եւ յերանեալ Մեսրովբայ»[45]: Պետք է ենթադրել, որ այս բոլոր իրավունքներն անձամբ չունենալու դեպքում Օրբելյանն այսպիսի հպարտությամբ չէր գրի այդ մասին: Մյուս կողմից, այն, ինչ արգելվել էր Մարդապետական եպիսկոպոսին (մետրոպոլիտ լինելու դեպքում իր իշխանության ներքո միայն երկու կամ երեք եպիսկոպոս ունենալ եւ եպիսկոպոսական ձեռնադրություն չանել), հետագայում թույլատրվում է Սյունյաց մետրոպոլիտին, հատկապես Ստեփանոս Օրբելյանի ժամանակ, երբ նրա իշխանության ներքո էին գտնվում Տաթեւի ու Նորավանքի ինչպես առաջնորդ, այնպես էլ վիճակավոր եպիսկոպոսները:

Ստ. Օրբելյանի մոտ եւ բազմաթիվ հիշատակարաններում Սյունյաց մետրոպոլիտը կոչվում է «պետ երկոտասան գաւառաց»[46], կամ «գլուխ երկոտասան գաւազանաց»[47]: Այս եւ Օրբելյանի «Պատմության» վերը մեջբերված տեղեկության հիման վրա կարող ենք վստահորեն ասել, որ Սյունյաց մետրոպոլիտն իր իշխանության ներքո ուներ 12 գավառներ՝ իրենց եպիսկոպոսներով: Այս մասին ուղղակիորեն նշվում է 14-րդ դարի մի այլ հիշատակարանում, ուր Եսայի Նչեցին մետրոպոլիտ Հովհաննես-Օրբելին անվանում է «մետրապաւլիտ եւ այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց»[48]: Սակայն այդ եպիսկոպոսնե-

---

[44] Ստ. Օրբելյան, էջ 18:
[45] Նույն տեղում:
[46] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 231:
[47] A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, By Avedis K. Sanjian, Los Angeles-London, 1976, p. 85.
[48] Նույն տեղում:

րի մասին քիչ տեղեկություններ են հասել մեզ: Եպիսկոպոս առաջնորդներ են հիշատակվում Գողթն գավառում[49], Ցախաց քարի[50], Շատիկի[51] եւ այլ վանքերում, Եղեգիսում[52]: Այս շրջանում Սյունյաց մետրոպոլիտի իշխանության ներքո էին գտնվում Նորավանքի եւ Տաթեւի առաջնորդ. եպիսկոպոսները, որոնց կանդրադառնանք ստորեւ:

2. Սյունյաց աթոռը Օրբելյանների տիրապետության նախօրյակին

Բուն Հայաստանում վերջին անկախ հայկական պետության՝ Սյունյաց թագավորության անկումից հետո (1170 թ.) Սյունիքը եւս դրավվում է սելջուկ-թուրքերի կողմից եւ ավերածությունների ենթարկվում: Բաղաբերդում պահված շուրջ 10.000 ձեռագրեր ոչնչացվում են, ավերվում են բազմաթիվ վանքեր, գյուղեր, քաղաքներ ու ամրոցներ: Այս վիճակը տեւում է մոտ քառասուն տարի: Սակայն շուտով, հզորացած Վրաստանի օժանդակությամբ, Զաքարյան իշխանները, Հայաստանի այլ շրջանների հետ, ազատագրում են նաեւ Սյունիքը. «...բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի պարսից (իմա՝ սելջուկ-թուրքերից), եւ առին յԱռանայ մինչեւ ցներքին Բասեն եւ ի Բարկուշատայ մինչեւ ի Մժնկերտ... առին ի 660 թուականին (1212) զՍիւնիս, զՈրոտն, զԲորոդան, զԲղեն, զԲարկուշատ»[53], քիչ ավելի ուշ՝ նաեւ Վայոց ձոր եւ մյուս գավառները: Ազատագրված Սյունիքի մեծ մասը հանձնվում է Լիպարիտ Օր-

---

[49] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 517, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Բ, էջ 375, 400, 427, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Գ, էջ 27:

[50] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Գ, էջ 41:

[51] Նույն տեղում, էջ 522:

[52] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ա, էջ 383, 397:

[53] Ստ. Օրբելյան, էջ 287:

լելյանին, «զի նա եղեւ առաջնորդ առման Սիւնեաց եւ այլ բերդերոյն»[54], որով եւ սկիզբ է դրվում Օրբելյանների Սյունյաց իշխանական ճյուղին:

Պատմության մեջ հիշատակվող Սյունյաց աթոռակալներից առաջինը Ստեփանոս Ծախր Էլ Մսեհն է, որ առնչվում է Օրբելյան իշխանական տան հետ Սյունիքում:

Ստեփանոս Ծախր Էլ Մսեհը Սյունյաց եպիսկոպոս Գրիգոր Մեղրեցու որդին էր: Հայրը՝ Գրիգոր Մեղրեցին (1148–1168), սկզբնապես ավագ քահանա էր Մեղրի ավանում: Եղբոր՝ Սյունյաց աթոռակալ Տեր Բարսեղի մահից հետո (1143), ինչպես Ստ. Օրբելյանն է գրում. «...ամայացեալ էր աթոռն ի բնակչաց եւ ոչ գոյր տէր եւ կամ իշխեցող, զի հոգայր վասն եկեղեցւոյս կամ վասն սուտ մնացորդաց հօտին եւ ի խնդիր լինել առաջնորդի»[55]: Գրիգորի Ծամամ անունով երեցկինը հորդորում է ամուսնանալ դնալ Կիլիկիա՝ կաթողիկոսի մոտ, եւ ձեռնադրվել եպիսկոպոս ու նշանակվել Սյունյաց մետրոպոլիտ, «զի եւ որդեակս մեր լիցի որդի քահանայապետի»[56]: Կնոջ երկար պնդումներից հետո Տեր Գրիգորն ուղեւորվում է Հռոմկլա, կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113–1166) մոտ, եւ նրանից եպիսկոպոս ձեռնադրվելով, վերադառնում է Սյունիք ու նստում Սյունյաց աթոռին: Սրա գործունեության մասին որոշակի ոչինչ չի պահպանվել: Մահացել է 1168 թվականին եւ թաղվել Նորավանքում, ուր եւ մինչեւ այժմ դտնվում է նրա տապանաքարը հետեւյալ արձանագրությամբ. «Զհայր Տեառն Ստեփանոսի տէր Գրիգոր յիշեցէք»[57]: Սակայն որոշակի չենք կարող ասել, թե Գրիգոր Մեղրեցին աթոռը տեղափոխել է Նորավանք, քանի որ Նորավանքի եպիսկոպոսների՝ Ստ. Օրբելյա-

---

[54] Նույն տեղում, էջ 291:
[55] Նույն տեղում, էջ 250:
[56] Նույն տեղում:
[57] Դիվան հայ վիմագրության, պր. Գ, Վայոց Ձոր (կազմող՝ Ս. Գ. Բարխուդարյան), Երեւան, 1967, էջ 234 (այսուհետեւ՝ Դիվան հայ վիմագրության, Գ):

նի հիշատակած շարքում (որոնք մինչև Ստ. Օրբելյան յոթն են) նրա անունը չի նշված[58]:

Գրիգոր Մեղրեցուն հաջորդում է իր որդին՝ Ստեփանոսը: Աթոռակալման թվականը Ստ. Օրբելյանը չի նշում, այլ պարզապես գրում է. «Եւ յաջորդէ զտեղին որդի նորին Ստեփաննոս մանուկ տիօք, լի ամենապատիկ շնորհօք, սիրեցեալ եւ մեծարեալ յաչս աւագաց, որք ի ժամանակին իշխեցողք՝ Ելտկուզ Աթաբէկին եւ որդւոյ նորա Փալհավանին եւ Խզիլ Ասլանին եւ Բուրաք Աթաբեկին, որք եւ գգուական անուամբ Ցախը էլ Մսեհ կոչէին, որ թարգմանի «սիրող Քրիստոսի» եւ պատուէին զնա տուղրայիւ գրոյ եւ փարմանաւ եւ մանշուրաւ, զոր մեք սիգել[59] կոչեմք»[60]: Հավանաբար նրա աթոռակալության սկիզբը պետք է համարել 1170 թ.՝ հոր մահից երկու տարի հետո, ինչպես եւ ընդունել է Ալիշանը[61], հաշվի առնելով նրա՝ մետրոպոլիտական աստիճան ստանալու համար Կիլիկիա գնալու ժամանակահատվածը:

Ելտկուզ աթաբեկի կողմից «սիրեցեալ եւ մեծարեալ» լինելը (իշխել է 1148/9–1172 թթ.)[62], նույնպես ցույց է տալիս, որ նա աթոռակալել է 1172 թվականից առաջ: Եվ քանի որ Գրիգոր Գ Պահլավունին վախճանվել է 1166 թվականին, իսկ նրան հաջորդած Ներսես Գ Շնորհալին գահակալել է 1166–1173 թվականներին, ապա Ստեփանոս Գ-ը իր ձեռնադրությունը պետք է ստա-

---

[58] Ստ. Օրբելյան, էջ 364:

[59] Ըստ Ա. Աբրահամյանի, տուղրա գիրը սուլթանական պաշտոնական գրություն է, խրախուսական բովանդակությամբ, ֆարմանը եւ մանշուրը հրովարտակն է, իսկ սիգել նշանակում է կայսերական հրամանագիր: Տե՛ս Սյունիքի պատմություն, էջ 493:

[60] Ստ. Օրբելյան, էջ 251 (Հր. Աճառյանը «Ցախը էլ Մսեհ» բարգմանել է «Պարծանք քրիստոնեից»: Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 618):

[61] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 20:

[62] Հ. Սանանդյան, Երկեր, Բ, Երեւան, 1978, էջ 110–111:

ցած լինի հենց Ներսես Շնորհալուց, ինչպես իրավացիորեն ենթադրում է Մ. Օրմանյանը[63]:

Ուշագրավ է Վարդան Արևելցու վկայությունն այն մասին, որ յոթ տարի աթոռակալելով Ներսես Շնորհալին միայն յոթ եպիսկոպոս է ձեռնադրել, անշահախնդիր կերպով, իսկ ձեռնադրվածները բոլորն անվանի եւ իմաստուն այրեր էին. «...պատրիարգն Ներսէս... եօթն ամ պաշտեալ զպատիւն եւ եօթն եպիսկոպոս ձեռնադրեալ ձրի, արք անուանիք եւ ընտիրք...»[64]:

Ստեփանոս Դ-ը հաստատվում է ոչ թե Տաթեւում, այլ աթոռանիստ է ընտրում Նորավանքը, ուր թաղված էր եւ իր հայրը՝ Գրիգոր Մեղրեցին, որովհետեւ «հին աթոռն աւերեալ էր եւ ապականեալ»[65]: Տաթեւից աթոռի տեղափոխման մյուս եւ գլխավոր պատճառն, անշուշտ, Սյունյաց թագավորության վերջնական կործանումն էր: 1170 թվականին ընկավ այս թագավորության ամենագլխավոր ամրոցը՝ Բաղաբերդը, եւ բազմաթիվ ձեռագրերի հետ հափշտակվեցին նաեւ այստեղ պահված Տաթեւի ու շրջակայքի վանքերի ողջ սպասքն ու հանդերձանքը, մինչդեռ Վայոց ձորը զերծ մնաց այդ ավերածություններից, ուր եւ ապաստան գտան Կապանի իշխանական տոհմերի մնացորդները[66]:

Աթոռանիստի տեղափոխմանը օրինական ձեւ տալու համար Ստեփանոս Դ-ը դիմում է սելջուկ սուլթանին եւ կարողանում է նրանից հրամանագիր ու սիդել վերցնել, «զի ի նմա ժառանգեսցեն ժառանգորդք սուրբ եկեղեցւոյն»[67]: Այնուհետեւ դիմում է ժամանակի կաթողիկոս Գրիգոր Դ Տղային (1173–1193) եւ նրանից շրջաբերական թուղթ է խնդրում Սյունյաց մետրոպոլիտության նոր նստավայրի եւ Նորավանքի վիճակի

---

[63] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1669:
[64] Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, Երեւան, 2001, էջ 132:
[65] Ստ. Օրբելյան. էջ 257:
[66] Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 42:
[67] Ստ. Օրբելյան. էջ 257:

վերաբերյալ: Ելտկուզ աթաբեկից (սա իշխում էր Գանձակում եւ կարճ ժամանակով իր իշխանությանն էր միացրել Հայաստանի հյուսիսային շրջանները, նաեւ Սյունիքը)[68] հաստատուն մանչուր է վերցնում՝ Նորավանքի նախկին կալվածքների վերաբերյալ, դրանց ավելացնելով նաեւ Ագարակի ձոր գյուղն ու Անապատի բերդը: Ելտկուզ աթաբեկի այս «առատաձեռնությունը», մեր կարծիքով, պետք է բացատրել նրանով, որ Վրաստանի հետ պայքարի մեջ գտնվող Գանձակի ամիրայությանը սկզբնական շրջանում բոլորովին ձեռնտու չէր իր հանդեպ կրոնական թշնամանք առաջացնել հայ բնակչության շրջանում: Ընդհակառակն, ինչպես քիչ հետո կտեսնենք, նրանք հանդուրժում են նույնիսկ Ելիկում Օրբելյանի՝ կրոնափոխության իրենց առաջարկի մերժումը եւ ամուսնությունը քրիստոնյա կնոջ հետ, թողնելով իր պաշտոնում, որպես Նախիջեւանի որոշ շրջանների կառավարիչ:

Պետք է նկատել, որ Ստեփանոս Ցախը էլ Մսեհի կողմից պատահական չէր աթոռի համար Նորավանքի ընտրությունը: Դեռեւս Կապանի ավերումից (1103)[69] հետո, 1105 թվականին, այստեղ էր հաստատվել Բաղքի Հասան իշխանի որդին՝ Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսը, որը տարբեր միջոցներով ավելացրել էր վանքապատկան գյուղերի ու հողատարածությունների թիվը, բարվոքել վանքի տնտեսական վիճակը, հավաքել «կրոնաւոր ու ճգնակեաց» հոգեւորականներ, մահմեդական տիրակալներից հատուկ հրամանագիր էր վերցրել այս նոր եպիսկոպոսական վիճակի վերաբերյալ եւ այլն:

Նորավանքը հռչակված էր նաեւ որպես սրբավայր-ուխտատեղի. Նորավանքի մոտ էր կառուցված Ս. Փոկաս մատուռ-եկեղեցին, ուր թաղված էր Ս. Փոկաս Հայրապետի մասունքը (Ստ. Օրբելյանը հիշատակում է այստեղ՝ մատուռի ներսում, նաեւ մի

[68] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 140:
[69] Նույն տեղում, էջ 83:

հրաշագործ աղբյուր, որը բխում է մինչեւ այժմ): Միաժամանակ, այստեղից կարելի էր անմիջական կապի մեջ լինել թե՛ սելջուկյան պետության իշխանության ներքո գտնվող Հայաստանի խոշոր կենտրոններից մեկի՝ Նախիջեւան քաղաքի, եւ թե՛ ընդհուպ մինչեւ Սեւանի հյուսիսային տարածքներն ու Արարատյան դաշտավայրի մի զգալի մասը ազատագրած Զաքարյան իշխանների ու Վրաց տերության հետ: Մյուս կողմից, Բաղաց թագավորության կործանման ու ավերման ժամանակ Վայոց ձորը չէր մտնում այդ թագավորության կազմի մեջ: Այն դեռեւս Գագիկ Ա Բագրատունու (989–1020) ժամանակ անջատվել էր այդ թագավորությունից եւ կցվել Բագրատունյաց թագավորությանը[70], եւ հետագայում գրավվել սելջուկների կողմից, հավանաբար Նախիջեւանի հետ միասին՝ 1170 թվականից առաջ: Ուստի Բաղաց թագավորության անկման ժամանակ այդ թագավորությանը ենթակա շրջանների նման չէր ավերվել: Սա երեւում է հատկապես այն փաստից, որ Սյունիքի թագավորական տան ժառանգներից ոմանք, Բաղաբերդի անկումից հետո, ապաստան են գտնում Վայոց ձորում[71]:

Վերադառնալով Սյունիք եւ հաստատվելով Նորավանքում, նորընծա մետրոպոլիտը սերտ կապեր է հաստատում մի կողմից Ելտկուզ աթաբեկի, նրա որդիներ Փահլավանի ու Իզիլ Ասլանի, եւ մյուս կողմից՝ Թամար թագուհու (1184–1213), Գեորգի Լաշայի (1213–1223), Զաքարե ամիրսպասալարի եւ Իվանե աթաբեկի հետ: Վերջիններս Կայեն գավառում նրան «Հանգստյան տեղ» են հատկացնում Հաղարծինի վանքն ու Աբասաձոր գյուղը: Հետագայում Սյունյաց Օրբելյանների տիրույթների մաս են կազմում ինչպես այս, այնպես էլ Կայեն գավառի այլ տարածքներ: Սակայն փաստեր չլինելու պատճառով չենք կարող ասել, թե այդրո՞ք Հաղարծինը այս ժամանակա-

[70] Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», Երեւան, 1966, էջ 63:
[71] Նույն տեղում:

հատվածում կցվել էր Սյունյաց մետրոպոլիտությանը: Առավել եւս, որ Հաղարծինի արձանագրություններում որեւէ հիշատակություն չկա Սյունյաց մետրոպոլիտների կամ Օրբելյան իշխանների մասին:

Ստեփանոս Գ-ի կարեւոր ձեռնարկումներից մեկն է լինում Տաթեւի ավերված եկեղեցիների վերանորոգումը: Տաթեւն ավերվել էր 1138 թվականի Գանձակի երկրաշարժի ժամանակ. «...եղեւ շարժն Գանձակայ ի 587 թուականին եւ դողաց երկիր ի հիմանց. եւ գմբէթն մեծ եկեղեցւոյն ի Տաթեւ բոլորապոյր շրջեկաւն թռեալ եւ անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն եւ գաւթին որ ի դրանն կայր եւ փլոյց առ հասարակ»[72]: Սակայն Ստեփանոսը կարողանում է վերակառուցել միայն գլխավոր եկեղեցու գմբեթը, ինչպես նշում է Օրբելյանը. «Սա նորոգեաց զխախտեալ եկեղեցին ի Տաթեւ զսուրբ Առաքեալքն (իմա՝ Պետրոս-Պողոս եկեղեցին), եւ ետ դնել զգմբէթն ի ձեռն հօրն Յակոբայ Շահկեցւոյ»[73]:

Ցավոք, որեւէ արձանագրություն չի պահպանվել այս վերանորոգման վերաբերյալ: Ստեփանոս Գ-ին չի հաջողվում վերանորոգել Տաթեւի համալիրի խարխլված մյուս եկեղեցիները եւս: Պետք է ենթադրել, որ ինչպես քաղաքական վիճակը, այնպես էլ նյութական միջոցները թույլ չէին տալիս նրան միանգամից նման մեծածավալ աշխատանք սկսել: Հավանաբար Տաթեւի վերանորոգման ծախսերը հոգալու համար է, որ ձեռներից առաջնորդը ստիպված է եղել գրավ դնել «...զտէր Յովհաննիսի զաւագ խաչն եւ զթիթեղնակապն, որ ունէր թիթեղունս ոսկի ի վերայ երեսացն, եւ կամարակապն զկամար ակնաձեւ թեւէ ի թեւ»[74], որ հետագայում տարբեր վեճերի առիթ է տալիս:

---

[72] Ստ. Օրբելյան, էջ 250:
[73] Նույն տեղում, էջ 251:
[74] Նույն տեղում, էջ 258: Մեծ կամ Ավագ Խաչի հետ գրավ դրված «թիթեղնակապն ու կամարակապը», ըստ Ղ. Ալիշանի, նույնպես խաչեր են. «...եւ առաքեաց զնա

Ինչպես վերեւում նշեցինք, Ստեփանոս Գ-ն հեռատես քաղաքականության շնորհիվ, սերտ կապեր էր հաստատել Վրաց արքունիքի ու հատկապես Զաքարյան իշխանների հետ: Դրա վառ ապացույցն է ինչպես Հաղպատում Զաքարեի ու Իվանեի քրոջ որդուն՝ Գրիգորիսին եպիսկոպոս ձեռնադրելը 1189 թվականի շուրջ[75] («...ձեռնադրեաց եպիսկոպոս ի Հաղբատ զտէր Գրիգորիս՝ քեռորդի Զաքարէի եւ Իւանէի»)[76], այնպես էլ Զաքարյան եղբայրների նվիրատվությունները: Ինչպես նշեցինք, ըստ Ստ. Օրբելյանի, նրանք Ստեփանոս Գ-ին են տալիս «ի Կայեն տեղի Հանգստեան նմա զգերահռչակ ուխտն Հաղարծին եւ գիւղն զԱբասաձորն»[77]:

Մյուս կողմից, Ստեփանոսը աշխատում է չգժտվել Ելտկուզ աթաբեկին հաջորդած նրա որդիների՝ Խզիլ Ասլանի ու Մուհամմեդ Փահլավանի հետ, որոնք երկու մասի էին բաժանել իրենց ժառանգած ընդարձակ երկիրը, որի հյուսիսային մասը բաժին էր ընկել Փահլավանին: Ստեփանոսը երբեմն այցելում էր այս բռնակալներին, որի համար եւ նրան սիրում ու մեծարում էին. «...սիրեցեալ եւ մեծարեալ յաչս աւագաց, որք ի ժամանակին իշխեցողք՝ Ելտկուզ աթաբէկին եւ որդւոց նորա Փահլավանին եւ Խզիլ Ասլանին»[78]: Սակայն այս «սիրեցեալ եւ մեծարեալ» լինելը արդյունք է այն բանի, որ 13-րդ դարի վերջին քառորդին ներքին գժտությունների պատճառով թուլացել էր սելջուկյան պետությունը եւ ժամանակի սելջուկ իշխանապետե-

---

(Սարգիս եպիսկոպոսին – ծ. հ.) առ Աբարէկն Իւանէ՝ խնդրել զաւագ անուանեալ Խաչն, որ ընդ երկուց այլոց խաչից՝ Կամարակապ եւ Թիթեղնակապ կոչեցելոց՝ եղեալ էր ի գրաւական» (Ղ. Ալիշան, Սիսիական, էջ 185): Իսկ ըստ Ա. Աբրահամյանի. «Թիթեղնակապն ու կամարակապը ոսկե զարդեր են, որ կրում էին բարձրաստիճան կրոնավորները» (Սյունիքի պատմություն, էջ 248): Մենք հակված ենք ընդունելու Ղ. Ալիշանի բացատրությունը, քանի որ նմուսն «զարդերի» համար դժվար թե այդպիսի մեծ վեճ ծագեր:

[75] Սյունիքի պատմություն, էջ 495:

[76] Ստ. Օրբելյան, էջ 251:

[77] Նույն տեղում:

[78] Նույն տեղում:

ը, նկատի ունենալով օրավուր հզորացող հայ-վրացական ռազմական համագործակցությունը, չէին ցանկանում նոր ընդհարումների դուռ բանալ: Այս է պատճառը, որ սելջուկները լռելյայն համաձայնվում են Ելիկումի ամուսնությունը Ստեփանոս Գ-ի քրոջ աղջկա՝ Խաթունի հետ:

Վրաց արքունիքի դեմ Օրբելյանների գլխավորած անհաջող ապստամբությունից հետո, երբ գրեթե ողջ իշխանատոհմը սրի է քաշվում, զրկվում հայրենի կալվածքներից[79], Գանձակում ապաստանած Լիպարիտ Օրբելյանի որդին՝ Ելիկումը, Նախիջևան գալով, ըստ Ստ. Օրբելյանի, իր մոտ է կանչում Ստեփանոս եպիսկոպոսին, ընկնում նրա առաջ, մեծ զղջմամբ խոստովանում իր մեղքերը եւ հաղորդություն խնդրում: Այնուհետեւ Ելիկումը հետամուտ է լինում ամուսնության հարցի լուծմանը, որպեսզի այս կերպ ձերբազատվի սելջուկ իշխողների՝ մահմեդականություն ընդունելու եւ մահմեդական կնոջ հետ ամուսնանալու պնդումներից. «...եւ ոչ գտանէր ի քրիստոնէից զոք պատշաճ իւրոյ խնամութեան, զի աշխարհս այս դեռ եւս ի ներքոյ իշխանութեան Պարսից էր: Վասն որոյ հաւանեալ խնամութեան Սիւնեաց եպիսկոպոսի՝տեառն Ստեփանոսի, զի հոգեւոր աստիճանաւ բարձր էր քան զնա՝ խնդրէր ի նմանէ զդուստր քեռ նորա»[80], գրում է Օրբելյանը: Անշուշտ, այս ամուսնության հարցում կարեւոր դեր է կատարում Ստեփանոս մետրոպոլիտը:

Ելիկումի եւ Խաթունի ամուսնությունից ծնվում է մի արու զավակ, որին կոչում են պապի անունով՝ Լիպարիտ: Սակայն շուտով, 1184 թվականի Գանձակի ճակատամարտի ժամանակ[81], որ մղվում էր սելջուկների ու վրացիների միջեւ, յուրայինների կողմից սպանվում է Ելիկումը, որ հարկադրաբար հանդես էր գալիս սելջուկյան բանակի կազմում: Ճակատամարտի ժամա-

---

[79] Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 204–205:
[80] Նույն տեղում, էջ 288–289:
[81] Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 46:

նակ Խաթունն ու մանկահասակ Լիպարիտը սելջուկների կողմից խիստ հսկողության տակ պահվում էին Ճահուկ գավառում: Պատճառը պարզ է. սելջուկները կասկածում էին Ելիկումի հավատարմությանը:

Ելիկումի մահից եւ Խաթունի՝ փախուստի անհաջող փորձից հետո, Լիպարիտին ու իր մորը Ճահուկից տեղափոխում են Նախիջեւան, ուր եւ «տաճիկ մի բռնաբարեալ զԽաթունն՝ ածէ ի տունն իւր եւ առնու զնա կին»[82]: 1211 թվականին Զաքարյանները գրավում են Սյունիքի մի զգալի մասը: Նրանց մոտ է շտապում Ստեփանոս Գ-ը եւ տեղեկացնում, որ Նախիջեւանում է գտնվում Ելիկումի միակ որդին՝ Լիպարիտը, որն այդ ժամանակ առնվազն 26 տարեկան պիտի լիներ: Զաքարյանները Ստեփանոսին առաջարկում են բոլոր հնարավոր միջոցներով ազատել նրան գերությունից և իրենց մոտ բերել: Ստեփանոս Գ-ը բարեհաջող կերպով կատարում է այդ առաջադրանքը:

Լիպարիտը, միացած Զաքարյան եղբայրների ջոկատներին, ուննենալով նաեւ մորեղբոր՝ Ստեփանոս Գ-ի աջակցությունը, մեկը մյուսի ետեւից սկսում է ազատագրել Սյունյաց գավառները. «Եւ զի նա եղեւ առաջնորդ առման Սիւնեաց եւ այլ բերդերոյն, տայ (Իվանե Զաքարյանը, ծ. Հ.) եւ ի ձեռս նորա զՍիւնիս, զՈրոտն, զԲարկուշատ եւ զայլ բերդորէսն»[83]:

Այսպիսով, արդեն մոր կողմից Սյունյաց բարձրաստիճան հոգեւոր խավի հետ (որն, իր հերթին, ծագում էր բնիկ Սյունյաց թագավորական-ազնվական տոհմից) ազգակցական կապ ունեցող Օրբելյանների այս շառավիղը հաստատվում է Սյունիքում եւ սկիզբ դնում Սյունյաց Օրբելյանների ճյուղին, որը կարճ ժամանակի ընթացքում մեծապես հզորանալով, կարեւորագույն դեր է կատարում Սյունիքի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում: Անձնական խիզախության եւ ճկուն քա-

---

[82] Ստ. Օրբելյան, էջ 290:
[83] Նույն տեղում, էջ 291:

ղաքականության շնորհիվ Օրբելյան իշխանները կարողանում են մոնղոլական բռնակալության տարիներին Հայաստանի մի անկյունում պահպանել քաղաքական կիսանկախ մի վիճակ և քրիստոնեական իշխանապետություն:

Հետագայում Օրբելյաններին ու նրանց գործունեությունը փառաբանող հեղինակներն ու հիշատակագիրները չեն մոռանում շեշտել նրանց հիրավի ազնվականական, անգամ թագավորական ծագումը: Ազգակցական կապ ունենալով Մամիկոնյան, Բագրատունի (Կյուրիկյան) և Սյունյաց թագավորական ազնվատոհմերի հետ, իրավամբ և արժանիորեն ժամանակակիցների կողմից Օրբելյաններն ընկալվում էին որպես «Հայոց Մեծաց թագաղարմից ժառանգներ»: Այս առումով ուշադրավ ու հետաքրքրական են հատկապես միջնադարի մեր նշանավոր գործիչներից Եսայի Նչեցու, Ավագի եւ Մոմիկի ընդօրինակած ձեռագիր մատյաններում նրանց իսկ թողած հիշատակարանները[84]:

Օրբելյաններն առանձնահատուկ դեր են կատարում նաեւ Սյունյաց աթոռի պատմության մեջ: Այսօր միայն հպարտությամբ ու երախտագիտությամբ կարելի է նայել նրանց թողած հսկայական մշակութային, հատկապես ճարտարապետական, աստվածաբանական, փիլիսոփայական, մեկնողական, գրականագեղարվեստական, մանրանկարչական և ընդհանրապես իրենց ժամանակաշրջանում հայտնի մշակութային բոլոր բնագավառների մաքուր հայկական ժառանգությանը:

---

[84] Եսայի Նչեցին 1323 թ. հիշատակարանում Բուրթել Մեծի ու նրա զավակների մասին գրում է. «...որք են յարանց եւ ի կանանց ազգ ընտրեալ եւ գովեալ, լի հաւատովք եւ կատար»ալք ամենայն գործովք առաքինութեան...»: Գրիչ եւ մանրանկարիչ Ավագը 1337-ին Բուրթելի որդի Բեշքենին անվանում է՝ «Հայոց Մեծաց թագազարմից ժառանգն, տէր տանն Սիսակայ՝ մեծիմաստ պարոնաց պարոն...»: Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 182, 292: Մոմիկը 1331-ին Բուրթելի մասին գրում է. «...որ է ի վեր, քան զգովելի մարդկան ազգէ՝ քանզի զամենայն բարի բնութիւն եւ զարիութիւն յինքեան ունի կրկնակի՝ զհոգեւոր եւ զմարմնաւոր՝ ըստ աշխարհիս եւ ըստ երկնայնոյն»: A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States..., p. 85.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ

1. Սյունյաց աթոռի ամրապնդումը Նորավանքում (Ստեփանոս Գ, Սարգիս Ա)

Սյունյաց եռանդաշատ առաջնորդը՝ Ստեփանոս Գ Ծախը էլ Մսեհը, Օրբելյանների տիրապետության հաստատման ժամանակ արդեն ծերացել էր: Նրա վերջին ցանկությունն էր վերադարձնել Սյունյաց աթոռի սրբությունները՝ Տեր Հովհաննեսի մեծ խաչը, Թիթեղնակապն ու Կամարակապը, որոնք Տաթեւի վերանորոգման ծախսերը հոգալու համար գրավ էր դրել Շահապոնքի (Շահուկ գավառում) Ածոպ վանքի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսի մոտ[85]*: Սակայն Վասակ Խաղբակյանը հափշտակում է դրանք, խաչը նվիրում Իվանե Զաքարյանին, իսկ «Թիթեղնակապն ու Կամարակապը» դնում իր իշխանության տարածքում գտնվող Կեչառիսի վանքում: Ստեփանոսին հաջողվում է բազում ջանքերի շնորհիվ ազատել խաչը, բայց մյուս երկուսը մնում են Կեչառիսում:*

Տեր Սարգիսը, որ Ստեփանոս Գ-ի կողմից հաջորդ աթոռակալ էր նշանակվել եւ եպիսկոպոս ձեռնադրվել, գնում է խաչը Նորավանք վերադարձնելու. «Եւ նորա գնացեալ առնու զխաչն խնդութեամբ, եւ անցեալ փութանակի գայ հասանէ ի Նորավանս ուխտ եւ բնակեցուցանէ անդէն զսուրբ նշանն. որ եւ եգիտ վախճանեալ զքեռին իւր տէր Ստեփաննոս»[86]*: Տէր Ստե-*

---

[85] Ստ. Օրբելյան, էջ 258:
[86] Նույն տեղում, էջ 259:

փանոսը վախճանվել է 1216 թվականին Արփա (այժմ՝ Արենի) գյուղում եւ թաղվել Նորավանքում՝ իր հոր՝ Տեր Գրիգորի գերեզմանի մոտ[87]*:*

Այսպիսով, ուսումնասիրելով Ստեփանոս Գ Ցախր Էլ Մսեհի կյանքն ու գործունեությունը, պատմության խորքերից մեր առջեւ է հառնում անձնվեր հոգեւորականի, հեռատես քաղաքական գործչի ու հայրենասերի կերպարը:

Ավելացնենք, որ Ստեփանոս Գ-ին է վերագրվում այժմ կորած մի պատմական աշխատություն՝ Բաղաց թագավորության պատմության մասին, որը նա, Ստ. Օրբելյանի վկայությամբ, գրել է Մխիթար Անեցու խնդրանքով, Անիում եղած ժամանակ: Այս գործի հեղինակի մասին Հ. Մարգարյանը գրում է. որ նա «Հավանաբար, Ստեփանոս Գ Ցախր Էլ Մսեհն է (1168–1216): Ստեփանոս Բ-ի ժամանակ (1116–1143) Մխիթարը դժվար թե այնքան բարձր դիրքի հասած լիներ, որ այդպիսի պատվեր տար Սյունյաց եպիսկոպոսին եւ նրա մասին այդքան պատկառանքով գրեր Օրբելյանը... Ստեփանոս եպիսկոպոսի երկին, ինչպես երեւում է, ծանոթ է եղել նաեւ Վարդան Արեւելցին»[88]*, այս գործից մեծապես օգտվել է նաեւ Ստեփանոս Օրբելյանն իր աշխատությունները գրելիս:*

Ստեփանոս Գ-ի մահից հետո Սյունյաց աթոռը բաժանվում է երկու առանձին աթոռների՝ Նորավանք եւ Տաթեւ կենտրոններով: Դեռեւս Ստեփանոս Գ-ի կենդանության օրոք, իր իսկ հրամանով, Աղվանից կաթողիկոսի կողմից եպիսկոպոս էր ձեռնադրվել նրա (Ստեփանոս Գ-ի) քրոջ որդին՝ Տեր Սարգիսը, որը Նորավանքի Սարգիս անունով առաջին եպիսկոպոսն է[89]*. «Առ կենօք սորին (իմա՝ Ստեփանոս Գ-ի) էր ձեռնադրեալ*

---

[87] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 185:

[88] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երեւան, 1983, էջ 6:

[89] Այսուհետեւ՝ Սարգիս Ա:

եպիսկոպոս տէր Սարգիս՝ քեռորդի սորին հրամանաւ քեռւոյն իւրոյ յԱղուանից կաթողիկոսէն»[90]: *Ինչպես վերեւում նկատեցինք, Ստեփանոս Գ-ն իր ձեռնադրությունն ստացել էր Ներսես Շնորհալուց, եւ նրա գործունեության ժամանակ որեւէ վկայություն չկա Սյունյաց եւ Աղվանից աթոռների հարաբերության մասին, ուստի չենք կարող ասել, թե Սյունյաց մետրոպոլիտությունն այդ ժամանակ միացել էր Աղվանից աթոռին: «Ձեռնադրեալ եպիսկոպոս» ասելով Օրբելյանն այստեղ, ըստ երեւույթին, նկատի ունի որպես ապագայի Սյունյաց աթոռի առաջնորդ-եպիսկոպոս:*

Հատկանշական է, որ Ստեփանոս Գ-ի մահից եւ աթոռի երկփեղկումից հետո Տաթեւի և Նորավանքի աթոռակալներից որեւէ մեկը այլեւս չի կոչվում մետրոպոլիտ կամ արքեպիսկոպոս, այլ պարզապես եպիսկոպոս: Դա դալիս է ասելու, որ Ստեփանոս Գ-ի մահից հետո՝ 1216 թվականից մինչեւ Ստեփանոս Օրբելյան, մինչեւ 1286 թվականը, Սյունիքը դադարել էր որպես մետրոպոլիտություն լինելուց: Դա երեւում է նաեւ Օրբելյանի տողերից, երբ գրում է, որ Նորավանքի եւ Տաթեւի եպիսկոպոսները «միաբան թղթովք եւ ընծայիւք յուղարկեալ էին զնա (իմա՝ Ստ. Օրբելյանին) առ կաթողիկոսն վասն նորոգման սուրբ աթոռոյն հին պատուոյ եւ աստիճանին»[91]: *Բայց, կրկին անդրադառնալով Սարգիս Գ-ի ձեռնադրությանը Աղվանից կաթողիկոսի կողմից, դժվար է ստույգ բացատրություն տալ իր կյանքի մայրամուտին գտնվող Ստեփանոս Գ-ի այս քայլին, քանի որ բնական պիտի լիներ, եթե Սարգսին՝ իր քրոջ որդուն, ուղարկեր*

---

[90] Ստ. Օրբելյան, էջ 251: «Սրա կենդանության ժամանակ եպս. էր ձեռնադրվել սրա (Ստեփանոս Գ-ի) քրոջ որդին, իր քեռու (Ստեփանոս Գ-ի) հրամանով, Աղվանից կաթողիկոսից»: Ա. Աբրահամյանը այս տողը թարգմանել է հետեւյալ կերպ, որը սխալ է. «Դեռ սրա կենդանության օրոք եպիսկոպոս է ձեռնադրվել իր քրոջորդի Տեր Սարգիսը՝ Աղվանքի կաթողիկոս իր քեռու հրամանով», «Սյունիքի պատմություն», էջ 285:

[91] Ստ. Օրբելյան, էջ 251:

Հայոց կաթողիկոսի մոտ՝ Կիլիկիա, ինչպես որ ինքն էր դնացել ժամանակին, եւ ոչ թե Աղվանից կաթողիկոսի մոտ: Թերեւս Ստեփանոսի այս քայլի դրդապատճառը ժամանակի Հայ եկեղեցու ներքին իրավիճակը համարենք, որ բոլորովին էլ մխիթարական չէր: Չնայած Գրիգոր Զ Ապիրատյանի (1194–1203) մահից մի քանի տարի հետո որպես օրինական կաթողիկոս ընտրվել էր Հովհաննես Զ Սսեցին (ըստ Օրբելյանի, Սսեցին հաջորդել է Ապիրատյանին ոչ թե անմիջապես, այլ մի քանի տարի անց)[92], սակայն կաթողիկոսական աթոռներ էին հռչակվել նաեւ Անին, Սիսը եւ Աղթամարը, իսկ Հովհաննես Զ-ը Լեւոն թագավորի հետ գժտվել եւ քաշվել էր Հռոմկլա, չնայած իր աթոռից չէր հեռացել: Մյուս կողմից բուն Հայաստանի կամ Արեւելյան թեմերը, հատկապես Տուտեորդի-Լամբրոնացի հայտնի վեճից, Զաքարե ամիրսպասալարի հրավիրած Լոռվի եւ Անիի ժողովներից հետո[93], ինչպես եւ Կիլիկիայում գտնվող աթոռի կաթոլիկամետ տրամադրություններ պատճառով մի տեսակ սառել էին կաթողիկոսական աթոռի հանդեպ եւ նախկին վստահությունը չունեին: Թերեւս այս աթոռներից միայն Աղվանքի կաթողիկոսությունն էր, որ գտնվելով քաղաքական անբարենպաստ վիճակում (երկրամասը գտնվում էր սելջուկյան իշխանության ներքո, եւ հատկապես Գանձակի շրջանում անընդհատ կռիվներ էին մղվում հայ-վրացական եւ սելջուկյան զորքերի միջեւ), մտահոգված էր՝ Հայոց եկեղեցու ավանդական դավանաբանությանն ապավինած, իր գոյությունը պահպանելով, ուր եւ դիմում է Ստեփանոս Գ-ը, հետագայում Սյունյաց աթոռը այլեւայլ ազդեցություններից զերծ պահելու նպատակով: Հատկանշական է, որ ինչպես Լոռվի ու Անիի ժողովներին ներկա եղած եպիսկոպոսների ցուցակում, ուր քննվում էին Զաքարեի նորամուծություններն ու Կիլիկիայի կաթողիկոսության համաձայ-

---

[92] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1559:
[93] Նույն տեղում, էջ 1516, 1578, 1588:

նութիւնն ու առաջարկները, այնպես էլ Տուտեորդի-Լաբրոնացի վեճի ընթացքում չի հիշվում Ստեփանոս Գ-ի անունը[94]:

Մինչ Սարգիս Ա-ի գործունեութիւնն անցնելը, նկատենք մի արձանագրութիւն մեջ տեղ գտած թվական սխալը, որն առնչվում է Սարգիս Ա-ի աթոռակալման թվականի հարցին: Օրբելյանը գրում է, որ Զաքարե Զաքարյանը Ելտկուզ աթաբեկից ստացած Ագարակի ձոր գյուղը վերադարձնում է Նորավանքին եւ գրում համապատասխան կալվածագիր. «Ես մեղուցեալ ծառայս Քրիստոսի Զաքարէ, ամիր սպասալար՝ որդի մեծին Սարգսի՝ Հայոց եւ Վրաց ասպարապետի, դարձուցի զԱգարակի ձոր գիւղն ի Նորավանս ազատ յամենայն հարկաց եւ խնդրեցի ի տէր Սարգսէ՝ առաջնորդ սուրբ ուխտին... ի թուականիս Հայոց 660 (1211)»[95]: Սակայն այս և մի քանի այլ գյուղեր ու կալվածքներ, ըստ նույն Օրբելյանի, նվիրվում կամ վերադարձվում են Նորավանքին՝ Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցման նավակատիքին, որը տեղի է ունեցել 1216 թվականին[96]:

Սարգիս եպիսկոպոսին առաջին անգամ հանդիպում ենք Ստեփանոս Գ-ի կյանքի մայրամուտին, գրավ դրված խաչը վերադարձնելիս, երբ վերջինիս պատվերով ու հատուկ գրությամբ գնում է Իվանե Զաքարյանի մոտ եւ բարեհաջող կերպով խաչը վերադարձնում Նորավանք: Սակայն, մինչ նա կվերադառնար, Ստեփանոս Գ-ը վախճանվում է: Եվ քանի որ դեռեւս վերջինիս կենդանության ժամանակ Սարգիսը հաջորդ էր ճանաչվել, ուստի ժառանգում է Սյունյաց աթոռը:

Ստեփանոս Գ-ի մահվան թվականը, ինչպես նկատեցինք, Օրբելյանը դնում է 1216 թվականին՝ «Կեցեալ բազում ամս վախճանի անդէն եւ դնի ընդ հօր իւրում ի 665 (1216) թուակա-

---

[94] Նույն տեղում:
[95] Ստ. Օրբելյան, էջ 262–263:
[96] Նույն տեղում, էջ 261: Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 211:

նին: Եւ յաջորդէ զտեղին տէր Սարգիս»[97]: Սարգսի աթոռակալության մասին նշվում է Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի՝ Ս. Աստվածածին եկեղեցու խորանի այժմ կորած մի խաչքարից արտագրած հետեւյալ արձանագրության մեջ. «Թվին ՈԿԴ (1215) ի Հայրապետութեան Տեառն Սարգսի Սիւնեաց եպիսկոպոսի, ես Յակոբս կանգնեցի զխաչս ծնողի իմոյ Խաչիկին, յիշեցէք»[98]: Սակայն Օրբելյանը որոշակիորեն նշում է, որ Զարեհ բերդը Իվանեն պաշարել էր 1216 թվականին, ուր եւ Ստեփանոս Գ-ի պատվերով գնում է Սարգիսը՝ Ավագ Խաչը ստանալու: Մի այլ տեղ նույնպես Ստեփանոս Գ-ի մահը դնում է 1216 թվականին[99]: Ուստի եթե արձանագրության թվականը սխալ չէ (սխալ չի փորագրվել կամ արտագրվել հրատարակչի կողմից) ապա Ստեփանոս Գ-ի կենդանության ժամանակ արդեն իսկ հաջորդ աթոռակալ է նշանակվել եւ ճանաչվել Տեր Սարգիսը: Այսպիսի փաստերի պիտի հանդիպենք նաեւ մեր ուսումնասիրության ընթացքին:

Ստեփանոս Գ-ի մահից հետո նրա հորեղբորորդին՝ Հովհաննես անունով, գնում է Աղթամար, այնտեղ ձեռնադրվում եպիսկոպոս եւ հաստատվում Տաթեւում[100], այսպիսով հասնելով իր նպատակին, քանի որ «կամէր լինել աթոռակալ Սիւնեաց»[101]: Տեր Հովհաննեսի այս փափագը համընկնում էր Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ձգտումներին: Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ Տեր Հովհաննեսը «երթեալ յԱխթամար ձեռնադրի անդ»[102]:

---

[97] Ստ. Օրբելյան, էջ 257:
[98] Մեսրոպ արքեպս. Սմբատեանց, Տեղագրութիւն Գեղարքունի ծովազարդ գաւառի, Էջմիածին, 1895, էջ 505:
[99] Ստ. Օրբելյան, էջ 251:
[100] Նույն տեղում:
[101] Նույն տեղում, էջ 259:
[102] Նույն տեղում:

Անշուշտ, ճիշտ չի լինի Տեր Հովհաննեսի այս քայլը ընդհանրացնել ողջ Սյունյաց աթոռի վերաբերյալ եւ ասել, թե Սյունյաց աթոռը միացավ Աղթամարի աթոռին, քանի որ հակաթոռ պետք է նկատել ինչպես Աղթամարի կաթողիկոսության, այնպես էլ Տեր Հովհաննեսի ընթացքը: Հատկապես, որ Սարգիսն իր հերթին գնում է Կիլիկիա՝ Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221–1267) մոտ թե՛ վավերացնելու իր գահակալությունը եւ թե՛ ներկայացնելու համար ստեղծված իրավիճակը: Նա նախօրոք Նախիջեւանի, Վայոց ձորի ու Ճահուկի թեմերը հաստատում է որպես «սեպհական ժառանգութիւն սրբոյ ուխտին իւրոյ Նորավանից եւ զայլն թողու ի նա (Հովհաննեսին, ծ. Հ.)»[103]:

Ալիշանն այս երկփեղկման պատճառը համարում է Տեր Սարգսի ու Տեր Հովհաննեսի միջեւ Ավագ Խաչի շուրջ ծագած վեճը. «Դարձեալ յետ ամաց վէճ մեծ եղեւ ի վերայ Խաչիս, յերկփեղկել եպիսկոպոսութեան Սիւնեաց. զի Տէր Յովհաննէս հօրեղբօրորդի Տեառն Ստեփանոսի՝ որոյ վիճակեցաւ Տաթեւ, կամէր ընդ իւր տանել զայն»[104]: Այս առթիւ Տեր Սարգիսը դիմում է Իվանեին, եւ Դվինում եպիսկոպոսական ժողով գումարելով, որոշվում է Խաչը թողնել Նորավանքում, որովհետեւ «... մեռեալն եւ գերեալն զմի ունին օրինակ. որ ոք զմեռեալն յարուցանէ՝ ոչ է ծնողացն ծնունդ, այլ նորոգողին զնա. եւ որ ոք զգերեալ թափէ՝ ոչ է ստացողին յայնմհետէ, այլ գերեթափին»[105]: Հավանաբար, Տեր Հովհաննեսի՝ Ավագ Խաչը Տաթեւ փոխադրելու պահանջը պարզապես առիթ էր՝ իր նպատակին հասնելու և իր քայլը արդարացնելու համար: Խաչի գտնվելը աթոռներից որեւէ մեկում հեղինակային նշանակություն է ենթադրում:

---

[103] Նույն տեղում, էջ 260:
[104] Ղ. Ալիշան, Սիսիական, էջ 185:
[105] Ստ. Օրբելյան, էջ 260:

Իր գահակալության առաջին իսկ տարում, Տաթևի բաժանումից անմիջապես հետո, Տեր Սարգիսը, Լիպարիտ Օրբելյանի օժանդակությամբ, ձեռնարկում է Նորավանքի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու շինությունը եւ ավարտում յոթ տարվա ընթացքում. «Իսկ Տէր Սարգիս հիմնարկեալ գեղապաճոյճ եկեղեցի ի Նորավանս հրամանաւ եւ օժանդակութեամբ մեծ իշխանաց իշխանին Լիպարտի... ի թուականին 665 (1216) կատարէ հրաշազան յօրինուածովք յանուն սրբոյն Նախավկային եւ ի նմին խորանս խորհրդաւորս՝ ութ, զամս՝ եօթն»[106]: Ստ. Օրբելյանը նշում է ոչ միայն եկեղեցու հիմնադրման, այլեւ շինարարության ավարտի ու նավակատիկի մասին. «Եւ աւարտեն զնա ամս 7 ութ խորանօք, ի թվականին Հայոց 672 (1223) եւ մեծահանդէս ժողովով՝ եպիսկոպոսօք, վարդապետօք, գահագլուխ իշխանօք, ազատօք եւ տանուտերօք առնեն նաւակատիս սրբոյն տաճարին...»[107]:

Ըստ Օրբելյան պատմիչի, եկեղեցու շինությունն ավարտվել է 1223 թվականին, Տեր Սարգսի աթոռակալությունից՝ 1216 թվականից 7 տարի հետո: Սակայն Նորավանքի Ս. Նախավկա եկեղեցու պատին շինարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը գրված է հայոց ՈՀ՝ 1221 թվականին[108]: Թերեւս 1221 թվականին հաջորդած երկու տարիներին եւս մասնավոր աշխատանքներ են կատարվել, որոնք եւ նկատի ունի Օրբելյանը: Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ արձանագրության թվականը պետք է լինի ՈՀԲ, այսինքն այնտեղ եւս պիտի լիներ 1223[109]:

Եկեղեցու կառուցման նավակատիքը կատարվում է մեծ շուքով, ուր եւ տարբեր իշխանների կողմից կատարվում են

---

[106] Նույն տեղում, էջ 252:
[107] Նույն տեղում, էջ 261:
[108] Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 211:
[109] Սյունիքի պատմություն, էջ 501:

բազմաթիվ նվիրատվություններ[110]: Հատկանշական է, որ արձանագրության մեջ Լիպարիտ Օրբելյանը գրում է. «Ես Լիպարիտ, որդի Ալակումին, թոռն մեծի Աւրպելեանց... չինեցի զվանքս որ կոչի Նորավանք, յառ[աջ]նորդութեան Տէր Սարգսի Սիւնեաց վերադիտողի»[111]: Իսկ Գեղարքունիքի տերն ու Զաքարյան իշխանների բարձրաստիճան գործակալներից մեկը՝ Բուլպաք անունով, որը նույնպես մասնակցել էր եկեղեցու նավակատիքին, իր նվիրատվական կալվածագրի մեջ Տեր Սարգսին անվանում է «երջանիկ Հայրապետս մեր Տէր Սարգիս»[112]: Սա եւս գալիս է ցույց տալու, որ Տեր Հովհաննեսի կողմից անջատված Տաթեւի աթոռը մասնավոր աթոռ էր, որի հետ չէին հաշտվում Սյունյաց իշխողներն ու բարձրաստիճան անձինք:

Սարգիս Ա-ի հետագա գործունեության մասին ժամանակի մատենագիրները (Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի եւ այլք) լռում են, իսկ Սյունյաց պատմիչը հաղորդում է ընդհանուր խոսքերով. «...յետ բազում արդեանց եւ երեւելի արարուածոց գնայ ի Կիլիկիա առ բարեպաշտ արքայն Հայոց Հեթում, եւ պատիւ յոլով ընկալեալ ի նմանէ եւ տեղի հանգստեան՝ զաւագ Մէլիքին. եւ բազումս ճգնեալ անդ՝ գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ի գերեզման Աստուծոյն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի...»[113]: Հեթում Ա-ը գահակալել է 1226–1272 թվականներին[114], ուրեմն, Սարգիս Ա-ը Կիլիկիա է գնացել 1226 թվականից հետո: Կիլիկիայում նրա առաջին գործը լինում է Կոստանդին Ա. Բարձրբերդցու կողմից հաստատել Նորավանքը որպես առանձին աթոռ. «Եւ գնացեալ ինքն առ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին՝ առնու ի նմանէ վիճակ հաստատուն անխախտելի դաշամբ եւ թուղթ շրջաբերական վասն այսց գա-

---

110 Դիվան հայ վիմագրության, Գ, էջ 211–214:
111 Նույն տեղում, էջ 211:
112 Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 129:
113 Ստ. Օրբելյան, էջ 252:
114 Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Երեւան, 1976, էջ 976:

ւառացս, զի լիցի հաստատուն վիճակ ժառանգութեան սուրբ եկեղեցւոյն Նորավանից»[115]:

Այնուհետեւ Սարգիսն առանձնանում է Մելիճո վանքում: Այստեղ 1240 թ. ստանում է մի Ավետարան, որի հիշատակարանը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում[116]: Այստեղ նախ նշվում է գրչության թվականը, Կոստանդին կաթողիկոսի եւ Հեթում թագավորի, մատյանի գրիչ Գրիգորի անունները, այնուհետեւ հիշատակվում են ստացողն ու նրա ընտանիքի անդամները՝ «...յորժամ... հանդիպիք ի սմա... զստացող սուրբ Ավետարանիս զսրբասէր եպիսկոպոսն զՏէր Սարգիս եւ զհաւրն նորա զպարոն Յուսէփ եւ զմայրն՝ Խորինշահ եւ զեղբայրս նորա՝ Զաքարէ աստուածամերձ քահանայ եւ զԳրիգոր եւ զԼիպարիտ եւ զՃուճիր եւ քեռին նորա զՏէր Ստեփաննոս յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր»[117]: Հավանաբար Սարգիս Ա-ի հորն է պատկանում Նորավանքի գավթի տապանաքարերից մեկը, որի արձանագրությունն է. «Զհայր Տեառն Սարգսի զՅուսէփ յիշեցէք ի Քրիստոս»[118]: Կարեւոր է նաեւ Սարգսի մոր՝ Ստեփանոս Գ-ի քրոջ՝ Խորինշահի, ինչպես եւ եպիսկոպոսի եղբայրների անունների թվարկումը: Հատկանշական է, որ Սարգիսը չի մոռանում նշել նաեւ երախտավոր քեռուն:

Պակաս հետաքրքրական չէ հիշատակարանի շարունակությունը. «Ես, նուաստ եպիսկոպոս եւ տարաշխարհիկ եղեալս Սարգիս... աղաչեմ յիշել ի սուրբ աղաւթս ձեր զքրիստոսասպասակ թագաւորս Հեթում եւ զհայր նորա զպարոն Կոստանդին... զի յոյժ երախտաւոր են լեալ ինձ ի տունս եւ ի վանս իւրեանց բա-

---

[115] Ստ. Օրբելյան, էջ 260:

[116] Ձեռագիրը 20-րդ դ. սկզբին պահվել է Մատթեոս Աջապահյան էֆենդիի մոտ, որտեղից արտագրվել է մի ժողովածուի մեջ եւ հրատարակվել Երուսաղեմի ձեռագրացուցակում: Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, Երուսաղէմ, 1991, էջ 22:

[117] Նույն տեղում:

[118] Դիվան հայ վիմագրության, հ. Գ, էջ 234: Ս. Սաղումյան, նշվ. աշխ., էջ 95, 97:

ըերարութեամբ...»[119]*: Ապա նշելով, որ ձեռագիրը նաեւ ծաղկվել է «ի մեծ խմբարանիս Մլիճի», շարունակում է՝ «Այլ ես, յոգնամեղ ստացող սորա Տէր Սարգիս Արեւելցի, ի նահանգէ Սիսական, ի մեծահռչակ Աթոռոյ Տաթեւ կոչեցելոյ եւ տարագրեալ վասն մեղաց, ժամանեցի յայս սուրբ ուխտ եւ բազում ընդունելութիւն եւ հանգիստ գտի ի վերոյգրեալ թագաւորահաւրէն, ի մեծ պարոնէն Կոստանդէա, առաւել քան զարժանն մեր...»*[120]*: Այստեղ չափազանց հետաքրքիր է, որ Սարգիսը հանդես է գալիս որպես Տաթեւի մեծահռչակ աթոռի ներկայացուցիչ եւ «վասն մեղաց» տարագրված անձ, որը Մլիճում «հանգիստ» է գտել: Ստեփանոս Օրբելյանը, որ պատմում է Սարգսի Կիլիկիա գնալու մասին, նշում է Նորավանքի թեմական վիճակի հաստատման մասին եւ չի խորանում այլ մանրամասների մեջ: Մինչդեռ հնարավոր է, որ Սարգիսը տեւական ժամանակով Սյունիքից հեռանալու, «տարագրվելու» նաեւ այլ պատճառներ է ունեցել:*

Մլիճից հետո Սարգիսը գնում է Երուսաղեմ: Հետաքրքրական է, որ այստեղ նա խաչակիրներից գնում է Ստեփանոս Նախավկայի Աջը եւ ուղարկում Նորավանք, ուր իր հիմնած եկեղեցին հենց Նախավկայի անունն էր կրում[121]*:*

---

[119] Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, էջ 22:

[120] Նույն տեղում:

[121] Հարկ է նշել, որ Դիվան հայ վիմագրության 3-րդ հատորում Ս. Բարխուդարյանը սխալմամբ եկեղեցին անվանում է Ս. Կարապետ, որի պատճառով Նորավանքի գլխավոր եկեղեցին այդ անունով է հիշատակվում նաեւ այլ հրատարակություններում: Բանն այն է, որ Նորավանքի հնագույն եկեղեցին է Ս. Կարապետը, ինչպես Օրբելյանն է նշում՝ «...վաղ ատրրք եւ հնագոյն ամօք... էր շինեալ եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յանուն սրբոյ Կարապետին» (Ստ. Օրբելյան, էջ 253–254): Այս «կրաշաղախ վիմօք» հին եկեղեցու պատերն այժմ էլ կիսականգուն են Նորավանքի Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցու հարավային կողմում: Իսկ Սարգիս Ա-ի հիմնած եկեղեցու մասին պատմիչը հստակ նշում է՝ «Տէր Սարգիս հիմնարկեալ գեղապատճոյճ եկեղեցի ի Նորավանս... կատարէ հրաշազան յօրինուածովք յանուն սրբոյն Նախավկային» (նույն տեղում, էջ 252): Ս. Բարխուդարյանին շփոթեցրել է այս եկեղեցու հարավ-արեւմտյան ավանդատան մուտքի ճակատի հետեւյալ արձանագրությունը՝ «Այս գիր է Տեառն Սարգսի եւ սպասաւորաց Սուրբ Կարա-

Երուսաղեմում էլ Սարգիս Ա-ը նահատակվում է իր երեք ուղեկիցների հետ: Ստ. Օրբելյանը գրում է, որ երբ նրանք աղոթում էին Տիրոջ գերեզմանի վրա, «...առեալ Խորազմին զԵրուսաղէմ ի Փռանգէնե[122], սկսում են կոտորել բնակիչներին եւ գտնելով Տեր Սարգսին իր ուղեկիցների հետ, սպանում են աղոթքի վայրում:

Այստեղ, անշուշտ, սխալվում է Օրբելյան պատմիչը, քանի որ Խորազմի շահը, կամ Խորեզմ-շահը մինչեւ Երուսաղեմ չի հասել, այլ հալածվելով մոնղոլներից, 1226 թվականին մտել է Անդրկովկաս, մեծ ավերածություններ գործել, հասել մինչեւ Ամիդ: Բազմաթիվ աղբյուրների վկայությամբ նա սպանվել է 1231 թվականին՝ մոնղոլների կողմից պարտվելուց հետո Ամիդից փախչելիս[123]: Օրբելյանն իր «Պատմության» մեջ այս տեղեկությունը վերցրել է մեզ անհայտ աղբյուրից, որն օգտագործել է նաեւ իր կազմած «Ժամանակագրության», մեջ, ուր կարդում ենք. «Իսկ խորազմիքն անտէրունջ գտեալ զաշխարհս, յանխնայ կոխեաց եւ աւերեաց եւ գնաց մինչ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. եւ արեամբ քրիստոնէից ելից զսուրբ տաճարն եւ զփողոցսն, բայց ինքն, ասի սպանեալ ի Հոռոմոց յաննշան

պետիս, որ տուաք զվորանս Հասանայ Ամաղուեցոյ, որ նորա հալալ արդեամբը շինեցաւ, ի տարին Բ (2) աւր ժամ...» (Դիվան հայ վիմագրության, հ. Գ, էջ 212): Խոսքը նոր կառուցվող եկեղեցու խորանի հովանավորին պատարագ հատկացնելու մասին է, որն անում են առաջնորդը եւ վանքի միաբանները, բնականաբար՝ գործող, հնագույն Ս. Կարապետ վանքի միաբան-սպասավորները: Իսկ որ նոր եկեղեցին անվանակոչվել է Ս. Ստեփանոս Նախավկայի անունով՝ երեւում է եկեղեցու եւ գավիթի բազմաթիվ արձանագրություններից: Դրանք են Գորգի՝ 1232 թ. («...զիմ հոգոյ արդիւնք տվի ի Սուրբ Նախավկայս»), Շատլոյի՝ 1256 թ. («...եկեղեցոյս միաբանեցա... ի Սուրբ Նախավկայս»), Սմբատ Օրբելյանի՝ 1261 թ. («...եւտու յիմ հայրենացն Բ (2) գեղ ի Սուրբ Նախավկայս», «տուի ի Սուրբ Նախավկայս իմ հայրենեացն զԱզատն...»), Ամիր Ջուրջի («միաբանեցա Սուրբ Նախավկա վանից...»), Շնեհավորի («...տվի Ճ (100) դեկան ի Նախավկայ), ոմն Ալփասլանի (տվի...այգին ի Նախավկայս») արձանագրությունները (նույն տեղում, էջ 214, 217, 218, 219):

[122] Ստ. Օրբելյան, էջ 252:

[123] Հ. Մանանդյան, Երկեր, Գ., Երեւան, 1977, էջ 198–206, Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 165–167, Վրաց ժամանակագրություն, Երեւան, 1971, էջ 71, Իբն Ալ-Ասիր, Երեւան, 1981, էջ 343:

արանց»[124]: Օրբելյանը հավանաբար չփոթել է Եգիպտոսի Սալահեդդին սուլթանին Խորեզմի Ջալալեդդինի հետ: 1229 թ. խաչակիրները գրավում են Երուսաղեմը, որին մահմեդականները կրկին տիրում են 1244 թվականին: Այն, որ Սարգիս Ա-ը վախճանվել է ոչ թե 1236 թ., (որովհետեւ, ըստ Օրբելյանի աթոռակալել է 20 տարի, իսկ Նորավանքի աթոռին, ինչպես նշվեց, նստել է 1216 թվականից) այլ ավելի ուշ, ակներեւ է արդեն 1240 թվականին Մլիճում գրված հիշատակարանից: Այն, որ Սարգիսն սպանվել է 1240-ից հետո երեւում է նույն Օրբելյանի Պատմության ՀԱ գլխում բերված եպիսկոպոսների ցանկից: Այդ ցանկը հետեւյալն է. «Առաջին՝ Յովհաննէս Կապանեցին- ամս ինչ: Ստեփանոս, որդի տեառն Գրիգորի- ամս ինչ, Սարգիս-ամս 20, Ստեփանոս- ամս 20, Գրիգոր- ամս 1, Սարգիս- ամս 24, եւ ապա միապետեալ զերկոսին աթոռսն (նըստի) Ստեփաննոս (Օրբելյան) եպիսկոպոս Սիւնեաց եւ Նորավանից՝ եօթներորդ»[125]: Հայտնի է, որ Ստեփանոս Օրբելյանին Սյունյաց միավորյալ աթոռին ընտրել են 1285 թվականին եւ ապա, որպես միացյալ աթոռների գլուխ, ուղարկել են Կիլիկիա՝ ձեռնադրվելու[126]: Արդ, Սարգիս Ա-ը, ինչպես տեսանք, Ստեփանոս Գ-ին (Ֆախր էլ Մսեհ) փոխարինել է 1215–16 թվականներին: 20 տարի աթոռակալելով, ըստ Օրբելյանի, պիտի մահացած լիներ 1236 թվականին, նրան հաջորդած Ստեփանոս Դ-ը՝ եւս 20, կլինի՝ 1256, այնուհետեւ Գրիգոր՝ 1, այսինքն՝ 1257, եւ վերջապես Սարգիս՝ 24, կլինի 1281: Ինչպես տեսնում ենք, բաց է մնում շուրջ 4–5 տարի (քանի որ Ստեփանոս Օրբելյանը 1285-ին է միավորել երկու աթոռները):

---

[124] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելյանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, էջ 24:
[125] Ստ. Օրբելյան, էջ 364:
[126] Սյունիքի պատմություն, էջ 8:

Նկատենք, որ պահպանվել է Նորավանքի Ստեփանոս Դ եպիսկոպոսի տապանաքարը՝ ՉԹ (1260) թվագրությամբ[127]: Իսկ Ստեփանոսը, ըստ Օրբելյանի, աթոռակալել է 20 տարի, այսինքն՝ 1240 թվականից (1240–1260): Նույն տեղում պահպանվել է Ստեփանոսի եղբոր տապանաքարը՝ «Ի թ. ՈՂԲ (1243) Ցիշեցէք զեղբայր Տէր Ստեփանոսի զՇարաբն, որ նահատակեցաւ...»[128]: Դրանից երևում է, որ 1243-ին Ստեփանոսն արդեն եպիսկոպոս էր, ուստի Սարգիս Ա-ը պիտի մահացած լինի այս թվականից առաջ: Հավանական է, որ Սարգիսը Երուսաղեմ է մեկնել որպես ուխտավոր հենց Ավետարանը ստանալուց անմիջապես հետո՝ 1240-ին: Դրանից կարճ ժամանակ անց Երուսաղեմի համար կռիվներ են բորբոքվել մամլուքների ու խաչակիրների միջև, որոնցից մեկի ժամանակ զոհվել են Սարգսն ու նրա ուղեկիցները:

Ամփոփելով Սարգիս Ա-ի գործունեության վերաբերյալ խոսքը, կարող ենք ասել, որ հանդես գալով քաղաքական ու եկեղեցական ալեբախությունների մի ժամանակահատվածում, նա թեև սկզբնական շրջանում նպաստել է Նորավանքի շենացմանն ու վերելքին, սակայն հետագայում առանձնակի ձեռնարկություն չի ցուցաբերել: Հավանաբար փորձել է վերացնել Սյունյաց աթոռի ներքին պառակտումը, բայց հաջողության չհասնելով բավարարվել է միայն Նորավանքը որպես առանձին վիճակ վավերացնելով, այսպիսով առավել ևս խորացնելով ստեղծված բաժանումը, որը հետագայում, հատկապես Ստեփանոս Օրբելյանի օրոք, բավականին դժվարություններ ու հուզումներ տեղիք է տվել:

Մյուս կողմից, անկասկած, գնահատելի է աթոռակալման առաջին տարիներին Սարգսի ծավալած շինարարական աշխատանքը Նորավանքում, որի շնորհիվ այն բավական ծաղկուն

---

[127] Դիվան հայ վիմագրության, Գ, էջ 230:
[128] Ս. Սաղումյան, նշվ. աշխ., էջ 95:

վիճակի է հասնում, իսկ հետագայում դառնում Վայոց ձորի հոգեւոր, մշակութային, կրթական օջախներից մեկն ու Սյունյաց ընդհանուր մետրոպոլիտության աթոռանիստը:

2. Տաթեւի եւ Նորավանքի աթոռները 13-րդ դարի կեսերին

1216 թվականին, ինչպես նշվեց, Աղթամարում եպիսկոպոս էր ձեռնադրվել եւ Տաթեւում ինքնուրույն աթոռ հաստատել Տեր Հովհաննեսը՝ Ստեփանոս Գ-ի հորեղբորորդին[129], որը Սյունյաց աթոռակալների շարքում Հովհաննես անունով 8-րդ եպիսկոպոսն է: Ինչպես տեսանք, բաժանումից հետո Սարգիս Ա-ը՝ Ստեփանոս Գ-ի քրոջորդին, որպես Նորավանքի վիճակ հաստատել էր միայն Վայոց ձորի, Նախիջեւանի ու Ճահուկի թեմերը, իսկ մնացած չուրջ ինը թեմերը գտնվում էին Տաթեւի իշխանության ներքո: Տեղական հայ եւ վրաց իշխողները եւ Կոնստանդին Բարձրբերդցին վավերացրել էին այս նոր վիճակը, այսպիսով լռելյայն կերպով ընդունելով նաեւ Տաթեւի անջատված աթոռի գոյության փաստը, որով եւ բավարարվում է Հովհաննես Ը-ը եւ մեկնելով Աղթամարից, հանդես է գալիս որպես «ճանաչում գտած» աթոռի օրինական ու անկախ աթոռակալ: Սա հնարավորություն է տալիս Հովհաննեսին ձեռնամուխ լինելու երկրաշարժից ավերված Տաթեւի եկեղեցիների վերակառուցմանը: Սակայն շուտով, 1225 թվականին Ատրպատականից Հայաստան են ներխուժում Ջալալեդդինի զորքերը եւ չուրջ յոթ տարի ավերածություններ գործում[130] «...յոր տեղ եւ հասպնէր՝

---

[129] Ստ. Օրբելյան, էջ 251:
[130] Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, էջ 602:

աւերէր, գրփէր, ապականէր, ոչ խնայելով ի մարդ կամ յանասուն»[131], *ինչպես գրում է պատմիչը:*

Զալալեդդինին կրնկակոխ հետեւող մոնղոլական հորդանները նախ պարտութեան են մատնում նրան, ապա սկսում մեկը մյուսի ետեւից գրավել Հայաստանի շրջանները: 1236 թվականին գրավվում է եւ Սյունիքը[132]*: Այս ասպատակություններն ու նվաճողների հարկային ծանր քաղաքականությունը Հովհաննես եպիսկոպոսին հնարավորություն չեն տալիս ավարտելու Տաթեւի վերանորոգումները:*

Սակայն շուտով նորից բարելավվում է Սյունիքի քաղաքական վիճակը՝ շնորհիվ Սմբատ Օրբելյանի շրջահայաց ձեռնարկումների: Նա երկու անգամ՝ 1251 եւ 1256 թվականներին մեկնում է Կարակորում՝ Մանգու խանի մոտ[133]*, եւ ձեռք բերում «ինքնուական» իրավունք, նշանակվելով առանձին միավոր ճանաչված Սյունյաց նահանգի ընդհանուր տիրակալ: Այնուհետեւ Սյունիքն իր հարկերը անմիջապես պիտի մուծեր մոնղոլական արքունիքին, չենթարկվելով տեղական տարբեր իշխողների կամայականություններին: Նա կարողանում է հարկերից ազատել նաեւ եկեղեցիները: Վերադառնալով Սյունիք, Սմբատը Հովհաննեսին գտնում է ծերացած եւ ասպարեզից մի կողմ քաշված: Վերջինս վանքի վերանորոգման աշխատանքները հանձնել էր իր եղբորորդուն՝ Տեր Հայրապետին, որը եւ «Հրամանաւ կնոջ Բաչուին սկսեալ էր շինել զվանքն, եւ կայր ի նմին աղքատութեամբ. զի յայնքան ժառանգութեանցն որ լեալ էր, ոչ տուն մի անգամ ոչ կայր եկեղեցւոյն»*[134]*: Սմբատի աջակցությամբ Հովհաննես եպիսկոպոսը շարունակում է Տաթեւի վերակառուցումը*

---

[131] Ստ. Օրբելյան, էջ 292:
[132] Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, էջ 609:
[133] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 265, 471:
[134] Ստ. Օրբելյան, էջ 302:

եւ ավարտում Պետրոս-Պողոս եկեղեցու վերանորոգման աշխատանքները:

Տեր Հովհաննեսի մահվան թվականը Օրբելյանի մոտ հստակ չէ: Մի տեղ գրում է. «Տեր Յովհաննէս կացեալ ամս 38՝ վախճանի ի Նորավանս»[135], իսկ այնուհետեւ՝ «...եւ դնի ի գաւթի նորակերտ եկեղեցւոյն յ700 (1251) թուականին»[136]: Եթե Հովհաննեսը մահացել է 1251 թվականին 38 տարի աթոռակալելուց հետո, ապա աթոռակալել է 1213-ին, երբ դեռ կենդանի էր Ստեփանոս Գ-ը, որն, ինչպես տեսանք, մահացել է 1216 թվականին, իսկ Տաթեւի բաժանումը տեղի է ունեցել նրա մահից հետո, Սարգիս Ա-ի ժամանակ: Այնուհետեւ, մի այլ տեղ, խոսելով խանի մոտից Սմբատի վերադարձի մասին, նշում է. «...ծերացեալ էր եպիսկոպոսն տէր Յովհաննէս»[137]: Արդ, Սմբատ Օրբելյանն առաջին անգամ մոնղոլ խանի մոտ եղել է 1251, իսկ երկրորդ անգամ՝ 1256 թվականին[138]: Եթե ընդունելու լինենք, որ վերեւում մեջբերված տողը վերաբերում է նույնիսկ առաջին այցելությունից հետո Սմբատի վերադարձին, ապա Սմբատը Սյունիք է վերադարձել երեք տարի հետո, ինչպես եւ գրում է պատմիչը. «...եւ յամեաց զամս երեք»[139]: Այսինքն, նա Սյունիք է հասել առնվազն 1254 թվականին:

Հովհաննես Ը-ի մահվան թվականը ճշտելու համար փորձենք հետադարձ հաշվարկ կատարել: Օրբելյանն իր «Պատմությունը» գրել է 1299 թվականին[140]: Այդ ժամանակ Տաթեւի եպիսկոպոսն էր Տեր Հովհաննես Թ-ը՝ աթոռակալած 3 տարի, այսինքն՝ 1297–1299 թվականներին, նրանից առաջ Տեր Հայրա-

---

[135] Նույն տեղում, էջ 252 (Ա. Աբրահամյանը Նորավանքի փոխարեն դրել է Տաթեւ. միանգամայն բնական տրամաբանությամբ: Տե՛ս Սյունիքի պատմություն, էջ 285):
[136] Նույն տեղում:
[137] Նույն տեղում, էջ 302:
[138] Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ., էջ 977:
[139] Ստ. Օրբելյան, էջ 300:
[140] Նույն տեղում, էջ 370:

պետն ու Տեր Սողոմոնը միասին աթոռակալել էին 43 տարի, այսինքն՝ 1254–1297 թվականներին: Այս հաշվարկը գալիս է հաստատելու, որ Տաթևի եպիսկոպոս Հովհաննես Ը-ը 1216 թվականից սկսած աթոռակալել է 38 տարի եւ մահացել Սմբատի՝ Կարակորումից վերադառնալուց հետո՝ 1254 թվականին: Նրան հաջորդում է Տեր Հայրապետը կամ Հայրապետ Ա-ը:

Իսկ Նորավանքում այդ ժամանակ աթոռակալել են Ստեփանոս Դ-ը՝ 20 տարի, եւ Գրիգոր Զ-ը՝ 1 տարի, որոնց գործունեության մասին, դժբախտաբար, քիչ բան է պահպանվել: Սրանց աթոռակալման թվականներին անդրադարձանք վերեւում: Ստեփանոս Դ-ի մասին Ստ. Օրբելյանը հայտնում է, որ նա Սարգիս Ա-ի քրոջ որդին էր[141]*: Իսկ նրա գործունեության մասին գրում է. «Եւ յաջորդէ ի տեղին (Սարգիս Ա-ի) տէր Ստեփանոս, որ եւ սա գնացեալ առ մեծ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին՝ վերստին հաստատէ զայն ուխտ յաթոռ եպիսկոպոսաց եւ զթէմն զոր ունէր՝ զՎայոց ձոր բոլոր եւ զնախջաւան եւ զՃահուկ գաւառովն. եւ առնու շրջաբերական թուղթ, յորում եւ էր ահագին նզովիւք փակեալ եւ ամրացուցեալ, զի զկնի ժամանակաց մի՛ ոք իշխեսցէ խախտել»*[142]*:*

Նորավանքը որպես առանձին աթոռ վերահաստատելու այս փաստը գալիս է ասելու, որ հակամարտությունն ու անհանդուրժողականությունը երկու աթոռների միջեւ առավել սուր բնույթ էր կրել:

Ստեփանոս Դ-ի հաջորդ Տեր Գրիգորի անունը միայն մի անգամ է հիշվում Նորավանքի մի նվիրատվական արձանագրության մեջ՝ որպես առաջնորդի[143]*:*

Հավանաբար ժամանակի քաղաքական իրավիճակը թույլ չի տվել այս երկու եպիսկոպոսներին որեւէ քիչ թե շատ աչքի

---

[141] Նույն տեղում, էջ 253:
[142] Նույն տեղում, էջ 264-265:
[143] Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 219:

ընկնող դեր կատարել: Գրիգոր Զ-ին հաջորդած Սարգիս Բ-ի մասին արդեն տեղեկություններ շատ կան, որոնց եւ կանդրադառնանք հանգամանորեն: Նրա ծագման մասին Ստ. Օրբելյանը գրում է. «Տէր Սարգիս՝ եղբօրորդի տեառն Ստեփաննոսի եւ որդի Վահրամայ ճգնաւորի»[144]: Ժամանակը նկատի ունենալով կարող ենք ասել, որ այստեղ խոսքը Ստեփանոս Դ-ի մասին է, իսկ Սարգսի հոր՝ Վահրամ Ճգնավորի տապանաքարը գտնվում է Նորավանքի գավթի մուտքի դիմաց, հատկանշական արձանագրությամբ՝ «Վարհամ ճգնաորն է՝ տիրահայր (յիշեցէք)»[145]: Սարգիս Բ-ը ժամանակակից է Ստ. Օրբելյանին, որն ականատես է եղել նրա եռանդուն գործունեությանը եւ մեծ գովեստով է պատմում այդ մասին. «Տէր Սարգիս... այր իմաստուն եւ արդիւնաւոր եւ վարդապետ ընտիր եւ բազմաշխատ, որ եւ բազում արար արդիւնս ի տանս ի գործս երեւելիս, եւ զարդարեաց զեկեղեցին պատուական սպասուք եւ առաւել հանդիսացոյց զգեբափառ սուրբ մենաստանն քան զնախնիսն իւր»[146]:

Սմբատ Օրբելյանի շնորհիվ Սյունիքում ստեղծված նպաստավոր իրավիճակը զուգադիպում է Սարգիս Բ-ի աթոռակալության ժամանակին: Աթոռակալման առաջին տարիներից սկսած Նորավանքի եկեղեցուն բազմաթիվ նվիրատվություններ են կատարվում (գյուղեր, այգիներ եւ այլն): Սակայն շուտով Սյունյաց թեմը կանգնում է մի նոր պառակտման փաստի առաջ:

Ձնայած Տաթեւի ու Նորավանքի ինքնուրույն վիճակին, այս աթոռները հարկ եղած դեպքում հանդես են եկել միասնա-

---

[144] Ստ. Օրբելյան, էջ 253:

[145] Ս. Սաղումյան, նշվ. աշխ., էջ 96, 99: Արձանագրողը «տիրահայր» ասելով նկատի է ունեցել Վահրամի՝ Սարգիս Բ-ի հայրը լինելու հանգամանքը: Արձանագրության հրատարակիչն այն համարում է «մեր վիմագրերում թերեւս ամենախոշոր-պատառը», քանի որ տառերի բարձրությունը 34 սմ է:

[146] Ստ. Օրբելյան, էջ 253:

բար, ինչպես որ դա տեղի ունեցավ Երնջակում նոր եպիսկոպոսություն հիմնելու փորձի ժամանակ:

Սյունիքում Օրբելյաններից բացի աղդեցիկ էին նաև Խաղբակյան (Պռոշյան) իշխանները, որոնք փորձում են դերակատարություն ստանձնել նաև եկեղեցական ասպարեզում: Պռոշ Խաղբակյան իշխանը փորձում է իր իշխանության ներքո գտնվող գյուղերն ու եկեղեցիները անջատել Սյունիքի աթոռներից եւ ստեղծել առանձին եպիսկոպոսություն: Այս նպատակով նա Երնջակ գավառից Հովհաննես անունով մի հոգեւորականի ուղարկում է Կոստանդին Բարձրբերդցու մոտ՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: Բարձրբերդցին, առանց տեղյակ լինելու Պռոշ իշխանի ու Հովհաննեսի նպատակներին, վերջինիս եպիսկոպոս է ձեռնադրում եւ ուղարկում Սյունիք: Հովհաննեսը հաստատվում է Երնջակում եւ աշխատում առանձին թեմ ստեղծել, պատճառաբանելով, «եթէ եւ այս աթոռ է եպիսկոպոսաց, զի գոն աստ գերեզմանք հայրապետաց, որք էին պատահմամբ եկեալ վասն ամրութեան բերդին ի ժամանակս եպիսկոպոսացն Սիւնեաց եւ անդ վախճանեալ: Եւ ի թիկունս արարեալ յայլազգեացն հազարապետ մի՝ բռնաբար յափշտակեաց զԵրնջիկ գաւառ»[147]:

Սակայն Սմբատի եղբոր՝ Տարսայիճ Օրբելյանի կարգադրությամբ Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսն ու Տաթեւից Հովհաննես եպիսկոպոսը[148] ճանապարհվում են Կիլիկիա: Մինչ նրանք տեղ կհասնեին, 1267 թվականին արդեն մահացել էր Կոստանդին Բարձրբերդցին, եւ նրան փոխարինել էր Հակոբ

---

[147] Նույն տեղում, էջ 268:

[148] Այս Հովհաննեսին չպետք է շփոթել Հովհաննես Ը-ի հետ, որովհետեւ նրա աթոռակալման ժամանակամիջոցը չի համապատասխանում Հակոբ կաթողիկոսի գահակալման տարիներին: Սա կամ Հովհաննես Թ-ն է, որն այդ ժամանակ դեռ հանդես էր գալիս որպես փոխանորդ եւ կամ էլ Տաթեւի թեմերից որեւէ մեկի եպիսկոպոսը, ինչպես ենթադրում է Ա. Աբրահամյանը (տե՛ս Սյունիքի պատմություն, էջ 505):

Ա Կլայեցին (1268–1286): Վերջինս, լսելով կատարվածի մասին, «Հրամայէ գրել թուղթ եւ ահագին նզովիւք կտրէ ի կենաց զեղկելին Յովհաննէս որ յԵրնջակի. եւ Հրահոսան անիծիւք փակէ մի՛ եւս համարձակիլ ումեք ի հերքումն այնր վիճակին»[149]: Կաթողիկոսը նաեւ մեղադրական թուղթ է գրում Պռոշ իշխանին, սպառնալով խոտոր ճանապարհից ետ չկանգնելու դեպքում նրան նույնպես նզովել:

Վերցնելով Հակոբ Կլայեցու այս գրությունները, երկու աթոռակալները շտապում են Սյունիք եւ նախ ներկայանում են Պռոշին, որը, նկատելով գործի այսպիսի ընթացքը, ստիպված հրաժարվում է իր մտքից եւ երդմնադիր է տալիս, որ այլեւս նման բան չի խորհի: Այնուհետեւ Սարգիսն ու Հովհաննեսը շտապում են Երնջակ, ուր եւ բռնելով ապստամբ աթոռակալին, ցույց են տալիս նզովքի թուղթը, նրան մերկացնում եպիսկոպոսական ու քահանայական հանդերձանքից եւ որպես նզովվածի՝ վտարում եկեղեցուց: Երնջակի բաժանումը տեւել է առնվազն 6 տարի, քանի որ Հովհաննեսը Բարձրբերդցուց պիտի ձեռնադրված լինի ամենաուշը 1267 թվականին, եւ գահընկեց է արվել Տարսայիճ Օրբելյանի պահանջով, որը Սմբատ Օրբելյանին փոխարինել է 1273 թվականին:

Հարկ է նշել, որ չնայած Երնջակի աթոռի հաստատման ձախողմանը, Պռոշյանները եկեղեցական ասպարեզում Օրբելյանների հետ մրցակցության յուրօրինակ քայլ են անում 13-րդ դարի վերջերին: Նրանք բնակության վայր՝ վանք են հատկացնում եւ ուսումնակրթական գործունեության պայմաններ ստեղծում Քաջբերունիքից եկած բարունապետ Ներսես Մշեցու համար: Վայոց ձորի Աղբերց վանքում հաստատված Պռոշյանների հովանավորած այդ դպրոցը շուտով մեծ հռչակ ձեռք բերեց եւ համահայկական նշանակություն ստացավ Գլաձորի հա-

---

[149] Ստ. Օրբելյան, էջ 268–269:

մալսարան անունով[150]: Ժամանակի ընթացքում Օրբելյանները նույնպես նպաստեցին համալսարանի գործունեությանը, որն ի վերջո փոխադրվեց նրանց հովանավորության ներքո գտնվող Հերմոնի վանք:

3. Սյունյաց աթոռը մինչեւ Ստեփանոս Օրբելյանի գահակալությունը

Սարգիս Բ-ի առաջին շինարարական աշխատանքը 1261 թվականին Նորավանքի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու գավթի կառուցումն էր Սմբատ Օրբելյանի օժանդակությամբ: Երնջակի Հովհաննես եպիսկոպոսի հետ կապված միջադեպից հետո Սարգիս Բ-ը նոր թափով ձեռնամուխ է լինում շինարարական աշխատանքներին: 1273–1290 թթ. ժամանակամիջոցում նա կառուցում է Նորավանքի հյուրատունը, որի կարիքները հոգալու համար ինքն էլ կատարում է նվիրատվություններ. «որ զայսոց մուտքն ի հիւրերին պէտքն անցանեն, որ աւտարքն եւ կարաւտեալքն ուտեն. պարոնացն եւ երախտաւորացն աղաւթք եւ Աստուած ողորմեա ասեն»[151]:

Հաջորդ կարեւոր շինարարությունը լինում է Նորավանքում Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցու հյուսիսային կողմում Սմբատի դամբարանի (Ս. Գրիգոր եկեղեցի) կառուցումը 1275 թվականին, Սիրանես ճարտարապետի կողմից: Սմբատի դամբարանը կառուցվում է Տարսայիճի պատվերով՝ իր եղբոր՝ Սմբատի գերեզմանի վրա, ուր հետագայում թաղվում է եւ ինքը՝ Տարսայիճ Օրբելյանը: Սարգիս Բ-ի կարեւոր ձեռնարկումներից է լինում նաեւ Արփա գետի վրա կամուրջի կառուցումը, որի մասին Ստ. Օրբելյանը պատմում է հիացական խոսքերով.

---

[150] Ա. Աբրահամյան, Գլաձորի համալսարանը, Երեւան, 1983, էջ 22–23:
[151] Դիվան հայ վիմագրության, Գ, էջ 246:

«Այս տէր Սարգիս, որպէս յառաջն ասացաք, բազում արդիւնս ցուցեալ ի Նորավանս՝ եւս առաւել արար գործ մի երեւելի, զի ի գիւղն Առփայ ի վերայ գետոյն կանգնեաց կամուրջ զարմանալի տաշածոյ վիմօք՝ յոյժ բարձր եւ ընդարձակ եւ լայն, հիացուցիչ տեսողաց, բազում ծախիւք եւ անչափ աշխատութեամբ»[152]:

Սարգիս Բ-ը մահացել է 1298 թվականին եւ թաղվել Նորավանքում, ուր եւ մինչեւ այժմ մնում է նրա տապանաքարը[153]:

Այժմ անդրադառնանք Տաթեւի բաժանված աթոռին, շարունակենք այդ աթոռի պատմությունը մինչեւ Ստեփանոս Օրբելյան:

1254 թվականին Հովհաննես Ը-ին հաջորդում է նրա եղբորորդին՝ Հայրապետ Ա-ը, որը աթոռակալ էր նշանակվել դեռեւս Հովհաննեսի կենդանության օրոք եւ ջանադրաբար օգնում էր իր ծերացած հորեղբորը՝ Տաթեւի վերանորոգման աշխատանքները կատարելու[154]:

Հովհաննեսի մահից հետո Հայրապետը Սմբատ եւ Տարսայիճ Օրբելյանների աջակցությամբ կարողանում է ավարտել Պետրոս-Պողոս եկեղեցու խարխլված պատերի վերանորոգումը: Այս կարեւոր շինարարության ավարտման մասին որեւէ արձանագրություն չի պահպանվել: Օրբելյանն այս մասին գրում է հետեւյալը. «Իսկ Տաթեւացիքն շինեցին զվանքն, որ ի բազում (ամաց հետէ) աւերեալ եւ ամայի մնացեալ էր եւ փարթամացուցին ամենայն պիտոյիւքն մեծ եւ փառաւորեալ իշխանաց իշխանացն Սմբատ եւ Տարսայիճ»[155]: Միայն 1274 թվականին Տարսայիճ Օրբելյանի կողմից նույն եկեղեցու պատին փորագրված նվիրատվական արձանագրությունից կարելի է եզրակացնել, որ այդ ժամանակ եկեղեցու վերանորոգումը արդեն ավարտվել

---

[152] Ստ. Օրբելյան, էջ 313–314:
[153] Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 231:
[154] Ստ. Օրբելյան, էջ 253:
[155] Նույն տեղում:

էր[156]: Եկեղեցու վերանորոգման ժամանակ, ի դեպ, հայտնաբերվում է փլատակների տակ ծածկված մի դաղտնարանի մուտքը, որտեղից ի հայտ են գալիս «մթերս անհուն սրբութեանց եւ նշխարաց առաքելական, հայրապետական եւ մարտիրոսական, յորում կայր եւ աստուածընկալ խաչն Բարգենեան»[157]:

Հայրապետ Ա-ի կարեւոր ձեռնարկումներից է լինում Տաթեւում կրթական գործի կազմակերպումը: Հավանաբար նույն Հայրապետ եպիսկոպոսն էր այնտեղ դասավանդող ուսուցիչներից մեկը, որի մոտ եւ սովորելու է ուղարկվում Ստեփանոս Օրբելյանը: Այն, որ այդ ժամանակ Տաթեւում դպրոց է գոյություն ունեցել, որոշակիորեն երեւում է Ստ. Օրբելյանի հետեւյալ տողերից. «իսկ հոգեւոր ծննդեամբ սուրբ աւազանին որդիացեալ տեառն Հայրապետի՝ եպիսկոպոսի Սիւնեաց. սնեալ եւ ուսեալ առ ոտս աստուածարեալ արանց. կրթեալ ի հրահանգս ընթերցման եւ երաժշտութեան՝ եղէ փսաղտ եւ անագանոս ի դաւիթս Տեառն, կոչեցայ ի դպրութիւն եւ ի սարկաւագութիւն Աստուծոյ»[158]: Օրբելյանը Տաթեւի դպրոցի մասին երկրորդում է իր տեղեկությունը՝ դրելով. «Բայց Սմբատ անդաւակ գոլով՝ առեալ զմի յորդւոց եղբօրն Տարսայիճին եւ որդիացուցեալ ինքեան՝տայ յուսումն գրոց եւ ի հրահանգս քահանայութեան»[159]:

Օրբելյանի այս երկու հիշատակությունները լրացնում են միմյանց: Եթե առաջինում հայտնում է, որ ինքը հանձնարարվել է Հայրապետի խնամքին եւ տարիներ հետո հոգեւոր կոչումներ ստացել, ապա երկրորդում հայտնում է, որ իր հորեղբայրը՝ Սմբատը, իրեն տալիս է «յուսումն գրոց»: Դժբախտաբար, ուրիշ հիշատակություն չունենք այդ ժամանակ Տաթեւի դպրոցի վեսբերյալ, սակայն Ստ. Օրբելյանի այս վկայությունը

---

[156] Մ. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Բ, Երեւան, 1960, էջ 15-16:
[157] Ստ. Օրբելյան, էջ 318:
[158] Նույն տեղում, էջ 349:
[159] Նույն տեղում, էջ 307:

ները թույլ են տալիս վստահորեն ասելու, որ Սյունիքում Սմբատ Օրբելյանի ձեռք բերած քաղաքական բարենպաստ վիճակը նպաստել է այստեղ կրոնական ու մշակութային նոր վերազարթոնքին: Այն փաստը, որ Տաթեւում մինչ Սմբատ իշխանի մահը՝ 1273 թվականը[160], տեղի Հայրապետ եպիսկոպոսի գլխավորությամբ գործել է դպրոց եւ Օրբելյանն այդտեղ սովորել է մատենագրություն, կրոնական գրականություն եւ երաժշտություն[161], վկայում են այդ դպրոցի բարձր մակարդակի մասին:

Տեր Հայրապետի ժամանակ Տաթեւի աթոռին հիշվում է եւ մի այլ եպիսկոպոս՝ Տեր Սողոմոն անունով, որի մասին Օրբելյանը երկու թռուցիկ տեղեկություն ունի. «Եւ առնու զաթոռն եղբօրորդի նորին տէր Հայրապետ եւ միւս ազգականն տէր Սողոմոն», «Իսկ Տաթեւացիքն չինեցին զվանքն եւ ինքեանք կեցեալ ի միասին՝ նախ վախճանի տէր Սողոմոն անդէն, եւ ապա տէր Հայրապետ»[162]:

Տաթեւում երկու եպիսկոպոսների միաժամանակյա աթոռակալությունը, ինչպես արդեն նկատեցինք, բնական երեւույթ էր դարձել: Այդ երկու եպիսկոպոսներից մեկը հանդես էր գալիս առաջնորդի, իսկ մյուսը՝ փոխանորդի դերում: Վերջինս սովորաբար հաջորդ առաջնորդն էր դառնում:

Սողոմոն եպիսկոպոսի անվանը մի անգամ եւս հանդիպում ենք Օրբելյանի նշած Տաթեւի եպիսկոպոսների ցուցակում, ուր հիշվում է եւ Սողոմոնը՝ Հայրապետի հետ միասին աթոռակալած 20 տարի[163]:

Ավարտելով Տաթեւի Պետրոս-Պողոս եկեղեցու վերանորոգումը, Հայրապետ Ա-ը «յետ բազում աւուրց ծերական ալեօք

---

[160] Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 115:
[161] Սյունիքի պատմություն, էջ 7:
[162] Նույն տեղում, էջ 252 253:
[163] Սյունիքի պատմություն, էջ 386:

եպիսկոպոսն բարեբարոյ՝ տէր Հայրապետ, յաղթեալ ի սիրոյ Տեառն իւրոյ՝ գնաց ի տեսութիւն աստուածակոխ տեղացն Երուսաղէմի»[164]: Ուխտագնացությունն ավարտելուց հետո, սակայն, Հայրապետը ոչ թե անմիջապես վերադառնում է Տաթեւ, այլ նախ այցելում է Կիլիկիա՝ Լեւոն Գ թագավորին (1270–1289): Օրմանյանն այս այցելությունը դնում է 1282 թվականին, հայ-եգիպտական հաշտությունից հետո, երբ այնուհետեւ Լեւոն Գ-ը իր հայացքն ուղղում է Հայաստան եւ աշխատում կապեր ստեղծել Հայաստանում դոյություն ունեցող իշխանությունների, հատկապես դրանցից ամենահզորի՝ Սյունիքի իշխանության հետ, հեռավոր նպատակ ունենալով Կիլիկիայի թագավորությունը Հայաստանի վրա եւս տարածելու համար, հատկապես որ մոնղոլական պետության ներսում այդ ժամանակ ծայր էին առել ներքին ընդհարումներ[165]: Հավանաբար, Հայրապետ Ա-ը տեղյակ էր Լեւոնի այս մտադրությանը եւ այս պատճառով էլ ուղեւորվում է Կիլիկիա:

Լեւոնը Տաթեւի ուխտին է ընծայում «զդեստ սեղանոյն յարքունական մետաքսից զբիւզանդացին, որ ի Յունաց ճարտարացն աննման կիտուածօք, եւ խաչ պատուական ի սպիտակափայլ եւ սառնատեսակ քարանց համակ կերպացեալ եւ պնդեալ յոսկում, եւ սկիհ պատուականք ի զուտ արծաթոյ եւ այլ բազում պարգեւս»[166]: Լեւոն Գ-ը նաեւ չափածո մի հիշատակարանով հայտնում է Տաթեւի ուխտին իր միաբանվելու մասին եւ Հայրապետի հետ ուղարկում Սյունիք: Այդ չափածո դրվածքում թագավորն իր այս քայլի նպատակն արտահայտել է հետեւյալ սեղմ ու բազմիմաստ տողով. «Որպէս զի հաղորդ եղէց ի նմանէ ամենից որ աստ բարութեան»[167]:

---

[164] Ստ. Օրբելյան, էջ 318:
[165] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., Բ, էջ 1690:
[166] Ստ. Օրբելյան, էջ 318:
[167] Նույն տեղում:

Վերադառնալով Տաթեւ, Հայրապետը Զատկի հարության բոլոր պատարագները կարգում է որպես «յիշատակ նմա (Լեւոն Գ-ի, ծ.հ.), որ կատարեն զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան մինչ ի վախճան»[168]:

Տեր Հայրապետի բացակայության ժամանակ Տաթեւի աթոռն ղեկավարում էր Տեր Սողոմոնը, սակայն Կիլիկիայից Հայրապետի վերադառնալուց հետո Սողոմոնի փոխարեն հիշվում է Հովհաննես եպիսկոպոսը: Պետք է ենթադրել, որ այդ ընթացքում Սողոմոնը մահացել էր՝ 20 տարի փոխանորդի պաշտոն վարելով, եւ նրան այդ գործում փոխարինել էր Հովհաննեսը, որը Հայրապետի մահից հետո նշանակվում է հաջորդ աթոռակալ: Այս Հովհաննեսը ընդունված է որպես Հովհաննես Թ:

Հայրապետ Ա-ի մահվան տարին Ա. Աբրահամյանը համարում է 1292 թվականը[169], որը, սակայն, ճիշտ չէ: Նախ, վերեւում արդեն ցույց տվեցինք Սյունյաց աթոռների աթոռակալների գործունեության թվականները: Այն, որ Հայրապետը չի մահացել 1292 թվականին, երեւում է Տեր Հովհաննեսի թողած հետեւյալ արձանագրությունից. «Յամի յորում էր թվ. ՉԽԳ (1294) ես Տէր Յոհանէս կամաւն Աստուծոյ եւ աղաւթիւք հոգեւոր հաւր իմո Տէր Հայրապետա տարա զՋուրս Վարարական ի Վարդուտն»[170]: Ինչպես տեսնում ենք, 1294 թվականին Հայրապետը դեռեւս կենդանի էր (քանի որ մահացածի համար չէր ասվի. «աղաւթիւք հոգեւոր հաւր իմո...»): Օրբելյանն իր աշխատությունն ավարտել է 1299 թվականին եւ գրում է, որ այդ ժամանակ Հովհաննեսը աթոռակալել է երեք տարի, ուստի նրա նախորդ Հայրապետը մահացել է դրանից երեք տարի առաջ՝ 1296 թվականին:

---

[168] Նույն տեղում, էջ 319:
[169] Սյունիքի պատմություն, էջ 495:
[170] Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 78:

Այս բոլորով հանդերձ, պիտի նշենք նաեւ Հայրապետի ցույց տված ընդդիմությունը Ստ. Օրբելյանին՝ Սյունյաց երկու աթոռները հոգեւոր մեկ իշխանության ներքո միավորելու դործում:

Հայրապետին հաջորդած Հովհաննես Թ-ը է՛լ ավելի թշնամական դիրք է բռնում Ստեփանոս Օրբելյանի նպատակների հանդեպ: Ինչպես երեւում է, սա բավական նեղություններ է պատճառել Օրբելյանին: Այսպես մտածելու պատճառն այն է, որ Հովհաննես Թ-ի մասին պատմիչը դրեթե ոչինչ չի ասում, այլ միայն մի քանի տեղ տալիս է նրա անունը, իսկ մահվան մասին խոսելիս, հակիրճ ձեւով գրում է. «Եւ զի առ կենօք սորին (Հայրապետի, ծ. հ.) էր ձեռնադրեալ եղբօրորդի նորա՝ Յովհաննէս անուն, յետ սորա կեցեալ բաղում հակառակութեամբ ամս երեք՝ վախճանի եւ դնի ընդ հօրեղբօր իւրում տէր Հայրապետի»[171]:

Տաթեւի աթոռակալ Հովհաննես Թ-ի մահվամբ (1299) եւ Նորավանքի Սարգիս Բ-ի աթոռակալությամբ ավարտվում է Տեր Բարսեղից (1143–1148) ու նրա եղբայր Գրիգոր Մեղրեցուց սկսվող Սյունյաց եպիսկոպոսների տոհմաճյուղը, որի ներկայացուցիչներն էին Նորավանքում Ստեփանոս Գ Ցախր էլ Մսեհը, Սարգիս Ա, Ստեփանոս Դ եպիսկոպոսները, Տաթեւում՝ Հովհաննես Ը, Հայրապետ Ա, Հովհաննես Թ եպիսկոպոսները:

Սյունիքի միացյալ աթոռների վրա Ստեփանոս Օրբելյանի մետրոպոլիտ նշանակվելուց հետո Տաթեւի ու Նորավանքի միջեւ գժտությունները աստիճանաբար դադարում են: Օրբելյանից սկսած, երբ այդ երկու աթոռների եպիսկոպոսները հանդես են գալիս Սյունիքի մետրոպոլիտի ընդհանուր իշխանության ներքո, նրանք աստիճանաբար դրավում են երկրորդական տեղ:

---

[171] Ստ. Օրբելյան, էջ 253:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ

1. Ստեփանոս Օրբելյանի աթոռակալությունը

Ինչպես վերը նշեցինք, Սյունյաց աթոռի երկփեղկումը տեղի ունեցավ Ստեփանոս Գ Ցախը էլ Մսեհի մահից հետո, 1216 թվականին՝ Նորավանք եւ Տաթեւ կենտրոններով: Այս վիճակը տեւեց շուրջ 70 տարի, մինչեւ որ Ստեփանոս Օրբելյանը եկավ միավորելու աթոռը, այն բարձրացնելու իր նախկին դիրքին ու նշանակությանը: Ստեփանոս Օրբելյանի աթոռակալությամբ Սյունյաց աթոռի համար սկսում է ծաղկման մի նոր շրջան:

Սյունյաց իշխանական գահին Օրբելյան Ելիկումի որդի Լիպարիտին փոխարինում է որդին՝ Սմբատը, որը անզավակ լինելով, որդեգրում է Ստեփանոս Օրբելյանին՝ իր եղբոր՝ Տարսայիճի որդուն: Իսկ 1273 թ. մահացած Սմբատին հաջորդում է Տարսայիճը, որի քրիստոնեությունն ընդունած այլազգի առաջին կնոջից է ծնվել Ստեփանոսը:

Տարսայիճի եռանդուն գործունեության շնորհիվ նախկինի համեմատ ընդարձակվում են Օրբելյանների տիրույթները, եւ այս իշխանական տունը հասնում է իր հզորության գագաթնակետին: Տարսայիճն իր զորքով մոնղոլական բանակների կազմում «մեծամեծ քաջութիւնս եւ անպարտելի զաւրութիւնս ցուցանէր՝ ի Խորասան, ի Շամ, ի Հոռոմս, ի Համս եւ ի Համայ, ընդ Մարացւոյն եւ ի Դարբանդ, ինն անգամ վանեալ անձամբ զպատերազմ եւ մղեալ մարտս»[172]:

---

[172] Ստ. Օրբելյան, էջ 310:

Օրբելյանի ծննդյան թվականը հայտնի չէ: Ուսումնասիրողները տարբեր ենթադրություններ են կատարել: Հավանական է թվում Գ. Մ. Գրիգորյանի տեսակետը, որի համաձայն՝ Ստեփանոս Օրբելյանը ծնվել է 1240-ական թվականներին[173]*:*

Ստեփանոսը նախ սովորում է Տաթեւում՝ Հայրապետ եպիսկոպոսի մոտ, ուր «անեալ եւ ուսեալ առ ոտս աստուածաբեալ արանց»[174]*: Այնուհետեւ Նորավանքում ձեռնադրվում է կուսակրոն քահանա, որի առթիվ նրա հայրը՝ Տարսայիճը, «արար ժողով բազում եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ վանականաց աշխարհախումբ հանդիսիւ ի դերապառ ուխտին Նորավանից եւ ետ ձեռնադրել զորդի իւր՝ Ստեփանոս, ի քահանայութիւն յ729 (=1280) թուականին»*[175]*: Այդ ժամանակ (1282–1284 թթ.) Գլաձորում համալսարան էր հիմնել և այդտեղ էր հաստատվել Ներսես Մշեցին՝ միջնադարի մեր խոշորագույն բաբունապետը, ուր եւ դիմում է Ստեփանոսը՝ կատարելագործվելու:*

Գլաձորում նա սովորում է մի քանի տարի եւ Ներսես Մշեցուց վարդապետական դավազան ստանալուց հետո, 1285 թվականին ուղարկվում է Կիլիկիա՝ Հակոբ կաթողիկոսի մոտ, եպիսկոպոս ձեռնադրվելու եւ նշանակվելու որպես Սյունյաց երկու աթոռների՝ Տաթեւի ու Նորավանքի ընդհանուր մետրոպոլիտ[176]*, եւ ոչ թե Տաթեւի մահացած առաջնորդի փոխարեն, ինչպես գրում է Չամչյանը*[177]*, քանի որ իր վերադարձից հետո դեռեւս կենդանի էր Տեր Հայրապետը. «մինչ ի վախճան ինքեանց երկոցունցն՝ տէր Հայրապետին եւ տէր Յովհաննիսին, ոչ դադարեց խազմն եւ խռովութիւնն»*[178]*:*

---

[173] Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 194:
[174] Ստ. Օրբելյան, էջ 310:
[175] Նույն տեղում, էջ 349:
[176] Նույն տեղում, էջ 350:
[177] Մ. Չամչյան, Հայոց պատմութիւն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 283:
[178] Ստ. Օրբելյան, էջ 314:

Սակայն մինչ Ստեփանոսը Կիլիկիա կհասներ, 1286 թվականին վախճանվում է Հակոբ Ա Կլայեցին: Այստեղ Օրբելյանը հանդիպում է Լեւոն Գ թագավորին, եւ հետագայում գրում՝ «...հանդիպեալ թագաւորին՝ գտաք պատիւ ի նմանէ ի վեր քան զարժանն մեր»[179]: Լեւոն Գ-ը առաջարկում է Ստեփանոս Օրբելյանին զբաղեցնել կաթողիկոսական թափուր գահը, այս ձեւով նպատակ ունենալով թե՛ սիրաշահել արեւելյան վարդապետներին, թե՛ սերտ կապեր ունենալ մոնղոլների մոտ մեծ դիրքի հասած եւ օրավուր հզորացող Սյունյաց Օրբելյանների հետ: Լեւոն Գ-ի այս առաջարկի մյուս, կարեւոր պատճառը, սակայն, Հակոբ կաթողիկոսի մահից հետո նոր կաթողիկոս ընտրելու համար ծայր առած վեճերն ու բախումները վերացնելն էր, որն ուներ նաեւ իր քաղաքական պատճառներն ու հետեւանքները:

Հակոբ Ա Կլայեցու մահից հետո կային երկու ընտրելիներ՝ Գրիգոր Անավարզեցին՝ լատինասերների կողմից, եւ Կոնստանդին Կատուկեցին՝ Հայ Եկեղեցու ավանդապահության ջատագովների կողմից: «Լեւոն թագաւոր հաշտարար ընթացք մը կը բռնէր միշտ»[180], գրում է Օրմանյան սրբազանը: Օրբելյանը, սակայն, հրաժարվում է այդ առաջարկն ընդունելուց, նկատի ունենալով իր առաքելության նպատակը: Տաթեւյան եւ Գլաձորյան շնչով կրթված ու դաստիարակված հայրենասեր իշխանազունը, որ տարիներ հետո պիտի գրեր. «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել եւ ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել»[181], դժվար թե կարողանար իր համար օտար մի շրջապատում հաշտվել լատինամոլությամբ տարված արքունիքի, հոգեւորականության ու իշխանավորների մեծ մասի հետ:

Երկար վեճերից հետո կաթողիկոս է դառնում Կոնստանդին Բ Կատուկեցին (1286–1289): Նրա առաջին գործերից մեկն է լի-

---

[179] Ստ. Օրբելյան, էջ 350: Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, էջ 734:
[180] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1697:
[181] Ստ. Օրբելյան, էջ 336:

նում նույն թվականի Զատկի տոնին Ստեփանոս Օրբելյանին ձեռնադրել «մետրապոլիտ մեծ աթոռոյն Սիւնեաց ի վերայ այլոց եպիսկոպոսացն, որք կային աստ եւ անդ ոմանք ի Վայոց ձոր եւ ոմանք ի Տաթեւ»[182]:

Հետաքրքրական է Օրբելյանի մետրոպոլիտական ձեռնադրության նկարագրությունը. «զգեցուցանեն նմա (իմա՝ Ստ. Օրբելյանին, ծ. Հ.) զՀայրապետական զգեստն ոսկեթել հիւսածով եւ դնեն թագ պատուական ի գլուխ նորա. զայս (արար) կաթողիկոսն: Իսկ թագաւորն նմանապէս զգեցուցանէ ի թագաւորական զգեստուց ըստ Հայրապետական ձեւոյն՝ եւ դնէ կրկին անգամ թագ պատուական ի համակ ոսկւոյ ի գլուխն, որ եւ զանուն թագին միթր կոչէին. տային եւ զեմիփորոնն մեծախորհուրդ զերեքկրկինն, որ մետրապօլտացն է՝ եւ խոյր ոսկեթել մարգարտայեռ յօրինուածով, նաեւ այլ բազում պարգեւս մեծամեծս»[183]:

Հատկանշական է, որ Օրբելյանը համարվում է Տաթեւի աթոռի մետրոպոլիտ, քանի որ նախկինում մետրոպոլիտական աթոռը Տաթեւն էր, եւ ոչ թե Նորավանքը. «Եւ այսպէս պսակեալ զՍտեփաննոս ընդ սուրբ եւ առաքելական եկեղեցւոյն Տաթեւոյ՝ փեսայացուցանեն այսմ աթոռոյ»[184]: *Ուշադրության արժանի է նաեւ այն փաստը, որ Ստեփանոս Օրբելյանը նշանակվում է ոչ միայն որպես մետրոպոլիտ Սյունյաց, այլեւ «պռաւտաւֆրաւնտէս պատրիարգին Հայոց, այսինքն՝ նախաթոռ լինել եւ գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց»*[185], *կամ «պռոտոֆրոնտէս Հայոց Մեծաց»*[186]: *Ըստ Հր. Աճառյանի, հունարենից փոխառված պռոտոֆրոնտես բառը նշանակում է*

---

[182] Նույն տեղում, էջ 313:
[183] Նույն տեղում, էջ 313--314:
[184] Նույն տեղում:
[185] Նույն տեղում, էջ 351:
[186] Նույն տեղում, էջ 17:

«առաջին խորհող կամ խնամակալ»[187], իսկ ըստ «Հայկազեան» բառարանի՝ «որպէս թէ Առաջին խոհական խնամակալ, եւ վարժապետ, վարդապետ, ուսումնասէր, իմաստասէր եւ ճգնաւոր»[188]: Անդրադառնալով այս հարցին, Օրմանյան սրբազանը գրում է, որ մինչ այդ Անիի եպիսկոպոսներին էր վերապահված նախաթոռությունը Հայոց կաթողիկոսության Կիլիկիայում գտնված ժամանակ, «Բայց Անին հետզհետէ կորուսած էր իր կարեւորութիւնը, եւ Սիւնիքի դիրքը նորէն բարձրացած էր Օրբելեաններուն՝ Սմբատի եւ Տարսայիճի շնորհիւ»[189]: Այնուհետեւ, շարունակելով քննել Օրբելյանի «պռաւտաւիֆրաւնտէս պատրիարգին Հայոց» տողը, ավելացնում է. «Աւելի բացայայտ խօսքով Հայաստանի վրայ կաթողիկոսական ներկայացուցիչ մը կը հաստատուէր, քանի որ Կիլիկիոյ աթոռին դժուար էր հեռաւոր վիճակներու վրայ անմիջական հսկողութիւն ընել»[190]:

Ինչպես վերեւում նշեցինք, Օրբելյանը Կատուկեցուց ձեռնադրվում է 1286 թվականի դարնանը: Սակայն նա անմիջապես չի մեկնում Կիլիկիայից, այլ գրեթե մեկ տարի ուշացումով՝ 1287 թվականին: Այդ մեկ տարվա ընթացքում նա առիթ է ունենում մոտիկից ծանոթանալու Հայոց կաթողիկոսության ներքին խնդիրներին, ընդհանուր քաղաքական, կրոնական ու մշակութային անցուդարձերին:

1287 թվականին Ստեփանոս Օրբելյանը վերադառնում է Սյունիք, ուր թեեւ ուրախությամբ է ընդունվում, բայց միաժամանակ հանդիպում է Տաթեւի աթոռի եպիսկոպոսներ Հայրապետի ու նրա փոխանորդ Հովհաննեսի ընդդիմությանը: Տաթեւի հոգեւոր իշխանության ներքո, ինչպես նշել ենք, բաժանումից հետո գտնվում էր Սյունիքի թեմերի մեծ մասը, եւ տեղի.եպիս-

---

[187] Հր. Աճառյան, հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երեւան, 1979, էջ 108:
[188] Նոր Բառագիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Երեւան, 1981, էջ 661:
[189] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1701:
[190] Նույն տեղում, էջ 1703:

կոպոսները չէին ցանկանում ենթարկվել Ստեփանոսի գերագահ իշխանությանը: Նրանք դիմում են նույնիսկ այլազգիներին եւ «բազում ոճիրս սերմանեցին եւ յոլով վիշտս հասուցին եկեղեցւոյ»[191]: «Այլազգիներ» ասելով պատմիչը նկատի ունի մոնղոլ-թաթարներին, որոնց իշխանապետն այդ ժամանակ Արղուն խանն էր (1284–1291):

Սակայն Օրբելյանն իր առջեւ նպատակ էր դրել միավորել Սյունյաց երկփեղկված աթոռը, որին մեծապես օգնում էր եւ իր հայրը՝ Տարսայիճ մեծ իշխանը: Եվ Օրբելյանը այն անձնավորությունը չէր, որ տեղի տար: Նա անմիջապես ուղեւորվում է Արղունի մոտ եւ «ցուցեալ նմա զնամակ կաթողիկոսին՝ ծանոյց զամենայն որպիսութիւնն»[192]: Օրբելյանը Արղունին ցույց է տալիս նաեւ Տարսայիճի գրությունը (սիգել), որով «հանեալ էր բաժին ժառանգութեան մեզ զվանորայսն իւրոյ իշխանութեանն՝ զՏաթեւ, զՆորավանս, զՅաղացքար, զԱրատիս եւ զայլսն ամենայն»[193]:

Այստեղ որոշակիորեն երեւում է եւ Տարսայիճի միտումը. Հայոց կաթողիկոսի կողմից Տաթեւի եւ Նորավանքի երկու աթոռների հոգեւոր առաջնորդ նշանակված իր որդուն նաեւ այդ եւ այլ վանքերի «մարմնավոր» տեր ու վերակացու ներկայացնել: Նա ճանաչված էր Հայաստանի աթաբեկ[194], եւ մոնղոլների համաձայնությամբ Սյունյաց աշխարհի տերն էր: Ուստի Արղունին կարծես ոչինչ չէր մնում անելու, եթե ոչ վավերացնելու Ստեփանոսին իր նոր դիրքի մեջ:

Արղունը սիրով է ընդունում Տարսայիճի որդուն, արքայական հրամանագրով հաստատում է նրա իրավունքները՝ «կրկին

---

[191] Ստ. Օրբելյան, էջ 314:
[192] Նույն տեղում:
[193] Նույն տեղում, էջ 352:
[194] Սադոն Արծրունու մահից հետո Հայոց Մեծ աթաբեկ էր նշանակվել Տարսայիճը: (Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, էջ 635):

իշխանութեամբ՝ հոգեւոր եւ մարմնաւոր»[195] *եւ մի պալատական պաշտոնյայի հետ ուղարկում Սյունիք:*

Վերադառնալով Սյունիք՝ Օրբելյանը թեեւ կարողանում է իր դերագահությունը պարտադրել Տաթեւի ապստամբ աթոռին, սակայն սպասում է մինչեւ աթոռակալների վախճանը: Ինչպես վերը նշեցինք, տեր Հովհաննեսը հանդես էր գալիս որպես տեր Հայրապետի փոխանորդ, որի մահից հետո, սակայն, 1297 թվականին, Օրբելյանը Տաթեւի աթոռին նշանակում է Գրիգոր անունով մի եպիսկոպոսի, որին, ինչպես եւ գրել է Օրմանյանը, «պէտք է Տաթեւի մէջ նոյն ինքն Ստեփանոսի մէկ փոխանորդը սեպել»[196]*: Ինչպես Սյունյաց երկու աթոռների պատմությունից որոշակիորեն երեւում է, աթոռակալի նշանակվելու հետ միաժամանակ, կամ որոշ տարիներ հետո, նշանակվում էր եւ երկրորդ, այսպես կոչված՝ փոխանորդ եպիսկոպոսը, ինչպես՝ Տեր Հովհաննես եւ Տեր Հայրապետ, Տեր Հայրապետ եւ Տեր Սողոմոն, Տեր Հայրապետ եւ Տեր Հովհաննես: Այն փաստը, որ այս Գրիգորի անունը Օրբելյանը չի նշել Տաթեւի եպիսկոպոսների գավազանագրքում, գալիս է հաստատելու Օրմանյանի այն կարծիքը, որ նա նշանակված էր Ստ. Օրբելյանի կողմից որպես փոխանորդ:*

Կարեւոր է հատկապես այն փաստը, որ ինչպես արդեն նշեցինք, Օրբելյանը մետրոպոլիտ է նշանակվում Տաթեւի հնագույն աթոռի վրա, մինչդեռ նստում է Նորավանքում: Պատճառը, հավանաբար, այդ ժամանակ Սյունյաց իշխանության կենտրոնին՝ Արփա գյուղին մոտ լինելն էր, ինչպես եւ այն, որ Ստեփանոսը ծնվել, մեծացել, կրթություն էր ստացել ու վարդապետ էր ձեռնադրվել Վայոց ձորում: Սակայն պատմականորեն ճանաչված Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Տաթեւն էր, քանի

---

[195] Ստ. Օրբելյան, էջ 352:
[196] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1705:

որ, խոսելով երկու աթոռների կալվածքների մասին, Օրբելյանն իսկ Տաթեւը կոչում է «բուն աթոռ»[197]:

Վերադառնալով Արղունի մոտից եւ խուսափելով նոր ընդհարումներից, Օրբելյանը չի վերացնում աթոռներից որեւէ մեկը, այլ որոշում է՝ «եթէ փոփոխումն լիցի ժամանակաց եւ աւեր հասցէ Տաթեւոյ՝ զժառանգութիւն այնր եկեղեցւոյ Նորավանից եկեղեցին ժառանգեսցէ եւ բնակիչքն անդ բնակեսցեն: Եւ թէ Նորավանից հասցէ աւեր՝ զժառանգութիւն եւ զստացուածս նորա Տաթեւոյ եկեղեցին վայելեսցէ եւ բնակիչք նոցա անդ բնակեսցեն»[198]:

Օրբելյանի պատմության այս հատվածը, ուր նա սահմանում է երկու՝ Տաթեւի ու Նորավանքի եղբայրական հարաբերությունների սկզբունքները, մասնատման ու տեղայնական նկրտումների հաղթահարման մի տպավորիչ պատգամ է. «Բայց այս երկուսի համար էլ մեկ եպիսկոպոսություն պիտի լինի՝ մեկ առաջնորդով ու իշխողով. եւ ով որ եպիսկոպոս լինի, չհամարձակվի երկու հայացքով ու երկու մտքով նայել սրանց՝ մեկի նկատմամբ առավել հոգ տանելով: Այս տան մեջ ոխ ու նախանձ չպիտի լինեն, սրանց կրոնավորները չպիտի ասեն. «Դու տաթեւացի ես կամ նորավանքցի, այլ պիտի լինեն մեկ անձ եւ մեկ սիրտ»[199]: Եւ պետք է ասել, որ Ստ. Օրբելյանն ինքը հավատարիմ մնաց այս սկզբունքին: Թեեւ հիմնականում Նորավանքում էր մնում, սակայն եկեղեցի կառուցեց Տաթեւում: Այստեղ սպասավորելու ուղարկեց նաեւ իր հաջորդին (Հովհաննես-Օրբելին): Տպավորիչ է նաեւ այն, որ Նորավանքի ու Տաթեւի վերջին աթոռակալները մահից հետո ամփոփվել են կողք-կողքի՝ Նորավանքի դավիթում: Նորավանքի աթոռակալ Սարգիս բ-ի տապանաքարի արձանագրությունն է. «Այս շիրիմ չնորհալիը

---

[197] Ստ. Օրբելյան, էջ 351:
[198] Նույն տեղում:
[199] Սյունիքի պատմություն, էջ 375, հմմտ. Ստ. Օրբելյան, էջ 351:

Սարգսի է, Սիւնեաց եպիսկոպոսի եւ անյաղթ հռետորի, թվ. ՉԽէ (1298)», նրա կողքին՝ Տաթեւի աթոռակալ Գրիգոր եպիսկոպոսի տապանաքարն է՝ «Գրիգոր Սիւնեաց եպիսկոպոս, ՉԾԴ (1305)»[200]:

Դեռ նոր էր Օրբելյանը կարգավորել իր թեմի ներքին գործերը, երբ 1289 թվականին Կիլիկիայում լատինամետների անհիմն մեղադրանքների պատճառով բանտարկվում է Կոստանդին Բ Կատուկեցին, եւ Ստեփանոս վարդապետ Սկեւռացին Հեթում Բ-ի (1289–1305) կողմից Կոստանդին Բ Կատուկեցու հասցեին գրված մեղադրականով որպես պատգամավոր է ուղարկվում Հայաստան: Սկեւռացին ներկայանում է Օրբելյանին, հանձնում մեղադրականը եւ թագավորի անունից հրավիրում նոր կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու: Օրբելյանը ներկա էր եղել Կատուկեցու ընտրությանը եւ ինքն էլ ձեռնադրվել նրա կողմից: Ուստի ծանոթանալով այդ անհիմն մեղադրանքներին, կտրականապես մերժում է թագավորի հրավերն ու զայրացած պատասխանում. «Մեք ոչ եմք հասու կամ խորհրդակից եղծման, զի եւ նորոդմանն հաղորդեսցուք. որ ոք ինքնահաճ կամօք եղծումն արար նոյն եւ զնորոգ ընտրութիւնն հոդասցէ եւ կամք Արարչին յայց լիցի իւրում եկեղեցւոյ»[201]:

1290 թվականին մահանում է Տարսայիճ Օրբելյանը, որի մահարձանի վրա գրված է. «Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին, հզոր եւ մեծ գործակալին եւ քաջապահ մենամարտին»[202]: Հաջորդ տարին Օրբելյանն ուղեւորվում է Արղունին փոխարինած Քեյղաթու խանի (1281–1295) մոտ: Սա Արղունի փոքր որդին էր: Արղունին այցելելու ժամանակ Օրբելյանը ներկա էր եղել սրա քրիստոնյա մկրտվելուն Հռոմի պապի կողմից ուղարկված մի եպիսկոպոսի ձեռքով: Այս է պատճառը,

---

[200] Դիվան հայ վիմագրության, Գ, էջ 231: Ղ. Ալիշան, Սիսական, էջ 193:
[201] Նույն տեղում, էջ 322:
[202] Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիրք, Ս. Պետերբուրգ, 1912, էջ 131:

որ Օրբելյանը նրա կողմից իրեն ցույց տրված պատիվը «եղբայրական» պատիվ է անվանում: Քեյղաթուն հրովարտակով վերստին հաստատում է Օրբելյանին իր իրավունքների մեջ՝ «առաք հրովարտակ հրամանի վերստին հաստատութեամբ»[203]:

Այլեւս կատարելապես ամրապնդած իր դիրքերը, Օրբելյանը ձեռնարկում է Սյունյաց աթոռի տնտեսական վիճակի բարելավմանը: Նա կարողանում է գնումների ու նվիրատվությունների միջոցով զգալիորեն ընդարձակել Տաթեւի ու Նորավանքի հողային տիրույթները: Այսպես, օրինակ, այդ ժամանակ Նորավանքին են նվիրվում Զիվա, Քարկոփ, Արատես գյուղերը, բազմաթիվ մանր ու մեծ այգիներ, կանխիկ դրամ եւ այլն: Իսկ Տաթեւին նվիրվում են Արիա, Յուր եւ այլ գյուղեր, բազմաթիվ հողատարածություններ: Այնուհետեւ Օրբելյանը ձեռնարկում է շինարարական աշխատանքների, նախկինում գոյություն ունեցած եւ ավերված եկեղեցու տեղում կառուցում է Տաթեւի Ս. Գրիգոր եկեղեցին[204], որի շինարարությունն ավարտվում է 1295 թվականին: Եկեղեցու ճակատակալ քարի արձանագրությունը վկայում է. «Ի թվ. ՉԽԴ (1295) զՏէր Ստեփաննոս մետրապաւլիտ Սիւնեաց, որ է պռաւտաւֆրաւնտէս Հայոց Մեծաց որդի մեծափառ իշխանին Տարսաիճին շինող սուրբ եկեղեցոյս յիշեցէք ի Քրիստոս»[205]:

Նույն 1295 թվականին է ավարտվում նաեւ Պետրոս-Պողոս եկեղեցու զանգակատունը, 1286 թվականին կառուցվում է Մարտիրոս գյուղի Վիմափոր եկեղեցիների խումբը[206], մի շարք այլ եկեղեցիներ, իսկ Նորավանքում, 1290 թվականի շուրջ՝

---

[203] Ստ. Օրբելյան, էջ 353:

[204] О. Халпахчян, Архитектурные ансамбли Армении, Москва, 1980, с. 166.

[205] Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 25: Ճարտարապետական որոշ առանձնահատկություններից ելնելով Ստ. Մնացականյանը կառույցը վերագրում է Մոմիկին (Ստ. Մնացականյան, Վարպետաց վարպետներ, Երեւան, 1982, էջ 151–152):

[206] Դիվան հայ վիմագրության, Գ, էջ 180:

հյուրատուն: Մշակութային կենտրոնի է վերածվում նաեւ Օրբելյան իշխանների նստավայր Եղեգիս քաղաքը[207]:

Ստ. Օրբելյանի կարեւոր ձեռնարկումներից է լինում Արատեսի վանքի եկեղեցիների վերանորոգումը, այն որպես Սյունյաց աթոռի ամառանոց-աթոռանիստ հաստատելը: Այդ մասին վկայում է Օրբելյանն իր պատմության մեջ եւ Արատեսում թողած արձանագրությամբ:

Սակայն այդ ժամանակ եւ՛ մոնղոլական պետության, եւ՛ Սյունիքի քաղաքական կյանքում տեղի են ունենում նոր իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում նաեւ Ստեփանոս Օրբելյանի ծրագրերի վրա: Տարսայիճի մահվանից շատ չանցած, գահերեցության համար Օրբելյան ժառանգների միջեւ վեճ է առաջանում եւ հարցը լուծվում է միայն մոնղոլ խանի միջամտությամբ: Գահերեցությունը չնայած անցնում է Տարսայիճի որդիներից մեծին՝ Ելիկումին, սակայն մյուս որդիներին եւս տիրույթներ են հատկացվում, որը դալիս է ջլատելու եւ թուլացնելու Սյունիքի ռազմական ու տնտեսական հզորությունը: Սակայն շուտով խռովություններ են ծայր առնում նաեւ Մոնղոլական խանության ներսում: 1295 թվականին, որպես այդ պետության գլուխ, ընտրվում է Ղազան խանը (1295–1304), որի զորավարներից Նավռուզ անունով մեկը ապստամբում է նրա դեմ եւ ավերածություններ սփռում Ատրպատականում, Նախիջեւանում եւ Սյունիքում: Նավռուզի հրոսակները «Եկին եւ ի մեծ աթոռն Սիւնեաց եւ կամէին քակել զեկեղեցին, զոր կաշառօք եւ բռնութեամբ ոչ թողացուցաք»[208], գրում է Օրբելյանը: Վկայությունը կարեւոր է նրանով, որ վկայում է ինքնապաշտպանության նպատակով Սյունյաց հոգեւոր իշխա-

---

[207] Ա. Գեւորգյան, Վայոց ձորի եւ Որոտանի մանրանկարչությունը 13–14-րդ դդ., Երեւան, 2003, էջ 85–125:
[208] Ստ. Օրբելյան, էջ 346: Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 94:

նության գործադրած երկու միջոցի մասին՝ կաշառք եւ ֆիզիկական ուժ:

Այս դեպքերից հետո Ղազան խանը կարողանում է համախմբել ուժերը եւ պարտության մատնելով ու ձերբակալելով Նավռուզին, գլխատում է նրան: Ըստ Սյունյաց պատմիչի, Նավռուզի ձերբակալմանը մասնակցել էին նաեւ Օրբելյան Լիպարիտն ու Խաղբակյան Էաչին:

13-րդ դարի վերջին մոնղոլները ընդունում են մահմեդականություն եւ նրանց հպատակ երկրներում սկսվում են կրոնական հալածանքներ քրիստոնյաների նկատմամբ, ծանրանում են հարկերը: Այս ժամանակ նոր ահազանգ է լսվում Կիլիկիայից: Հեթում Բ-ի ցանկությամբ եւ անմիջական ազդեցությամբ 1293 թվականին կաթողիկոս է ձեռնադրվում Գրիգոր Է Անավարզեցին (1293–1307), որը շուտով սկսում է վարել բացահայտ լատինամետ քաղաքականություն:

2. Ստեփանոս Օրբելյանի թուղթը Գրիգոր Անավարզեցուն

Գրիգոր Է Անավարզեցին հայտնի էր իր օտարամոլությամբ, սակայն Հայաստանի եկեղեցիները այնպիսի ընդդիմություն ցույց չեն տալիս նրա կաթողիկոսական ընտրությանը, ինչպես վարվել էին Ապիրատի ընտրության ժամանակ: Պատճառը թերեւս նոր հակաթոռություն չստեղծելու ցանկությունն էր, ինչպես նաեւ՝ Հայաստանում մահմեդականացած մոնղոլների հալածանքների հետեւանքով ստեղծված կացությունը: Մ. Օրմանյանն այս հեռատեսությունը վերագրում է «Արեւելեայց պետն ու գլխաւոր եղող Ստեփանոս Օրբելյանի խոհականութեան, որ զգացած է անշուշտ, թէ հայրապետութեան պառակտումը վտանգաւոր ու կարի վնասակար կըլլար ազգային եկե-

ղեցւոյն»[209]: Սակայն Անավարզեցու բուռն օտարամոլությունը շուտով գալիս է խախտելու Հայ եկեղեցու դարավոր ավանդություններն ու սրբագործված սովորությունները:

Պետք է նկատել, որ Անավարզեցին չի սահմանափակվում արտաքին արդուզարդի ընդօրինակմամբ, այլ մինչեւ իսկ հասնում է պատարագի ժամանակ բաժակի մեջ ջուր խառնելուն եւ այլն: Նա նույնիսկ նամակագրական կապեր է ունենում Կոստանդնուպոլսի հունաց պատրիարքի հետ եւ «խոստանայր յանձն առնուլ զոր ինչ եւ խնդրեսցեն»[210]: Չնայած այս ամենի մասին Օրբելյանը գիտեր նախօրոք, բայց չի ցանկանում նոր գժտությունների դուռ բացել, հատկապես նկատի ունենալով հայոց վերջին թագավորության՝ Կիլիկիայի քաղաքական անբարենպաստ վիճակը: Եվ չնայած առանց ընդիմանալու այլեւս «ոչ գոյր տեղի յուսոյ կամ ապաստանի», սակայն, շարունակում է պատմիչը, «Երկնչէաք, եթէ յաւուրս մեր զարթնու չարն ի պատերազմ ընդ եկեղեցւոյ եւ յարուցանէ մրրիկ խռովութեան ի մէջ մեր եւ ընթագրեալ կործանէ զսինլիքոր մնացուած ազգիս»[211]: «Սինլիքոր մնացած ազգ» ասելով Օրբելյանն այստեղ նկատի ունի Կիլիկիայի թագավորությունը, քանզի հակաթոռության պարագային գժտությունների պատճառով հատկապես պիտի տուժեր Կիլիկիայի թագավորությունը: Սակայն Օրբելյանի այս հեռատեսությունը ի զորու չեղավ կանխելու անցանկալի դեպքերի հետագա ընթացքը:

Շուտով Սյունիք է ժամանում Գրիգոր Անավարզեցու պատվիրակը՝ Կեսարիայի եպիսկոպոս Կոստանդինը, որն իր հետ բերում է կաթողիկոսի նորամուծությունների ցուցակը եւ առաջարկը՝ ենթարկվելու եւ զեկավարվելու դրանցով: Պատվիրակը Սյունիք է հասնում 1296–1297 թվականներին, քանի որ, ինչ-

---

[209] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 1511: Նույն տեղում, հ. Բ, էջ 1740:
[210] Ստ. Օրբելյան, էջ 327–328:
[211] Նույն տեղում, էջ 328:

պես Օրբելյանն է գրում, Անավարզեցին իր օտարամոլության քողը դեն է նետում կաթողիկոսական աթոռին անցնելուց երկու տարի հետո եւ բացահայտորեն ու ինքնագլուխ սկսում նորամուծություններ կատարել՝ «...առնել նորաձեւութիւնս եւ այլաձեւութիւնս»[212]:

Օրբելյանն, անշուշտ, սպասում էր Անավարզեցու պատվիրակին եւ հավատացած էր, որ առանց բուն Հայաստանի եկեղեցիների համաձայնության, Կիլիկիայում պիտի հրաժարվեն նման անիմաստ ու նաեւ կորստաբեր քայլից:

Երբ Կոստանդին Կեսարացին հասնում է Սյունիք, Օրբելյանն անմիջապես իր մոտ է կանչում Սյունիքի ու հարակից շրջանների եպիսկոպոսներին, իշխաններին եւ ժողով է գումարում, ուր միաձայն կերպով որոշվում է մերժել Անավարզեցու ընթացքը՝ «միաբան խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս եւ իշխանաց դրեցաք մեք թուղթ մաղթանաց, նաեւ ողջամիտ հաւատոյ եւ կարգաց Հայաստանեացս եկեղեցւոյ, առ կաթողիկոսն մեր Տէր Գրիգոր՝ ոչ հիւանդանալ անողջանալի ցաւօք, որ իբր զքաղցկեղ ճարակէ յական թօթափել զհասարակ անդամս եկեղեցւոյ»[213]: Սյունիքի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների «միաբան խորհրդով» կազմված եւ ստորագրված նամակն իրավամբ պետք է համարել Ստ. Օրբելյանի հրավիրած ժողովի արդյունք: Թեեւ նա գումարման վայրը չի նշում, սակայն մետրոպոլիտի նստավայրը Նորավանքն էր, ուստի կարող ենք Նորավանքի Ա ժողով անվանել:

Օրբելյանի գրած պատասխան թղթում տրվում է Հայ Եկեղեցու՝ ինքնուրույն մնալու համար դարերով մղած պայքարի համառոտ պատմությունը, հիմնականում վկայակոչումների ձեւով: Այնուհետեւ հերքում է Անավարզեցու նամակի հիմնական կետերը: Նամակի դավանաբանական եւ այլ կետերը հանդամա-

---

[212] Նույն տեղում:
[213] Նույն տեղում, էջ 328:

նորեն մեկնաբանել է Մ. Օրմանյանը[214], ուստի կրկնությունից խուսափելով, նշենք միայն, որ նամակի ընդվզող ոգին ու ոճը այնքան կտրուկ են նկատվել, որ կաթողիկոսի նամակաբերն անգամ ինչ-ինչ պատճառաբանություններ բերելով փորձել է հրաժարվել պատասխան նամակը Կիլիկիա տանելուց: Եւ իրոք, Օրբելյանը թեեւ պահպանում է ժամանակի նամակագրության քաղաքավարական ոճը, մեծարական խոսքեր ուղղում կաթողիկոսին, սակայն անցնելով բուն նյութին, Հայ եկեղեցու դավանանքի անսասանության դիրքերից հիմնավոր փաստերով մերժում է կիլիկյան նորամուծությունները, բայց այդ էլ քիչ համարելով, ավելացնում է՝ «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել եւ ոչ ընդ հռոմոց յերկինս ելանել»[215]: Այս խոսքերով արդեն ամեն ինչ ասված էր:

Նամակի տակ ստորագրում են ժամանակի աչքի ընկնող կրոնական, դիտամշակութային ու իշխանական տների գործիչներ: Հատկանշական է, որ նամակի տակ բոլոր ստորագրողները նզովում են (աշխարհականները միանում են հոգեւորականների նզովքին) նրանց, «որք ոչ միաբանին այսմ հայրենաւանդ եւ հայրապետական հաստահիմն դաւանութեանցս»[216]: Այս նամակը չափազանց մեծ նշանակություն է ունենում Հայ եկեղեցու ըմբռնած դավանաբանական սկզբունքների ու եկեղեցականազգային սրբագործված ավանդույթների պահպանման գործում, ցույց տալով, որ Հայաստանի հոգեւորականությունը հաստատակամ է տրամադրված, եւ կաթողիկոսը չի կարող միանձնյա (կամ իր համախոհների, մինչեւ իսկ թագավորի հետ համախորհուրդ) որոշել եկեղեցու ծիսական ու դավանաբանական հարցերում նորամուծություններ կատարելու հարցը:

---

[214] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 2061–2071:
[215] Ստ. Օրբելյան, էջ 336:
[216] Նույն տեղում, էջ 337:

Ավելորդ չէ ներկայացնել Ստեփանոս Օրբելյանի գրած նամակի տակ ստորագրողների ցանկը, որը նաեւ ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանում հոգեւոր ու աշխարհիկ իշխանավորների կողմից բացառիկ դիտակցումը՝ ազգային-ավանդական և եկեղեցական-դավանաբանականանաղարտության պահպանման բոլոր հարցերում:

Հոգեւորականներից նամակի տակ ստորագրել են՝
Սարգիս եւ Գրիգոր եպիսկոպոսներ Վայոց ձորի,
Հովհաննես աթոռակալ Բջնու,
Գրիգոր Բջնեցի, «Հրամանատար այսմ աթոռոյ»,
Հովհաննես եպիսկոպոս Հաղբատի,
Մխիթար եպիսկոպոս Հավուց Թառի,
Տեր-Մարգարե՝ եղբորորդի Վանական վարդապետի,
Տեր-Սարկավագ եպիսկոպոս Գողթնի,
Եսայի Նչեցի բարունապետ Գլաձորի,
Դավիթ «վարդապետ Հայաստանս եկեղեցւոյ»
Իշխաններից ստորագրել են՝
Ելիկում՝ որդի Տարսայիճի Օրբելյան,
Լիպարիտ, որդի Իվանեի Օրբելյան,
Պապաք, որդի Պռոշի Խաղբակյան,
Էաչի, թոռն Պռոշի Խաղբակյան[217]*:*

Մի քանի տարի անց Ստեփանոս Օրբելյանը շարադրում է «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»[218] *երկը, որպեսզի իր համախոհներին զինի նաեւ տեսական դիտելիքներով:*

Ստեփանոս Օրբելյանի կարեւոր ձեռնարկումներից է լինում իր կենդանության օրոք հաջորդ մետրոպոլիտի ընտրությունը, որի նպատակը նոր ընդհարումներն ու հնարավոր երկ-

---

[217] Ստ. Օրբելյան, էջ 336–337:
[218] Տեառն Ստեփաննոսի նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756:

փեղկումը կանխելն էր եւ աթոռի ժառանգականությունն ապահովելը:

Ստեփանոս Օրբելյանի մահվան թվականի մասին հայտնվել են տարբեր կարծիքներ: Այսպես, ըստ Ալիշանի՝ Օրբելյանը մահացել է 1309 թվականին, ըստ Զամինյանի՝ 1305 թվականին[219] *եւ այլն: Դրանք հիմնովին հերքել է Գ. Մ. Գրիգորյանը*[220]*: Փաստ է, որ Նորավանքում Ստ. Օրբելյանի պահպանված տապանաքարի վրա գրված է. «Ի թվիս ՉԾԲ (1303). այս է չիրիմ հանգստեան մեծի մետրապալիտին Սիւնեաց Ստեփաննոսի»*[221]*: Այս թվականից հետո որեւէ հիշատակություն չունենք Սյունյաց աթոռի մեծ երախտավորի ողջ լինելու վերաբերյալ: Տաթեւի զանդերից մեկի հետեւյալ արձանագրությունից՝ «Թվ. ՉԾԳ (1304) լսելի արա ինձ, Տէր, զձայն ցնծութեան եւ զուրախութեան եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալ. զթա Քրիստոս Աստուած ի Տէր Ստեփաննոսի»*[222] *երեւում է, որ զանգը պատրաստվել է Օրբելյանի մահից հետո: Նշենք, որ տապանաքարի թվականը, որպես Օրբելյանի մահվան թվական, անառարկելիորեն ընդունել են նաեւ վերջին ժամանակի ուսումնասիրողները*[223]*:*

Հիմնվելով 1284 թվականի մի ձեռագրի հիշատակարանի վրա, ուր Ստ. Օրբելյանը անվանվում է «երանեալ բաբունի», Գ. Գրիգորյանը այն կարծիքն է հայտնում, թե Օրբելյանը Նորավանքում նաեւ ուսուցչություն է արել: Այդ հիշատակարանը հետեւյալն է. «Հրամանաւ եւ արդեամբ ազնուազարմ եւ իշխանաշուք, վեհիմաստ եւ զուարթանուն բաբունո Ստեփանոսի, որ

---

219 Ա. Զամինյան, Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջեւան, 1914, Ա մաս, էջ 206:
220 Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 200:
221 Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 233:
222 Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 37:
223 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 198: Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 200:

տարփեցաւ բանից սորին անբիծ, եւ հրամայեաց դրոշմել ի գիծ ինձ ամենամեղ անձինս Յովանէս քահանայի... հարազատ նորին եղբարց եւ արիւնառուս մերձաւորաց, քաջ իշխանաց Հայոց Մեծաց գովելի եւ յաղթող զաւրավարաց... յիշեսջիք զերիցս երանեալ բաբունին, զպանծալի պսակն»[224]: Սրան ավելացնենք 1303 թվականի մեկ այլ հիշատակարան, ուր գրված է. «... ի խնդրոյ աստուածարեալ գիտնական եւ արդիւնական վարդապետի, միանգամայն եւ արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ստեփաննոսի, որ է ակն արեւելեան եւ աթոռակալ մեծի Սիւնեաց տանն»[225]:

Բացառիկ է Ստ. Օրբելյանի դերը հայ պատմագրության մեջ որպես Սյունիքի պատմիչ եւ պատմության նկատմամբ գիտական, քննական վերաբերմունք ունեցող հեղինակ: Առանձնահատուկ է նա նաեւ որպես բանաստեղծ:

Եզրափակելով խոսքը Ստեփանոս Օրբելյանի աթոռակալության մասին, պետք է ասել, որ այս շրջանից սկսած ոչ միայն միավորվում են Տաթեւի ու Նորավանքի աթոռները, այլեւ հիմնականում արտաքին ազդակների պատճառով էական փոփոխություններ են կատարվում միավորյալ աթոռի կարգավիճակում: Առաջինը Կիլիկիայում գտնվող կաթողիկոսական աթոռի բռնած լատինամետ դիրքն էր, որն արտահայտվեց Անավարզեցու նամակով, եւ որին կտրուկ մերժողական պատասխան տվեց Ստ. Օրբելյանը: Այս դեպքից հետո, փաստորեն, Սյունյաց մետրոպոլիտներն ու եպիսկոպոսները ձեռնադրության համար այլեւս չէին դիմում Հայոց կաթողիկոսին, չէին մեկնում Կիլիկիա:

Ստեփանոս Օրբելյանն ինքը ձեռնադրեց իր հաջորդ մետրոպոլիտին, նա էլ՝ իր հաջորդին:

Երկրորդ արտաքին ազդակը մոնղոլների տիրապետությունն էր, որոնց հետ հարաբերվելու ընթացքում Սյունյաց հո-

---

[224] ԺԳ. դարի հիշատակարաններ, էջ 559: Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 222–223:
[225] Լ. Խաչիկյան, ԺԴ. դարի ձեռ. հիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 13:

գեւոր իշխանության ինքնուրույնությունը պահպանելու համար Օրբելյաններն ընտրեցին հոգեւոր եւ աշխարհիկ իշխանության յուրօրինակ զուգորդման ուղին: Դրա մասին ուղղակիորեն վկայում է Ստեփանոս Օրբելյանը, երբ գրում է, որ գնալով Արղուն խանի մոտ՝ «ցուցաք եւ զսիգէլն Հայրենեաց մարմնաւոր ժառանգութեանց, զոր ետ հայրն իմ, զի հանեալ էր բաժին ժառանգութեան մեզ վանորայսն իւրոյ իշխանութեանն՝ զՏաթեւ, զՆորավանս, զՅաղացքարն, զԱրատիս եւ զայլսն ամենայն, զոր եւ տեսեալ հրամայեաց գրել հրովարտակ հրամանի եւ վերստին հաստատեաց ի մեզ զբովանդակն՝ կրկին իշխանութեամբ՝ հոգեւոր եւ մարմնաւոր»[226]: Այստեղ միանգամայն հստակ ասվում է այն մասին, որ Ստեփանոս Օրբելյանը հոր կողմից օժտվել է աշխարհիկ սեփականատիրական իրավունքով, իսկ Արղունը դրա հիման վրա հրովարտակով հաստատել է նրա կրկնակի իշխանությունը՝ հոգեւոր եւ աշխարհիկ:

Այդ իշխանությունը փոխանցվեց Ստեփանոս Օրբելյանի հաջորդներին, որոնք, բնականաբար, պիտի նույն Օրբելյան տոհմի ներկայացուցիչներ լինեին: Վերջիններս շարունակեցին այդ ավանդույթը, ոչ միայն իրականացնելով հոգեւոր եւ աշխարհիկ իշխանություն, այլ անգամ հոգեւոր (ձեռնադրության ժամանակ ստացած) անվանը զուգահեռ պահպանելով աշխարհական անունները: Օրբելյան եպիսկոպոսների մոտ առավել տարածված էր Ստեփանոս անունը, անկասկած Ստեփանոս Օրբելյանի մեծ հեղինակության եւ թողած ծանրակշիռ ավանդի շնորհիվ:

[226] Ստ. Օրբելյան, էջ 352:

3. Հովհաննես-Օրբելի աթոռակալությունը

Ստեփանոս Օրբելյանից սկսված Սյունյաց աթոռի վերելքը շարունակվում է նաև նրան հաջորդած Հովհաննես-Օրբելի ժամանակ: Ինչպես Ստ. Օրբելյանը, այնպես էլ նրան հաջորդած նույն տոհմից Սյունյաց երկու մետրոպոլիտները՝ Հովհաննես-Օրբելն ու Ստեփանոս Տարսայիճը, իրենց կրթությունն ստացել են Գլաձորի համալսարանում: Հովհաննես-Օրբելը Սմբատ եւ Տարսայիճ Օրբելյանների Իվանե եղբոր որդի Լիպարիտի որդին էր: Մոր անունն է Նանա (Աննա): Աշխարհական անունն է Օրբել, հոգեւորը՝ Հովհաննես (տարբեր աղբյուրներում անվանվում է տարբեր կերպ):

Ամենավաղ հիշատակությունը Հովհաննես-Օրբելի մասին պահպանվել է նրա իսկ ստացած ձեռագրի (Մատենադարան, ձեռ. թիվ 1364) անթվական հիշատակարանում, որը 14-րդ դարի հիշատակարանների ժողովածուում զետեղված է 1303 թվականի տակ, այն հիմնավորմամբ, որ «այս ձեռագիրն ստանալու ժամանակ նա դեռեւս սոսկ վարդապետ էր եւ ոչ եպիսկոպոս, ուստի ամենայն հավանականությամբ այս հիշատակագրությունները գրվել են մինչեւ նրա մետրոպոլիտ դառնալը՝ այսինքն մինչեւ 1303 թվականը»[227]: Սակայն պահպանվել է 1300 թվականին Հովհաննես-Օրբելի գրած եւ ստացած մատյանի հիշատակարանը, ուր նա համարվում է եպիսկոպոս եւ պրոտոֆրոնտես[228], ուստի վերը նշված մատյանը Հովհաննես-Օրբելն ստացել է մինչեւ 1300 թվականը: Ձեռագրի հիշատակարանն արժեքավոր է Հովհաննես-Օրբելի՝ որպես բարեւնու, եւ նրա ծնողների հիշատակմամբ. «...պահպանեա զսուրբ բարեւնին զՅովհաննէս՝ ստացող սորա, եւ ողորմեայ երկիւղալից եւ աստուածահաճոյ ծնողաց նորա, մեծափառ իշխանաց իշխանին Լիպարտի՝

[227] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 12:
[228] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 858–859:

հաւր սորա եւ ամենաւրհնեալ սուրբ դշխոյին Նանային՝ մաւր սորա...»[229]:

Հովհաննես-Օրբելին համառոտակի անդրադարձել է Լ. Խաչիկյանը: Հիմնվելով 1302 թվականի մի ձեռագրի հիշատակարանի վրա՝ նա նշում է, որ այդ թվականից արդեն Հովհաննես-Օրբելը հիշվում է որպես Սյունյաց մետրոպոլիտ[230]: Նույն կարծիքին է նաեւ Գ. Գրիգորյանը[231]: Սակայն, ինչպես վերը նշեցինք, Հովհաննես-Օրբելի մասին կա ավելի վաղ մի հիշատակություն, ուր նա համարվում է եպիսկոպոս եւ պրոտոֆրոնտես:

Ձեռագիրը 1300 թվականին գրված Ավետարան է, պահվում է Նոր Ջուղայում (թիվ 35)[232]: Գրիչն ու ստացողն է Հովհաննես-Օրբելը, գործը կատարել է Տաթեւի վանքում: Գլխավոր հիշատակարանը բավական ընդարձակ է: Այստեղ սկզբում հիշատակում է ծնողներին՝ «...ես մի ոմն ի տրուպ ծառայից Տեառն, Աւրպէլ Իովանէ՝ Սիւնեաց եպիսկոպոս, ծնօղաց բարեպաշտաց ծնունդ՝ հաւր՝ Լիպարտի եւ մաւր՝ Նանայի...»[233]: Շարունակության մեջ Հովհաննես-Օրբելն ավելի հանդամանորեն է անդրադառնում իր տոհմին, նշելով Սմբատ, Տարսայիճ եւ Իվանե Օրբելյաններին, վերջին երկուսի զավակներին՝ Ելիկումին ու Լիպարիտին եւ նրանց կանանց՝ Թամթային ու Նանային, ապա հատուկ հիշում է Ստեփանոս Օրբելյանին. «...ըստ մարմնոյ հարց մեր եւ հաւուց՝ Մեծին Սմպատայ Աւրպիլեան, եւ հարազատաց նորին՝ Տարսայիճին եւ որդւոյ նորին Ելիկումին, Իվանէ եւ որդւոյ նորին Լիպարտին, պարկեշտ եւ բարեպաշտօն զուգակցաց նոցին, փոխելոցն ի Քրիստոս, մարց մեր Թամթային եւ Նանային, եւս եւ մեծ քահանայապետին եւ երեւելի առաքե-

---

229 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 12:
230 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրբելյան ճյուղը, էջ 190:
231 Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 223:
232 Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի, էջ 51–56:
233 Նույն տեղում:

լական առնն մետրապոլտին Սիւնեաց՝ հօրեղբօրն մեր Տեառն Ստեփանոսի...»[234]:

Հետաքրքիր է, որ այստեղ Հովհաննես-Օրբելը Ստեփանոս Օրբելյանին կոչում է «հորեղբայր», մեկ այլ տեղ, նրան դիմելով, իրեն անվանում «որդի եղբօր ձերոյ»[235], *չնայած որ Ստեփանոս Օրբելյանի հորեղբոր որդու որդին էր: Հավանաբար այդպես է վարվում ազգակցական մերձավորությունն ու հարազատությունն ընդգծելու համար: Ինչպես ստորև կտեսնենք, նրանց կապն իրոք շատ սերտ է եղել:*

Հովհաննես-Օրբելի հիշատակարանը խիստ ուշադրավ տեղեկություն է պարունակում նաև նրա մորաքրոջ եւ մայրական կողմի վերաբերյալ, որը առնչություն է ունեցել Պռոշյան տոհմի հետ, միաժամանակ ցույց տալով, որ սկզբնական հոգեւոր դաստիարակությունը նա ստացել է հենց այս միջավայրում: Խնդրում է հիշել՝ «...ծնաւղաց իմ հոգւոյ աստուածասէր մեծ իշխանուհւոյն սուրբ կրաւնաւորին մաւրաքեռն իմ Թաճիրին, ամենաւրհնեալ եւ դեղեցիկ աւրիորդին՝ մօրն իմոյ Վախախին եւ հարազատաց իմոց Արեւելեայց կողմնակալաց՝ Էաչոյ եւ Բոյրթէլին, Սմպատա եւ Բուղտային, Զեսարին եւ այլ հարազատացն ընտանեաց մեր եւ ազգակցաց...»[236]:

Թաճիրը (Թաճեր) Պռաշյան Ամիր Հասանի կինն էր եւ այս իշխանական տան ավագությունը ստանձնած Էաչիի (1299–1317) մայրը: Փաստորեն նա եւ Հովհաննես-Օրբելի մայրը՝ Նանան, քույրեր են եղել: Թաճերը 1307 թ. նվիրատվական արձանագրություն ունի Թանահատում, ուր հիշատակում է հորը՝ Ուքանին: Գ. Հովսեփյանի կարծիքով վերջինս Երերանի (Հերհեր) տեր Վահրամ Շահուռնեցու եղբայրն էր[237]:

---

[234] Նույն տեղում:
[235] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 8:
[236] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 859:
[237] Գ. Յովսեփեան, Խաղբակյանք..., էջ 239, 307:

Հիշատակարանում Թաճիրից հետո Հովհաննես-Օրբելը նշում է Բուրթել Մեծի կնոջը՝ Վախախին, որին «մայր» է կոչում: Այնուհետեւ իշխաններին թվարկելիս նախ նշում է Թաճիրի որդուն՝ Էաչիին, ապա Վախախի ամուսնուն՝ Բուրթելին եւ մյուս Օրբելյաններին:

Որ հետագայում եւս Հովհաննես-Օրբելը կապված է եղել մայրական կողմի ազգականների հետ, երեւում է Ցախացքարի երկու արձանագրություններից: Առաջինը գրել է հենց ինքը՝ 1311 թ., ուր տիրական ոճով («Ես Տէր Ուրպէլ Սիւնեաց եպիսկոպոս սահմանեցի...») պատարագ է սահմանում իր մոր «եւ իւր ծնողացն» համար[238]: Իսկ երկրորդում (1317 թ.) Էաչի Պռոշյանը (որի կին Մամախաթունը Օրբելյան տոհմից էր) նշում է վանքին իր կատարած նվիրատվության մասին եւ ավելացնում՝ «...եղբայրն մեր Տէր Աւրպէլի Ովանէն եւ միաբանքն ի տարին սահմանեցին Դ (4) պատարագ մեզ եւ ծնողաց մերոց եւ ամուսնոյն իմոյ Մամախաթունին...»[239]:

Նախորդ ուսումնասիրողներին ծանոթ չի եղել Թաճերի ու Նանայի քույրեր լինելու փաստը եւ անհասկանալի է թվացել, թե ինչու է Էաչին Հովհաննես-Օրբելին «մեր եղբայր» կոչում: Գ. Հովսեփյանը դա փորձել է բացատրել Էաչիի կնոջ Օրբելյան տոհմից լինելու հանգամանքով: Նա գրում է. «Էաչին Յոհան Աւրպելուն անուանել է «մեր եղբայր», իւր կնոջ կողմից, որովհետեւ Մամախաթունը նորա հետ մի մի եղբօր թոռներ էին. Յոհան Աւրպելը Իւանէի թոռը՝ Լիպարիտի որդին, իսկ Մամախաթունը Տարսայիճի թոռը եւ Եղիկումի դուստրը»[240] : 1300 թ. հիշատակարանի չնորհիվ այժմ պարզ է, որ Էաչին եւ Հովհաննես-Օրբելը մորաքրոջ որդիներ էին, որով հասկանալի է դառնում

---

[238] Հ. Մելքոնյան, Ցաղաց քարի վանքի պեղումները եւ նորահայտ արձանագրությունները, «Նորավանք» ժողովածու, Մոնքրեալ-Երեւան, 2001, էջ 89:
[239] Դիվան հայ վիմագրության, Գ, էջ 143:
[240] Գ. Յովսեփեան, Խաղբակեանք..., էջ 99:

նաեւ, թե ինչու տեւականորեն մրցակցության մեջ գտնվող երկու զորեղ տոհմերն այս շրջանում անհամեմատ ջերմ հարաբերությունների մեջ էին գտնվում:

Վերադառնանք 1300 թ. ձեռագրին: Շարունակելով հիշատակարանը Հովհաննես-Օրբելը պատվիրում է. «Զգուշութեամբ պահել զսուրբ Աւետարանս եւ չհանել զսա ի սուրբ եկեղեցոյս Տաթեւոյ...», ապա նշում հիշատակարանի գրության թվականը՝ «թիվն ՉԽԹ (1300)», եւ խոսքը եզրափակում իր ուսուցիչ Եսայի Նչեցու նկատմամբ ունեցած խորը ակնածանքն արտահայտող տողերով. «Ես նուաստ Աւրպէլ Իովանէ իմով ձեռամբ գրեցի զյիշատակարանս զծովացեալն իմաստիւք աստուածաշունչ տառիւք հընով եւ նորովք եւ արտաքին իմաստիցն տեղեկութեամբ զիմն վարժապետ, զհռչակաւորն յամենայն ազգս Հայկազնեաց զմեծ պետն Եսայի, զարժանին ամենայն բարեաց յիշատակի յիշեցէք բարեյիշատակաւ ի Տէր, ո՛վ պատահողք»[241]:

Գլխավոր հիշատակարանից բացի ձեռագրի էջերում տեղ են գտել երկու հիշատակագրություն, որոնք Հովհաննես-Օրբելին ներկայացնում են որպես ստացողի: Դրանցից առաջինը հատկապես կարեւոր է, քանի որ ստացողը հիշվում է պրոտոֆրոնտես կոչումով. «Ստացողի սուրբ Աւետարանիս արհիական եպիսկոպոսի Տեառն Յովանիսի Արեւելեան պռաւտաւնֆռանտէսի, ողորմեայ Քրիստոսի Աստուած իմ քում սոսկալի ատենին, ամէն», «Տէր Օրպէլ Իովանէ ստացող սուրբ Աւետարանիս»[242]:

Այսպիսով, 1300 թ. հիշատակարանը՝ Հովհաննես-Օրբելի ինքնագիրը լինելով, ոչ միայն ստույգ տեղեկություններ է տալիս նրա ծագման վերաբերյալ, ծանոթացնում նաեւ մայրական տոհմին, հաստատում Գլաձորում ուսանելու փաստը (որը մինչ այժմ արձանագրվում էր միայն Եսայի Նչեցու 1232 թ. հիշա-

---

[241] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 859:
[242] Նույն տեղում:

տակարանի միջոցով), այլեւ վկայում է, որ նա արդեն այդ ժամանակ օժտված է եղել հոգեւոր իշխանության լայն լիազորություններով: Նրա տիտղոսաշարում պակասում է միայն մետրոպոլիտ անվանումը, որն ի հայտ է գալիս 1302 թվականի հիշատակարանում, կամ, Լ. Խաչիկյանի խոսքերով, «պաշտոնական գրության»[243] մեջ: Այն հետեւյալն է. «Յանուն ամենակալին Աստուծոյ, ես տէր Յովհաննէս, յազգէ Աւրպելեանց, պռաւառթրանտէս Հայոց մեծաց եւ մետրաւպաւլիտ Սիսական նահանգի, եկայք ի Վերին Նորավանս, առ վարդապետն Դաւիթ եւ Արքայ. խնդրեցին ի մէնջ ժողովուրդ ինքեանց ի սատար սուրբ ուխտիս, եւ մեք տուաք սոցա ժողովուրդ զԱնկեղի, զԵղիան, զԵղիկանց Ձոր, զՎաղցան ի սեպհական ժողովուրդ եւ թեմ, որ զամենայն հաս եւ զիրաւունք սոքա սոցա տացին»[244]:

Հովհաննես-Օրբելը ոչ միայն հիշատակարանում մետրոպոլիտ եւ պրոտոֆրոնտես է կոչվում, այլեւ չորս գյուղ է հատկացնում Վերին Նորավանքին՝ «սեպհական ժողովուրդ եւ թեմ»[245]: Գրությունը ոչ թե հիշատակարան, այլ ավելի շուտ պաշտոնական հրահանգ է հիշեցնում: Այս եւ նախորդ՝ 1300 թ. հիշատակարանը ցույց են տալիս, որ Ստ. Օրբելյանը ինքն է հոգացել մետրոպոլիտական լիազորությունները Հովհաննես-Օրբելին հանձնելու մասին:

Սկզբնաղբյուրները հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում կազմելու Ստ. Օրբելյանի եւ Հովհաննես-Օրբելի հարաբերությունների վերաբերյալ: Մեր օրերը հասած մի Ավետարան (Մատենադարան, ձեռ. թիվ. 6792), որը մինչ այժմ ավելի շատ իր վրա է հրավիրել հայկական մանրանկարչությամբ

---

[243] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 190:

[244] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 7–8:

[245] Այս նվիրատվությամբ սկսվում է Վերին Նորավանքի վերելքը որպես ուսումնական եւ գրչության կենտրոն (Կ. Մաթեւոսյան, Դրվագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմությունից, «Նորավանք» ժողովածու, Մոնրեալ-Երեւան, 2001, էջ 64–74):

զբաղվողների ուշադրությունը չնորհիվ Մոմիկի ստեղծած հրաշալի պատկերների, ընդօրինակել է Հովհաննես-Օրբելը՝ Ստ. Օրբելյանի պատվերով: Հիշատակարանում գրչության վայրը չի նշվում, բայց հավանաբար Նորավանքն է:

Հովհաննես-Օրբելի գրած հիշատակարանից ակներեւորեն երեւում է, որ նա այդ գործը ձեռնարկել է Ստ. Օրբելյանի հանձնարարությամբ: Նրա խոսքերը աշակերտի՝ ուսուցչին ուղղված խոսքեր են. «Որ եւ իմ անարժան անձինս պատահեաց սակաւիմաց եւ տխմար մտաց տեսութեամբ, որ հոգեւորն է սիրով աստուածային գլխաւոր տէրդ Ստեփաննոս, որդի փառաւոր իշխանաց իշխանին Տարսայիճին, զի հարկեալ ի հրամանատարութեան ձերոյ բարձրութենէ եւ ի սիրոյ եւ ոչ յանձին կարողութիւն վստահանալով, ձեռնարկեցի այս գործառնութեան եւ տառակերտեցի նշանախեցիւք: Բայց դու ընկալ զձերոյ հրամանատարութեանդ կատարումն, թէպէտ եւ ոչ ըստ կամաց եւ պարագայց ամաւք վայելելով գուարճօրէն բարձրութեամբ, զյիտինս ի ծանօթից ձերոց՝ զՅովանէս՝ որդի եղբօր ձերո եւ խրատու եւ բանին ծննդեամբ՝ ծառայ եւ որդի ձերումդ սրբութեան...: Եւ թէ սխալ գտանէք, թարց մեղադրութեան թողցես զմեզ, անյիշաչար տէր, ուսեալդ ի մարդասիրէն Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն»[246]:

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես-Օրբելն այս հիշատակարանում հանդես է գալիս որպես մեսրոպոլիտի հրամանը կատարող եւ նրան ակնածող աշակերտ:

Առանձին փոքր հիշատակագրությամբ նշվում է ստացողը՝ «Զգերաբուն բանի սպասաւորն եւ զարեգակնափայլ լուսատուն հոգոց՝ զմետրապոլիտն Սիւնեաց՝ զտէր Ստեփանոս ստացող, յիշեցէք ի Տէր»[247]:

---

[246] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 8–9:
[247] Նույն տեղում, էջ 9:

Ձեռագրում հիշատակարան ունի նաեւ մանրանկարների հեղինակ Մոմիկը, ուր նշում է ձեռագրի ստեղծման թվականը՝ ՉԾԱ (1302) եւ հիշատակագրման պահը՝ «Ժամանակս ձմեռն էր»[248]:

Հաջորդ թվականին մահացել է Ստեփանոս Օրբելյանը, եւ Հովհաննես-Օրբելը նրա հիշատակին խաչքար է կանգնեցրել (այժմ գտնվում է Էջմիածնում), գործը հանձնարարելով Մոմիկին: Գեղաքանդակ խաչքարն ավարտելով 1304-ին, Մոմիկը փորագրել է հետեւյալ արձանագրությունը. «Ես՝ Աւրպէլ Յովհաննէս, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ հաւրն իմ Տէր Ստեփանոսին, թվ. ՉԾԳ (1304), Մոմիկ վարդպետ»[249]:

Ակներեւ է, որ Հովհաննես-Օրբելը սերտորեն կապված էր Ստ. Օրբելյանի հետ, որին որպես հոգեւոր հայր էր ընդունում, իսկ վերջինս մտահոգ լինելով իր հաջորդի պատրաստվածությամբ՝ միշտ ուշադրության կենտրոնում էր պահում նրան: Պահպանվել է նաեւ մի ձեռագիր, որի հիշատակարանից երեւում է, որ այն պատկանել է միաժամանակ Ստ. Օրբելյանին եւ Հովհաննես-Օրբելին. «Այս տետրս Տէր Ստեփանոսի եւ Տէր Աւրպելին է: Որք զկնի պատահիք, յիշեցէք բարի յիշատակաւ զիս, զնուաստ Աւրպել Իովանէ անարժան եպիսկոպոս Սիւնեաց եւ զհաւրեղբայրն իմ զՏէր Ստեփաննոս»[250]:

Հովհաննես-Օրբելը 1307 թ. Մոմիկին եւ Պողոս վարդապետին Նորավանքում հանձնարարել է երկու Ավետարան ընդօրինակել: Այդ մասին է վկայում Մոմիկի գրած հիշատակարանը, որի սկզբում հիշվում է ստացողը՝ «Այսպիսի... փրկաւետ գանձուց փափագող եղեալ... Տէր Օրպելի Յովանէ՝ վերատեսուչ գահերեց երից աթոռոց՝ Տաթեւոյ եւ Նորավանից եւ Ցաղացքարոյ՝

---

248 Նույն տեղում:
249 Ս. Սաղումյան, Նորավանքի վիմագրերը, էջ 54:
250 ԺԳ. դարի հիշատակարաններ, էջ 860:

գլուխ երկոտասան գաւազանաց»[251]: Այնուհետեւ Մոմիկը պատմում է, որ տեսողությունը կորցնելու պատճառով գործն անավարտ է թողել («բայց ես յաչաց վատեալ... ոչ կարացի ի գլուխ հանել»), իսկ պակասը լրացրել են Հովհաննես գրիչը եւ Թորոս մանրանկարիչը: Սակայն տարիներ անց Մոմիկի տեսողությունը վերականգնվել է եւ 1331-ին նա գրել է այդ մատյանի հիշատակարանն արդեն Ստեփանոս-Տարսայիճի հանձնարարությամբ[252]:

Հովհաննես-Օրբելը, ինչպես նշվեց, կրթություն է ստացել Գլաձորում՝ Եսայի Նչեցու մոտ: Դա երեւում է ինչպես նրա 1300 թ. վերը նշված ձեռագրի, այնպես էլ Նչեցու 1323 թ. հիշատակարանից. «Դարձեալ յեռեալ հիւսեսցի ընդ յիշատակեալս ամենայն բարի յիշման արժանաւորն, արհիական վերատեսուչ այսմ նահանգի, որ է ազն սորին ըստ մարմնոյ, վարժն յիմաստս եւ վսամն ի գիտունս տէր Յովհաննէս մականուն Աւրպէլ, մետրապաւլիտ եւ այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց՝ մանաւանդ իմաստութեամբ եւ ուղղափառութեամբ՝ ամենայն աշխարհի, որ է մեր սիրելի որդի ըստ փրկագործ երկանց բանին ծննդեան»[253]: Հովհաննես-Օրբելն իր հերթին նպաստել է Գլաձորի համալսարանի գործունեությանը: Նա, ինչպես եւ իր հաջորդը՝ Ստեփանոս-Տարսայիճը, նյութական մեծ օգնություն է ցույց տվել Գլաձորի համալսարանին: Դա երեւում է Նչեցու հիշատակարանի հետեւյալ խոսքերից. «...յորոց (Հովհաննես-Օրբելից եւ Ստեփանոս Տարսայիճից, ծ.հ.) եւ մեք բազում գութս եւ խնամս տեսաք եւ վայելեցաք ի սոցանէ...»[254]:

---

[251] A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States..., p. 85.
[252] Նույն տեղում: 1315 թ. Հովհաննես-Օրբելը հիշատակվում է Խաչատուր Կեչառեցու սան Բարդաղի՝ Եղեգիսում գրած հիշատակարանում՝ «...յամս առաքելաշնորհ արհիեպիսկոպոսի տեառն Յովհաննէսի մականուամբ Աւրպէլ կոչեցելոյ...»: Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 377:
[253] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 183:
[254] Նույն տեղում:

Հովհաննես-Օրբելի կարևոր շինարարական աշխատանքներից է 1312 թվականին Արփա գյուղի (այժմ՝ Արենի) Ս. Աստվածածին գեղաշեն եկեղեցու կառուցումը, որի ճարտարապետն էր Մոմիկը: Այս առթիվ եկեղեցու պատին Հովհաննես-Օրբելը թողել է հետևյալ արձանագրությունը. «Ես Տէր Յովանէս Աւրպէլ Սիւնեաց արհէպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշել աղաչեմ: Եւս եւ զբարեպաշտ իշխանաց իշխանն զարեան մերձաւորն իմ զքաջ մենամարտիկն զԲիւրթէլն եւ զդշխոտափառ Քրիստոսասէր զոյգն իւր զՎախախն՝ նորաբողբոջ զաւակաւքն իւրեանց Բէշքէնիւն եւ Իւանէիւն. թվ. ՉՀ (1321): Շարժ եղեւ Մոմիկ վարդպետ»[255]:

Հարկ է նշել, որ Ստեփանոս Օրբելյանի նման Հովհաննես-Օրբելն օժտված էր ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ իշխանությամբ: Այդ երևում է նրա գործունեությունից, արձանագրություններից, նաև պահպանված այլ վկայություններից: 1302 թվականին Հովհաննես-Օրբելի ընդօրինակած Ավետարանում 1406 թ. Սյունիքում գրված հետագայի հիշատակարանում մատյանը լրացնող Գրիգորը գրում է.

«Գրեալ էր նախ սա Օրբելին,
Սիւնեաց արհի մետրապօլտին,
Որ էր իշխան նա վիճակին,
Տանն Սիւնեաց մեծ նահանգին»[256]:

Հատկանշական է, որ հոգևոր եւ աշխարհիկ իշխանություն իրականացնող առաջնորդը հանդես է գալիս միաժամանակ հոգևոր եւ աշխարհիկ անուններով (երկանունով). 1300 թ. ինքնագիր հիշատակարանում՝ «Աւրպէլ Իովանէ», 1304 թ. խաչքարի արձանագրության մեջ՝ «Աւրպէլ Յովհաննէս», 1321 թ. արձանագրության մեջ՝ «Յովանէս Աւրպէլ», Զաքարիա Մործո-

---

[255] Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 29:
[256] Լ. Խուշիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 9:

րեցուն գրած նամակում «Աւրպէլի Յովաննէ»[257]*: Հովհաննես-Օրբելից հետո Սյունյաց աթոռի մի շարք աթոռակալներ, որոնք «պարոնտեր» էին, հանդես են գալիս նույն կերպ՝ հոգեւոր եւ աշխարհիկ երկանունով:*

Հովհաննես-Օրբելի գործունեության մեջ կարեւոր տեղ է գրավում հակաունիթորական պայքարը: Այս շրջանում ունիթորները կամ միաբարները փորձում էին Հայոց եկեղեցին դավանափոխ անել եւ ենթարկել Հռոմի պապի իշխանությանը: Հովհաննես-Օրբելը, Եսայի Նչեցու համագործակցությամբ, շարունակում է գլխավորել հակաունիթորական պայքարը: Այս առումով հատկանշական է կաթողիկոս Կոնստանդին Գ Կեսարացուն (1307–1322) հասցեագրված նամակը, որի տակ ստորագրած Հովհաննես-Օրբելը, Ստեփանոս-Տարսայիճը եւ Եսայի Նչեցին իրենց խիստ բողոքն են արտահայտում Կիլիկիայի միաբարական ձգտումների հանդեպ:

Կաթողիկոսական թղթին, ըստ Գ. Հովսեփյանի, Հայաստանից պատասխան է ուղարկվել 1317–18 թվականներին[258]*: Նամակի սկզբում նշում են իրենց անունները՝ Սյունյաց եպիսկոպոսներ «Տէր Յովաննէ եւ Տէր Ստեփաննոս», վարդապետներ Դավիթ եւ Եսայի: Գրում են, որ կաթողիկոսի նամակը եղել է «լի յանդիմանական բանիւ», պարունակել «կշտամբանք եւ յանդիմանութիւն», մինչդեռ իրենք օրհնություն եւ խաղաղություն էին սպասում: Թղթում ասվում է, որ կաթողիկոսի Գրիգոր անունով նվիրակն սպառնացել է պատարագի գինուն ջուր խառնելուց եւ Սուրբ Ծնունդը դեկտեմբերի 25-ին տոնելուց հրաժարվողներին մեռոն եւ օրհնություն չտալ: Դրան նամակագիրները պատասխանում են, գրելով՝ «...մեք, մերովք ամենայն վիճակեալ հաւատիւքս, իշխանօք եւ աղատօք, վարդապետօք եւ քահանայօք եւ ամենայն սրբազան ժողովրդովք ի*

---

[257] Գ. Յովսեփեան, Խաղբակեանք..., էջ 399:
[258] Նույն տեղում, էջ 280:

միասին խորհեցաք... ո՛չ առաք յանձն զՋուրն ի սուրբ խորհուրդն խառնել եւ ո՛չ զԾնունդն ի դեկտեմբերի ԻԵ (25)-ն առնել, յաղագս որոյ եւ ոչ զսուրբ մեռոնն առաք..»[259]: Հիրավի, այս տողերից երեւում է, որ Ստեփանոս Օրբելյանի հաջորդների մեջ իշխում էր Հայ եկեղեցու ավանդներին անդավաճան մնալու հաստատակամ ոգին:

Հատկանշական է նաեւ, որ ինչպես ժամանակին Ստ. Օրբելյանն էր ժողովական եղանակով հաստատված պատասխան գրել կաթողիկոսին, նույն կերպ է վարվել Հովհաննես-Օրբելը, նշելով, թե հոգեւորականներով, իշխաններով ու ժողովրդով «ի միասին խորհեցաք», որը ենթադրում է ժողովի գումարում: Սա կարելի է համարել Նորավանքի Բ ժողով:

Ավելի խիստ տոնով է գրված Հովհաննես-Օրբելի նամակն ուղղված կաթողիկոսի պահանջներն ընդունած Արտազի եպիսկոպոս Զաքարիա Ծործորեցուն: Նամակագիրը նրան մեղադրում է պառակտում սերմանելու մեջ («դու գիտես, որ մեր հարքն ամենեքին ի մի էին լեալ... չգիտացաք թէ ինչ պատճառաւ դու ի մենջ բաժանեցար»), նշում, որ կաթողիկոսի պահանջածից մի բան էլ ավելի է արել եկեղեցու ճշմարիտ կարգերից հեռանալով, ապա հեգնում է, ասելով, որ եթե այդքան խելոք է, ապա պիտի գար ու բարեկամաբար իրենց էլ «խելք սովորեցներիր», իսկ եթե գիտուն է, մի երկու բան է լսել (այլ ոչ կարդացել), «այնժամ քննիր եւ գտիր ճշմարտութիւնը»[260]:

Գ. Հովսեփյանը գրում է. «Զաքարիան առանց պատասխան չի թողնում այս գրությունը..., Աւրպելու խօսքերին, «թէ երբ ճշմարտութեան հետեւեցար, զմեզ ընդէ՞ր չարարեր խորհրդակից», պատասխանում է, թէ «...մենք խորհրդի գլուխ քեզ էինք համարում, ինչպես Դավրիժում էլ եկեղեցու սենյակում խորհուրդ արինք, բայց երբ տեսանք, որ դուք կամք չունիք կաթո-

[259] Նույն տեղում, էջ 280–283, 397–399:
[260] Նույն տեղում, էջ 399–400:

ղիկոսին հնազանդելու, վստահելով ձեր գիտութեան եւ փարթամութեան (իշխանական դիրքն ակնարկելով), մենք չհամարձակեցանք ապստամբիլ կաթողիկոսից»[261]: Ինչպես երեւում է, սկզբնապես համաձայնություն է եղել Սյունյաց եւ Արտազի աթոռների միջեւ՝ Կիլիկիայից եկող նորամուծությունների նկատմամբ միասնական դիրքորոշում որդեգրելու հարցում: Սակայն Զաքարիա Ծործորեցին տեղի է տվել, որն էլ հարուցել է Հովհաննես-Օրբելի դժգոհությունը:

Կիլիկյան արքունիքի ու կաթողիկոսության դավանաբանական ու ծիսական գիջողականության պահանջներին չուտով միանում է այլադավանության իրական վտանգը, երբ Բռնայում ու շրջակա բնակավայրերում հայտնվում են կաթոլիկ քարոզիչներ եւ, իրենց շուրջը համախոհ հայ հոգեւորականներ հավաքելով, լայն քարոզչություն են սկսում: Այստեղ նրանք անգամ կաթոլիկ եպիսկոպոսություն են հիմնում եւ Ավինյոնում հաստատված պապական աթոռի ցուցումով ակտիվ քարոզչական աշխատանք ծավալում[262]:

Հովհաննես-Օրբելը եւ Ստեփանոս-Տարսայիճը, բարունապետ Եսայի Նչեցին իր սաներով ու ապա Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին իրենց աշակերտների հետ միասին, հնարավոր ամեն ջանք ու միջոց գործադրում են (գաղափարական պայքարի հետ միասին երբեմն դիմելով նաեւ հալածանքների), արգելելու համար այդ վնասակար ընթացքը:

Ինչպես ժամանակին Ստ. Օրբելյանը նախապատրաստեց իր հաջորդին, այդպես վարվեց նաեւ Հովհաննես-Օրբելը: Պահպանելով տոհմական ժառանգականությունը, նա Ստ. Օրբելյանի եղբորորդի Ստեփանոս-Տարսայիճին դարձրեց իր աթոռակից ու հաջորդ:

---

[261] Գ. Յովսեփեան, Խաղբակեանք..., էջ 283:

[262] Ժան Ռնշար, Ավինյոնի պապությունը եւ Հայաստանը, Պատմա-բանասիրական հանդես, 2001, 1, էջ 155:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Հովհաննես-Օրբելը հանդես է գալիս որպես Ստեփանոս Օրբելյանի սահմանած ազգային-եկեղեցական լավագույն ավանդույթների արժանավոր շարունակող, պահպանում է աթոռի միասնությունը, դավանանքի անաղարտությունը, նպաստում երկրամասում կրթական ու մշակութային կյանքի վերելքին: Հովհաննես-Օրբելը նաև գրի ու դրչության մարդ է եղել: Նրա մասին առաջին իսկ հիշատակություններում տեսնում ենք, որ ինքն է մատյաններ ընդօրինակում, իսկ հետագայում հանդես է գալիս որպես հովանավոր, պատվիրատու-ստացող: 1321 թ. Տաթևում «Մաշտոց» ընդօրինակող Մատթեն գրիչը նշում է, որ աշխատել է «հրամանաւ եւ աւժանդակութեամբ աստուածապատիւ եւ առաքելաշնորհ արհեպիսկոպոսին մերոյ Տէր Յովհաննէսի... որ... զաւրացոյց զիս եւ զնիւթ քարտենիս շնորհեաց»[263]:

Հովհաննես-Օրբելը վերջին անգամ հիշվում է 1323 թվականին «Տէր Յովհաննէս մականուն Աւրպէլ, մետրապաւլիտ եւ այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց»[264]: Մահվան թվականը Լ. Խաչիկյանը համարում է անհայտ[265], սակայն Նորավանքում պահպանվել է նրա տապանաքարը, որի վրա գրված է. «Թվիս ՉՀԳ (1324). տուն իմաստից եւ հանճարոյ Աւրպէլ զՈվանէս հռչակաւոր մետրապաւլիտ Սիւնեաց»[266]:

4. Ստեփանոս-Տարսայիճի աթոռակալությունը

Հովհաննես-Օրբելին փոխարինել է Ստեփանոս-Տարսայիճը, որը Տարսայիճ իշխանի թոռն էր, Ստ. Օրբելյանի անհամամայր

---

263 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 167:
264 Նույն տեղում, էջ 183:
265 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրբելյան ճյուղը, էջ 190:
266 Ս. Բարխուդարյան, Դիվան, Գ, էջ 232:

եղբոր՝ Ջալալի որդին[267]*: Սկզբում հանդես է եկել Հովհաննես-Օրբելի հետ, նախ որպես Սյունյաց աթոռի ժառանգորդ: Այս մասին մի ուշագրավ հիշատակություն է պահպանվել գրված Եսայի Նչեցու ձեռքով 1314 թ. «...եկն առ մեզ գեղաղէշ եւ շնորհընկալ քահանային Ստեփաննոսի, որդի Մեծին Ջալալին եւ ժառանգ գերահռչակ աթոռոյս Սիւնեաց եւ երեր զմեզ միրգ եւ զջուր ցուրտ, որ եւ տացէ նմա Քրիստոս զջուրն կենդանի»*[268]*: Նախորդ ուսումնասիրողներին անծանոթ մնացած այս հիշատակարանից երեւում է, որ Ստեփանոս-Տարսայիճը Գլաձոր է եկել 1314-ին: Հիշատակարանի վերջին բառերը իշխանազուն քահանայի՝ միրգ եւ պաղ ջուր բերելու մասին, կարելի է հասկանալ բառացի, կամ որպես պտղատու այգու բերքի հատկացում եւ սառնորակ ջրի աղբյուրի պատրաստում:*

Ստեփանոս-Տարսայիճի ուսումնառությունը Գլաձորում կարեւոր իրադարձություն է դարձել, որի մասին են վկայում նույն 1314 թվականին գրված եւս երկու ձեռագիր: Առաջինը մի Ավետարան է, որը Ստեփանոս-Տարսայիճը պատվիրել է Պողոս Կիլիկեցի վարդապետին: Հիշատակարանում գրիչը տեղեկություններ է հաղորդում Ստեփանոս-Տարսայիճի մասին, նախ ծանոթացնելով նրա ծագմանը՝ «...գրեցի սուրբ Աւետարանս...Հրամանաւ եւ ծախիւք մեծազարմ եւ իշխանաշուք լուսաբողբոջ մանգանն Տարսայիճ կոչեցեալ, իսկ ի շնորհս Հոգոյն Սրբոյ՝ Ստեփաննոս անուանեալ, որ է ըստ հայրենի նախնեաց՝ յազգէ եւ ի շառաւեղէ Որպիլեանց, իսկ ըստ մայրենեաց՝ սերեալ յազգէ մեծ ամիրսպասալարին Զաքարէի...»[269]*: Հետագա շարադրանքում գրիչը Ստեփանոս-Տարսայիճի հանգուցյալ ազգականների շարքը սկսում է նրա հոր հիշատակմամբ՝ «Յիշեսջիք... զհայր*

---

[267] Տարսայիճի առաջին կինը Արուզ (Արզու) խաթունն էր, որից ծնվել է Ստ. Օրբելյանը, իսկ երկրորդ կինը՝ Խաչենի իշխան Ջալալի դուստր Սինա խաթունը, որից ծնվել է Ջալալը (Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 81–82):

[268] «Արձագանք», 1888, էջ 130:

[269] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 99:

սորին՝ զմեծ իշխանաց իշխանն... զպարոն Ջալալն», իսկ ողջ ազգականներից նախ նշում է Բուրթել եւ Բուղտա Օրբելյաններին, ապա ստացողի Շահնշահ, Ելիկում, Աղբուղա եղբայրներին եւ մորը՝ «գերամեծար ծնաւղին իւրոյ՝ պարոն Գոնցային»[270]: Զաքարյան զորեղ տոհմից սերող Գոնցան Զաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահ Ա-ի կրտսեր որդու՝ Իվանեի դուստրն էր, Շահնշահ Բ-ի (մահ. 1320 թ.) քույրը:

Հիշատակագիրն այնուհետեւ անդրադառնում է Ստեփաննոս-Տարսայիճի ուսումնառությանը, նշում Սարգիս բաբունուն, որ նրա կրթությամբ, նաեւ «հոգեւոր եւ մարմնաւոր» դաստիարակությամբ զբաղվել է մանուկ հասակից, մինչեւ հասունացում. «...աղաչէմ յիշել... զերանաշնորհ բաբունին զՍարգիս, զդաստիարակ եւ զսնուցիչ տեառն Ստեփաննոսի, որ ի մանդութենէ մինչ ի յարբունս հասակի մեծաւ ջանիւ եւ աշխատութեամբ վաստակեալ ի սնունդ տիրապէս, եւ յուսումն, եւ ի հրահանգս հոգեւոր եւ մարմնաւոր...»[271]:

Գրիչն ավելի հանգամանորեն է անդրադառնում Ստեփաննոս-Տարսայիճի՝ Եսայի Նչեցուց ստացած կրթությանը Գլաձորում. «...տուեալ զանձն ի կրթութիւն գրոց, եւ աստուածային աւրինացն... նաեւ յիմաստասիրական արհեստս յոլով ժամանակս դեգերեալ ընդ թեւաւք խնամոց սուրբ եւ երանաշնորհ բաբունապետին եւ տիեզերալոյս վարդապետին Եսայեայ, նաեւ աստիճանի սարկաւագութեան եւ քահանայութեան արժանացեալ. եւ հանդերձեալ է կոչմամբ եւ ընդրութեամբ Սուրբ Հոգոյն ելանել ի պատիւ եւ յաստիճան վարդապետութեան եւ եպիսկոպոսութեան տանս Սիւնեաց, զոր ընդալցի Տէր եւ յաջողեսցէ ի հաճոյս կամաց իւրոց...»[272]: Մեջբերման վերջին հատվածը հասկացվել է իբրեւ թե այդ ժամանակ Ստեփանոս-Տար-

---

[270] Նույն տեղում, էջ 100:
[271] Նույն տեղում:
[272] Նույն տեղում, էջ 99:

սայիճը «ձեռնադրվել է վարդապետ եւ Սյունյաց եպիսկոպոս»[273]: Բայց իրականում հիշատակագիրն ասում է, որ Ստեփանոս-Տարսայիճը արժանացել է «սարկաւագութեան եւ քահանայութեան», եւ ակնկալվում է[274], որ Սուրբ Հոգու ընտրությամբ բարձրանա վարդապետության եւ Սյունյաց տան եպիսկոպոսության պատվին ու աստիճանին: Իրավացի է Գ. Հովսեփյանը, երբ սույն հիշատակարանը նկատի ունենալով գրում է. «1314 թուին նա քահանայ էր արդեն եւ պատրաստվում էր վարդապետական եւ եպիսկոպոսական պատիւ եւ աստիճան ստանալու»[275]:

Երիտասարդ իշխանազունը Գլաձորում օգտակար է եղել ոչ միայն Պողոս Կիլիկեցուն, որն ընդօրինակել է վերը նշված մատյանը նրա հրամանով, այլեւ օգնել է ուրիշների, այդ թվում Մխիթար Երզնկացուն, որը 1314 թ. հիշատակարանում խնդրում է հիշել.

«Նաեւ կարեկից մեծազարմին
Աթոռակալ Տարսայիճիս,
Որ է մեզ կարեկից յամէն բարիս,
Եւ օժանդակ յիւր դաւառիս,
Յիշման առնել զսա արժանիս
Ծնողիւք, եղբարբք օրհնեալ յաստիս...»[276]:

1314 թվականին, փաստորեն, կանխորոշված էր Ստեփանոս-Տարսայիճի եպիսկոպոս լինելը, եւ Մխիթար Երզնկացին նրան արդեն «աթոռակալ» է կոչում:

Ստեփանոս-Տարսայիճն առաջին անգամ Հովհաննես-Օրբելի հետ հիշատակվում է 1321 թ. Գլաձորում Կյուրիոնի գրած

---

[273] Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 229:
[274] «Հանդերձեալ է», նշանակում է «լինելոց է, ակնկալելի»: Նոր Բառգիրք..., հ. Բ, էջ 42:
[275] Գ. Յովսեփեան, Տարսայիճ Օրբելեան եւ Սիւնեաց Խաթունի սերունդը, «Հասկ» հայագիտական հանդես, Ա տարի, Անթիլիաս, 1948, էջ 15:
[276] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 104:

հիշատակարանում, որը նշում է, թե ձեռագիրը գրել է «ի հայրապետութեանն Տէր Կոստանդեայ եւ ի վերադիտողի տանս Սիւնեաց՝ Տէր Յովհաննէսի եւ Տէր Ստեփանոսի»[277]: Այս ժամանակ Ստեփանոս-Տարսայիճն արդեն եպիսկոպոս էր եւ, փաստորեն, աթոռակից: Սակայն Հովհաննես-Օրբելի եւ Ստեփանոս-Տարսայիճի պաշտոնների հարաբերակցությունն ավելի ակնառու երեւում է Նսայի Նչեցու 1323 թ. հիշատակարանից, ուր նա նախ նշում է առաջինին՝ որպես «արհիական վերատեսուչ այսմ նահանգի, տէր Յովհաննէս մականուն Աւրպէլ, մետրապաւլիտ եւ այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց», ապա երկրորդին՝ «...տէր Ստեփաննոս մականուն Տարսայիճ, որ է եւ նա մեր որդի ի բանէ ծնեալ, մանուկ տիւաք առեալ զաշտիճան արհեպիսկոպոսութեան»[278]: Այստեղից երեւում է, որ Հովհաննես-Օրբելը դերակա դիրք ուներ: Այս նույն հիշատակարանում Նչեցին երախտագիտություն է հայտնում երկու աթոռակալներին Գլաձորի համալսարանի նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար: Հետաքրքիր է, որ Նչեցին նախ նշում է աթոռակալների հոգեւոր անունը, ապա աշխարհիկը՝ որպես «մականուն»:

1324 թվականին Հովհաննես-Օրբելի մահվանից հետո, Ստեփանոս-Տարսայիճը դառնում է Սյունյաց միանձնյա հոգեւոր առաջնորդ: 1326 թ. Վաղադնի վանքում (Որոտնավանք) նա նվիրատվություններ է կատարում, արձանագրելով՝ «Կամաւն Աստուծոյ ես Տէր Ստեփանոս Աւրպէլեան, որդի Ջալալին, արհեպիսկոպոս տանս Սիսական, եկի մեր հայրենի տունս, ի վանս Վաղադնոյ...»: Ապա նշում է Սարգիս վանահոր կառուցած հյուրատան եւ իր ցանկության մասին՝ «մասնակցիլ այնմ արդեանց», որի համար՝ «ի պէտս պանդոկին» հատկացումներ է

[277] Նույն տեղում, էջ 166:
[278] Նույն տեղում, էջ 183:

անում[279]: Հետաքրքիր է, որ ժամանակին (1273 թվականից առաջ) վանքի եկեղեցիներից մեկը նորոգել է Ստեփանոս-Տարսայիճի պապը՝ Տարսայիճ իշխանը[280], իսկ 1315-ին Բուրթել եւ Բուղտա Օրբելյանները, տեսնելով իրենց պապերի ավանդը՝ «տեսեալ զձեռագիր նոցին, զոր չինել կամելով զվաղինջուց աւերեալ եւ խաղտեալ վանս...», նոր նվիրատվություններ են կատարել[281]: Պատահական չէ, որ Ստեփանոս-Տարսայիճն այս վանքը համարում է «հայրենի տուն»: Հատկանշական է նաեւ արձանագրության հրամայական ոճով ավարտը՝ «Արդ յայսմհետէ չունի ոք հրաման յաթոռակալաց կամ յայլ իշխողաց զմիր տվածս ի սուրբ ուխտէ հանել»[282]: Այսպիսի ոճը հիմնավորված էր Ստեփանոս-Տարսայիճի ունեցած ոչ միայն հոգեւոր, այլեւ աշխարհիկ իշխանությամբ: Գ. Հովսեփյանը նրան կոչում է «իշխան արքեպիսկոպոս»[283]:

Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ Վաղադնի վանքի վանահայր, հյուրատունը կառուցող Սարգիսը, որ երկրամասի հնագույն իշխանական տնից էր սերում, Ստեփանոս-Տարսայիճից հետո դարձավ Սյունյաց հաջորդ աթոռակալը (այդ մասին կխոսվի ստորեւ):

Չնայած անբարենպաստ քաղաքական կացությանը՝ Ստեփանոս-Տարսայիճը զբաղվել է եկեղեցաշեն գործունեությամբ: Դրա մասին վկայություն ենք գտնում Դավիթ Գետկեցու 1328 թ. Գլաձորում ընդօրինակած Աստվածաշնչի հիշատակարանում, ուր գրիչը նշում է. «Գրեցաւ... ի յառաջնորդութեան արքեպիսկոպոսութեան գաւառիս Սիւնեաց Տէր Ստեփաննոսի, մականուն Տարսայիճի՝ անարատ եւ մաքրամիտ ուղղադաւան քաւչապե-

---

279 Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 101:
280 Նույն տեղում, էջ 102:
281 Նույն տեղում, էջ 101:
282 Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 101:
283 Գ. Հովսեփեան, Տարսայիճ Օրբելյան..., էջ 16:

տի... առաւելեալ ի պէտս շինութեան եկեղեցւոյ, որ եւ մեք իսկ ականատես եղաք եւ վայելեցաք ի բազում խնամոց նորին...»[284]:

Վերը նշեցինք, որ Հովհաննես-Օրբելը 1307 թ. Մոմիկին Նորավանքում հանձնարարում է Ավետարան ընդօրինակել, որը նա անավարտ է թողնում տեսողությունը կորցնելու պատճառով, սակայն ժամանակ անց աչքերը բուժվում են եւ 1331-ին Ստեփանոս-Տարսայիճի հանձնարարությամբ գրում է մատյանի հիշատակարանը: Վերջինս կարեւոր տեղեկություն է պարունակում նաեւ Ստեփանոս-Տարսայիճի շինարարական գործունեության մասին: Մոմիկը մասնավորապես գրում է. «...զյիշատակարանս արարի եւ գրեցի հրամանաւ Տէր Տարսայիճին մականուն Տէր Ստեփանոսի, որդւոյ Ջալալին... զոր իւրով ի նոր շինեալ եկեղեցի կատարեաց յանուն սրբուհւոյ Աստուածածնին եւ սրբոյ Նիկողայոսի եւ Քրիստափորոյ սրբոյ»[285]: Խոսքը, այսպես կոչված «Զորաց տաճարի» մասին է, որի արեւելյան պատի արձանագրությունը հետեւյալն է. «Ես Տէր Ստեփանոս, որդի Ջալալին, թոռն Մեծի Տարսաիճին հիմնարկեալ շինեցի եկեղեցիս յանուն սրբուհոյ Աստուածածնայ»[286]: Ինչպես տեսնում ենք, Ստեփանոս-Տարսայիճը, շարունակելով իր մետրոպոլիտ եւ իշխանազուն նախորդների՝ Ստեփանոս Օրբելյանի եւ Հովհաննես-Օրբելի ավանդույթը, նույնպես եկեղեցի է կառուցել:

Ավելացնանք, որ վերը նշված՝ Մոմիկի հիշատակարանով մատյանում հիշատակություն է թողել նաեւ Ստեփանոս-Տար-

---

[284] Մատենադարան, ձեռ. թիվ 4515, էջ 84–85:

[285] A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States..., p. 85.

[286] Ս. Բարխուդարյան, Դիվան, Գ., էջ 108:
Ս. Աստվածածին կամ ավելի շատ Զորաց տաճար անունով հայտնի եկեղեցին ճարտարապետական տեսակետից մի անսովոր կառույց է, որն ունի միայն արեւելյան բեմ եւ կողքերին երկուական ավանդատուն խորաններ (հավանաբար հենց դրանք են կրել Մոմիկի հիշատակարանում նշված սուրբ Նիկողայոսի եւ սուրբ Քրիստափորի անունները): Ենթադրվում է, թե պաշտամունքի համար շինվել է խորանը եւ բեմը, իսկ զորքը կանգնում էր բաց երկնքի տակ, որի համար եւ կոչվել է Զորաց տաճար (Դիվան հայ վիմագրության, Գ., էջ 105):

սայիճը, որն իրեն կոչում է՝ «Տէր Ստեփանոս որ եւ Տարսայիճ», ապա Բուրթելին, նրա կնոջն ու զավակներին հիշելուց բացի նշում է իր նախորդներին՝ «զՏէր Օրպէլի Յովանէ» եւ առանձնակի մեծարանքով՝ Ստեփանոս Օրբելյանին՝ «զզարդարիչն եկեղեցեաց, զպարծանքն քրիստոնէից եւ զընդդէմն երկաբնակաց զհաւրեղբայրն իմ զՏէր Ստեփանոս արհեպիսկոպոս Սիւնեաց»[287]:

Նույն 1331 թ. Ստեփանոս-Տարսայիճը ձեռք է բերել Կիլիկիայում գրված մի Ավետարան: Հիշատակարանի անանուն գրիչը փառաբանական ոճով ներկայացրել է ստացողին ու նրա հնարավորինս ամբողջական տիտղոսաշարը. «Աւետարանս... գրեալ ոսկեզաւծ որակաւք ի Դրազարկն..., զոր տեսեալ Տեառն Ստեփանոսի՝ հզաւր եւ իմաստուն գիտնականի, վարժեալ ի վարժարանի վարժապետին Եսայեայ տիեզերաքարոզ լուսաւորչին, որդի իշխանաց իշխանին՝ քաջ սպառազէն մենամարտիկ զինաւորի Զալալին, թոռն մեծ աթաբակին Հայոց եւ Վրաց վեհ Տարսայիճին, տէր եւ վերատեսուչ գահերէց եւ գլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց Տաթեւոյ եւ Նորավանից եւ Ցախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց ուրախ եղեւ իբրեւ ընծայ ի վերուստ առաքեալ...»[288]:

Հիշատակարանի շարունակությունը գրված է ստացողի անունից, որից երեւում է, որ այդ թվականին զոհվել է նրա եղբայր Շահնշահը. «Եւ արդ ես... թշուառացեալս Ստեփաննոս... աղաչեմ... յիշել զգեղաղէշ եւ զարեգակնափայլ եղբայրն իմ՝ զպարոն Շահնշահ, առաջի զենմանն Քրիստոսի...նաեւ յիշել զծնողսն իմ՝ զհայրն իմ զՋալալն եւ զմայրն իմ զամենաւրհնեալ Գոնցայն եւ յերկար կենդանութիւն խնդրել երկուց եղ-

[287] A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States..., p. 85.
[288] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 231:

բարց իմոց, պարոն Էլիկումին եւ Աղբուղային: Եղեւ մեզ այս բաւթ տրտմագին ի տաւնի զատկին ի ՉՁ (1331) թվ.»[289]:

Հիշատակարանում հետաքրքրական է նշումը Ստեփանոս-Տարսայիճի՝ Տաթեւի, Նորավանքի եւ Ցախացքարի «գահերեց» երեք աթոռների տեր լինելու եւ տասներկու գավառների (գավազանների) պետ լինելու վերաբերյալ: Հիշենք, որ այս երեք վանքերը մեծ իշխան Տարսայիճը հատկացրել էր իր որդուն՝ Ստեփանոս Օրբելյանին («Հանեալ էր բաժին ժառանգութեան մեզ զվանորայսն իւրոյ իշխանութեանն՝ զՏաթեւ, զՆորավանս, զՑաղացքար, զԱրատիս եւ զայլսն ամենայն»)[290]: Հաջորդ մետրոպոլիտ Հովհաննես-Օրբելի համար ասվում է՝ «Տէր Օրպելի Յովանէ՝ վերատեսուչ գահերեց երից աթոռոց՝ Տաթեւոյ եւ Նորավանից եւ Ցաղացքարոյ՝ գլուխ երկոտասան գաւազանաց»[291], կամ «Տէր Յովհաննէս մականուն Աւրպէլ, մետրապալիտ եւ այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց»[292]: Եւ վերջապես Ստեփանոս-Տարսայիճը կոչվում է՝ «տէր եւ վերատեսուչ գահերէց եւ գլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց Տաթեւոյ եւ Նորավանից եւ Ցախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց»[293]:

Փաստորեն, Սյունյաց աթոռը ժառանգելով նաև այս վանքերի որպես սեփականատեր են դարձել Օրբելյան տոհմի իշխանազուն եպիսկոպոսները:

Թեեւ աղբյուրներում չի պահպանվել Ստեփանոս-Տարսայիճի հիշատակությունը մետրոպոլիտ կոչումով, բայց դա հավանաբար սկզբնաղբյուրների սակավության պատճառով է: Բանի որ Ստեփանոս-Տարսայիճի երկու նախորդները եւ նրան հաջորդող Սարգիսը կրում է այդ կոչումը, կարծում ենք, որ դժվար թե նա բացառություն կազմեր:

---

289 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 231:
290 Նույն տեղում, էջ 352:
291 A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States..., p. 85.
292 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 183:
293 Նույն տեղում, էջ 231:

Ստեփանոս-Տարսայիճի մահվան թվականը ստույգ հայտնի չէ: Վերջին հիշատակությունները նրա մասին 1331 թվականից են, իսկ 1333 թվականի երկու հիշատակարաններում նշվում է Սարգիսը, որպես աթոռակալ Սյունյաց եւ արքեպիսկոպոս:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Սյունյաց աթոռը 14-րդ դարի կեսերին

Ստեփանոս-Տարսայիճից հետո Սյունյաց աթոռակալ է դառնում Վաղաղնո (Որոտնա) վանքի վանահայր Սարգիսը, Հասանի որդին, եղբայրը Իվանե իշխանի, որոնք, Թովմա Մեծոփեցու վկայությամբ, ծագում էին «ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր»[294]: Դեռ վանահայր եղած ժամանակ Սարգիսը սերտ հարաբերություն է ունեցել Օրբելյանների հետ: Ստեփանոս-Տարսայիճի 1326 թ. արձանագրության մեջ ասվում է. «Տեսի զհիւրանոցն զոր կերտեալ էր հայր Սարգիս վասն արեւշատութեան պարոն Բուրթելին եւ զաւակացն իւր Բէշքենին եւ Իվանեա...»[295]: Սարգսի եղբայր Իվանե իշխանը, որ հիշվում է որպես «ամիրա եւ պետ երկրին Որոտան», երեք զավակ եւ մեկ դուստր ուներ: Զավակներից մեկը հետագայում հռչակավոր Հովհան Որոտնեցին էր: Իսկ դուստր՝ Թուղթանի իշխանուհու եւ Ամատ Շահուռնեցու միակ դուստր Նաթիլը Բուրթել Մեծի Բեշքեն որդու միակ ժառանգ Էլիկումի (Կուկա) կինն էր[296]:

---

[294] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 11:

[295] Դիվան, Բ, էջ 101: Արձանագրության հրատարակության «կտեալ» բառի «կերտեալ» վերականգնման կապակցությամբ հետաքրքիր կարծիք է հայտնել Ս. Ավագյանը, որն առաջարկում է անփոփոխ թողնել «կտեալ»-ը, որ նշանակում է «տեղավորել, տեղադրել»: Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, Երեւան, 1978, էջ 151–152:

[296] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 177, 179, 189:

Այսպիսով, մի կողմից Օրբելյանների հետ անձնական հարաբերություններ հաստատելով եւ մյուս կողմից առկա խնամիական կապերն օգտագործելով Սարգիսը կարողացել է հասնել Սյունյաց աթոռին (հնարավոր է, որ այդ ժամանակ Օրբելյան իշխանազունների մեջ չկար հոգեւոր իշխանությունը գլխավորելու հարմար թեկնածու): Սարգսից հետո աթոռն գրաղեցրել է Օրբելյան Ստեփանոս-Սուլթանշահը:

Սարգիսն առաջին անգամ հիշատակվում է 1333-ին Վերին Նորավանքում գրված մի ձեռագրում, որպես աթոռակալ Սյունյաց. «ի յաթոռակալութեան սուրբ աթոռոյս Սիւնեաց Տէր Սարգսի»[297]: Նույն թվականին մի այլ Ավետարանի հիշատակարանում կոչված է արքեպիսկոպոս. «ի յարհի եպիսկոպոսութեան մերոյ Տէր Սարգսի»[298]:

Սարգիսն իր աթոռակալության սկզբում «ի յառաջնումն ամի իւրո բարէվայելուչ հայրապետութեանն», ուխտի է մեկնել Երուսաղեմ եւ այստեղ ստացել է 1306 թ. Կիպրոսում ընդօրինակված մի Սաղմոսարան (Երուսաղեմ, ձեռ. 1033): Հիշատակարանն այդ մասին գրվել է 1337 թ., որի մեջ Սարգիսը երկիցս կոչվում է մետրոպոլիտ, փառաբանվում է ամենարաղմատան մակդիրներով. «բազմերջանիկ արհիական քաւչապետս եւ մետրապոլիտս մեծ Հայոց, մանավանդ տանս Սիւնեայ եւ պռոտոֆրօնտէս սուրբ հայրապետանոցիս Տաթեւոյ եւ աշխարհիս Սիսական»[299]: Հիշատակարանում մանրամասն տվյալներ են հաղորդվում Սարգսի ազգականների մասին. «...ստացող եղեւ...մեծ մետրապոլիտս Տէր Սարգիս... յիշատակ անջինջ իւր եւ ծնողաց իւրոց, հօր իւրոյ Հասանայ, որ էր յազգէ եւ յազնէ մեծափառ իշխանաց տանս Սիւնեաց, եւ մօր իւրո տիկին Վախախին եւ եղբօր իւրում պայազատի... Իվանէի, որ էր ամիրա եւ պետ երկրին

---

[297] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 257:
[298] Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի, էջ 71:
[299] Ն. Պողարեան, Մայր ցուցակ..., հ. Դ, էջ 48:

Որոտան եւ եղբօրորդւոյ իւրոյ կորովամիտ սրբազան նորընծա քահանայի Յովաննիսի (Որոտնեցին է, ծ. հ.)... նայ եւ եղբարց սորին... Հասանայ եւ Զաքարէի...»[300]:

Նույն 1337 թվականին Սարգիսը Սյունիքում ստացել է Մանրուսման մի ձեռագիր, որի հիշատակարանում կոչվում է. «Մեծ եւ ամենեղջանիկ մետրապոլիտն եւ արհիական գլուխն այսմ նահանգիս Տէր Սարգիս»[301]*: Նույն թվականին նրան հիշատակում է Ավագ գրիչ-մանրանկարիչը Թավրիզում Բուրթել Մեծի որդու՝ Բեչքենի համար ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում՝ «ի վերատեսչութիւն եպիսկոպոսութեան տեառն Սարգսի մետրապոլտի եւ ի դպրապետութեան մեծ հռետորին Եսայեա»*[302]*: Հիշատակարանը նաեւ տեղեկացնում է, որ Բեչքենը մատյանը գրել է տվել ի հիշատակ իր մահացած կնոջ՝ Փաշայի ու նվիրել Տաթեւի վանքին, որը կոչվում է՝ «...յիւր սեփհական եւ գերահռչակ մեծ ուխտն Տաթեւոյ...»*[303]*: Տաթեւի հետ կապված այս հիշատակությունը դալիս է վկայելու, որ Տաթեւի վանքը, թերեւս նաեւ Նորավանքն ու Յախացքարի վանքը, հանդիսանում էին որպես Սյունյաց աթոռակալների սեփական կալվածք, անկախ այն հանգամանքից, նրանք Օրբելյան տոհմից էին սերվում, թե ոչ:*

Սարգսի աթոռակիցն է եղել Ներսես անունով եպիսկոպոսը: Պահպանվել է նրանց համատեղ պատկերը՝ 1337 թվականից, որի արտանկարը տպագրեալ է Ալիշանը[304]*: Իսկ հիշատակարանում նշվում է. «զարհիական գլուխն զՏէր Ներսէս եւ զազգայինս նորա զամենայն, զհայրն Գրիգոր եւ զեղբայրն նորա Սարգիս սարկաւագն...»*[305]*:*

---

[300] Նույն տեղում:
[301] Նույն տեղում:
[302] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 292:
[303] Նույն տեղում, էջ 293:
[304] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 21:
[305] Նույն տեղում, էջ 21:

Դրանից հետո Սարգսի կամ Ներսեսի անվանն այլևս չենք հանդիպում[306]:

Իր վախճանին էր մոտենում մոնղոլական աշխարհածավալ կայսրությունը: Գրեթե ողջ 13-րդ դարը ծաղկում ապրած Սյունիքի համար սկսվում են ծանր պատմական ժամանակներ: Աբու-Սեյիդի մահից հետո՝ 1335–1344 թթ. ինը տարում իլխանության գահը գրավում է ութ խան: Ներքին խարդավանքները, գահակալական կռիվները վերջնական քայքայման են հասցնում պետությունը: Հոգեվարք ապրող իլխանության վերջին բռնակալների կամայականությունների ու Սյունիքի նկատմամբ կիրառվող արտաքին ճնշումների այս շրջանում մահանում է չորս տասնամյակից ավելի երկրամասը կառավարող Բուրթել Մեծը: Ժամանակաշրջանի համար բնութագրական է Թուղթանի իշխանուհու 1349 թ. հիշատակարանը, ուր նա գրում է. «...յետ... թագաւորայշնորհ պարոն Բիւրդելին եւ Վախախին, որ ի Քրիստոս փոխեցան, յետ սոցա մահուանն անկաւ սով սաստիկ, կոտորեցան յերիս մասանց Հայոց աշխարհիս, եւ յետ սովուս...անկաւ մահ տարաժամ յամենայն աշխարհիս եւ տարաւ զկէսայ մասն աշխարհիս...»[307]:

1337 թվականից հետո մինչեւ դարավերջ Սյունյաց աթոռակալների մասին տեղեկությունները շատ սակավ են: Հարցի քննությամբ զբաղված Լ. Խաչիկյանն անդրադառնալով իրենից առաջ եղած ուսումնասիրողների կարծիքներին, գրում է. «Այդ տարեթվից հետո յոթանասունամյա անջրպետ կա, որ Ղ. Ալիշա-

---

[306] Սարգսի եղբոր դուստր Թուղթանի իշխանուհուին 1349 թ. գրած ընդարձակ եւ բավական մանրամասն հիշատակարանում մեծարանքով հիշում է հորը՝ «Իւանէ թագաւորատոհմ... իշխեցողի Որոտան գաւառի», իրեն կոչում «քոյր բաջ քարտուղարի եւ երջանիկ բաբունապետի Յովաննէս վարդապետի» նշում է նաեւ մորը եւ մյուս երկու եղբայրներին, բայց ոչ հորեղբորը՝ Սարգիս մետրոպոլիտին (Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 374–375): Այստեղից կարող ենք ենթադրել, որ Սարգիսը, հավանաբար, մահացել էր 1349 թվականից բավական ժամանակ առաջ:

[307] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 375:

նը դատարկ է թողել՝ բազմակետեր դնելով, իսկ Արտակ եպս. Սմբատյանն ու Նորայր եպս. Պողարյանը լրացրել են Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու եւ Առաքել Սյունեցու անուններով: Սակայն Սարգիս մետրոպոլիտն եւ Հովհան Որոտնեցին շարունակական շղթա չեն կազմում, շուրջ 40-ամյա անորոշ ժամանակաշրջանով նրանք անջատված են»[308]:

Վաստակաշատ ուսումնասիրողն այդ բացը մասամբ լրացրել է Ստեփանոս-Սուլթանշահ եպիսկոպոսին վերաբերող տեղեկությունների հրապարակմամբ:

Պահպանվել է 1366 թվականի շուրջ գրված Ստեփանոս-Սուլթանշահի ինքնագիր հիշատակարանը, ուր նա հանդես է գալիս որպես վկա մի ձեռագրի վաճառքի ժամանակ. «Ես Տէր Ստեփաննոս մականուն Սուլթանշահ, թոռն Բու(ր)թելին որդի Նանկի(ն), եղբաւրն (Բ)շքինի պարոնի՝ ի Քրիստոս է հանգուցեալ: Մեք վկայ եմք այս Աւետարանիս Վահրամայ եւ իւր եղբայր... իւրեանց հալալ արդեամբք գնեցին զայս սուրբ Աւետարանս, Աստուած շնորհաւոր առնէ, ամէն»[309]: Նանիկը (Իվանիկ, Ինանիկ) Բուրթելի որդի Իվանեի անվանաձեւերից է:

Այսպիսով «Տէր Ստեփաննոս մականուն Սուլթանշահ» Օրբելյան տոհմից սերող Սյունյաց հերթական եպիսկոպոսն է: Ինչպես նշում է Լ. Խաչիկյանը, Սուլթանշահ մականունը «հնարավորություն է ընձեռում նույնացնելու այս տեր Ստեփանոսին՝ «Տաղ Տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին» պոեմի նահատակ հերոսի հետ: ...Ստեփանոսի աշխարհական անունն ի հայտ է գալիս այն տողերից, որ գրել է պոեմի հեղինակը որդեկորույս մոր բերանին. սա ողբում է վաղաթառամ իր որդուն՝ կոչելով. «Որդեա՜կ իմ, որդեա՜կ, Սաւլթանշայ: Նահատակութ-

---

[308] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 191:

[309] Մատենադարան, ձեռ. 9450, էջ 373բ, հմմտ. Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 179–180:

յան տարեթիվը չգիտենք, բայց պետք է եղած լինի 1366-ից հետո եւ 1377-ից առաջ»[310]:

Ստեփանոս-Սուլթանշահը թաղվել է Հերմոնի վանքում: 1423 թ. Թովմա Բերդավանեցու գրած հիշատակարանում թվարկվում են այստեղ հանգչող նշանավոր գործիչները՝ «Աստ հանգուցեալ կան Տիրայտուր վարդապետն, Գրիգոր վարդապետն, Բարսեղ վարդապետն, Տեր Սուլտանշէն...»[311]:

Մի փոքր անդրադառնանք «Տաղ Տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին» պոեմին: Դրա մանրամասն ուսումնասիրությամբ զբաղվել է Աս. Մնացականյանը[312], սակայն չիմանալով, որ պոեմի հերոսը նույնացվում է Ստեփանոս-Սուլթանշահի հետ: Թեեւ ստեղծագործության պահպանված երեք տարբերակներից ոչ մեկն ամբողջական չէ, հիշատակված անձնանունները եւ տեղանունները սակավ են, սակայն բովանդակությունը որոշակի է: Աս. Մնացականյանը գրում է. «...պոեմի հերոսը՝ Ստեփանոսը... դաստիարակվել է Թավրիզում, իսկ հետո հաստատվել Սյունյաց աշխարհում՝ որպես այնտեղի եպիսկոպոս եւ իշխան: Մոնղոլական բռնատիրության պայմաններում այսպիսի բարձր պաշտոնը ինքնին ենթադրում է համապատասխան ընտանիք եւ ուժեղ կապեր՝ տիրող եւ տեղացի ազդեցիկ շրջանների հետ»[313]:

Պոեմի անանուն հեղինակը Ստեփանոսին երբեմն կոչում է «Տէր Ստեփանոս», երբեմն «իշխան Սիւնեաց»[314]: Ըստ Աս. Մնացականյանի, հիմնական դրամատիկ գործողությունները կատարվել են Թավրիզում, սակայն բուն պոեմից դա չի երեւում, այնտեղ միայն ասվում է, որ Ստեփանոսը զինվորություն է

---

[310] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրբելյան ճյուղը, էջ 191–192:
[311] ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 301:
[312] Աս. Մնացականյան, Միջնադարյան հայրենասիրական մի նորահայտ պոեմ «Տաղ Տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին», «Բանբեր Մատենադարանի», 1967, 8, էջ 291–316:
[313] Աս. Մնացականյան, Միջնադարյան..., էջ 298:
[314] Նույն տեղում, էջ 307–315:

արել Թավրիզում, իսկ իրադարձությունների թատերաբեմը, մեր կարծիքով, հենց Սյունիքն է: Դեպքերը այսպիսին են. Ստեփանոսի հայրը, որը պոեմում կոչվում է «Մեծ Դիւանի», ունի հայ կին, որից ծնվել է Ստեփանոսը, եւ այլազգի կին՝ էլ-խութլու անունով, որը համարվում է «զմայրն ամէն չարեաց»: Ժողովուրդը նրան բոլոր դժբախտությունների պատճառ համարելով, Ստեփանոսից պահանջում է նրա մահը եւ Ստեփանոսը կատարում է այդ պահանջը: Այս մասին իմանալով «զինուորքն չարին» դալիս են Ստեփանոսի հոր մոտ եւ համառորեն պահանջում սպանվածի արյան վրեժը.

«Գոչեցին կրկին
Զինուորքն չարին,
Ասեն. «Տո՛ւր ի մեզ, զի սպանցուք
Այսաւր քո զորդին»:
Դողաց վերըստին,
Լայր սիրտն ի փորին,
«Քահանայապետ է», ասէ,
«Կարդէն պատկառիմ»:
Դարձեալ վերըստին
Գոչէն զայրագին.
«Եթե ո՛չ տայցես մեզ հրաման՝
Մեռցի՛ս ընդ նմին»[315]*:*

Ճարահատված հայրը ստիպված համաձայնություն է տալիս եւ Ստեփանոսին սպանում են: Պոեմի շարունակությունը նրա համար կատարվող ողբն է, որ ներկայացված է հուզական շնչով: Ստեփանոսին դառնորեն ողբում է հայուհի մայրը՝ «Որդեա՛կ իմ, որդեա՛կ, Սալթանչայ», եւ վրեժ պահանջում՝ «Վրէ՛ժ սպանողին», անգամ զոհվածի նժույգը լեզու է առնում, ասելով

[315] Նույն տեղում, էջ 308:

«Հասնիմք աւգնական Սիւնեաց իշխանին», ողբում ու բորբոքվում է ողջ դավառը՝

«Հուր բորբոքեցաւ
յեղեգեց Զորին,
Հրդեհեալ կիզեաց զբոլոր զայն
Բնակիչք երկրին»[316]:

Ցավոք պատմական այլ վկայություններ չունենք, որով հնարավոր լիներ լրացուցիչ տեղեկություններ քաղել պոեմի համար հիմք ծառայած դեպքերի վերաբերյալ: Սակայն հիշյալ շրջանում անսովոր չէ հայ իշխանի՝ նաեւ մոնղոլ վերնախավից կին առնելու սովորությունը: Իսկ վերջինիս սպանության դեպքում նրա հարազատներն անպայման վրեժխնդիր կլինեին:

Ամեն դեպքում, պոեմի դեպքերի վավերական հիմքին դժվար է կասկածել, (նման կասկած չի հայտնել նախորդ ուսումնասիրողներից եւ ոչ ոք), ուստի ստիպված ենք ընդունել, որ Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս-Սուլթանշահը, որն Օրբելյան տոհմից սերող իր նախորդների պես եղել է հոգեւոր առաջնորդ եւ միաժամանակ իշխան, (Հովհաննես-Օրբելի ու Ստեփանոս-Տաթեւացի նման հոգեւոր-աշխարհիկ երկանուն կրել), սպանվել է: Գուցե հենց այս հանգամանքով պետք է բացատրել այն, որ նրանից հետո Սյունյաց աթոռը բավական ժամանակ չի ունեցել նախկին կարգավիճակով արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ առաջնորդ, այլ միայն տեղապահ, մի դեր, որ կատարել են Սյունիքում հաստատված հայոց վարդապետարանի բարուներապետները՝ Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին:

[316] Նույն տեղում, էջ 310:

2. Հովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի

Հայոց պատմության եւ Հայ առաքելական եկեղեցու երկու խոշորագույն գործիչներ, գիտնական վարդապետներ Հովհան Որոտնեցուն եւ Գրիգոր Տաթեւացուն ստորեւ պետք է անդրադառնանք Սյունյաց աթոռի պատմության մեջ կատարած նրանց դերի լուսաբանման տեսանկյունից: Սակայն մինչ այդ համառոտակի անդրադառնանք հայոց միջնադարյան համալսարանին, որը Եսայի Նչեցու մահից հետո տեղափոխվեց Հերմոի վանք, ապա իր գոյությունը շարունակեց հենց Հովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու բաբունապետությամբ:

1338 թ. մահանում է Եսայի Նչեցին եւ Գլաձորը դադարում է աղբյուրներում հիշատակվել: Գ. Հովսեփյանը գրում է. «Այս վանքի պատմությունը տարօրինակ սկիզբ եւ վախճան ունի... անհայտությունից հանկարծ երեւան է գալիս ԺԳ դարի ութսունական թվականի սկզբում, իբրեւ Արեւելյան Հայաստանի մտավոր կենտրոն, եւ հանկարծ չքանում անհայտության մեջ ԺԴ դարի կեսին: Անորոշ է նույնիսկ տեղը»[317]:

Հարցի ուսումնասիրությամբ զբաղված Ա. Մաթեւոսյանն այս կապակցությամբ գրում է. «Այն, ինչ ասվեց Գլաձորի վանքի մասին, Գլաձորի համալսարանին չի վերաբերում: Եսայի Նչեցու համալսարանը շարունակությունն էր հայոց նախորդ վարդապետարանների եւ «անհայտությունից հանկարծ երեւան» չեկավ, ոչ էլ «հանկարծ չքացավ անհայտության մեջ»... Հայոց միջնադարյան առաջին համալսարանին վիճակված էր անցնելու երկար ճանապարհ, տարբեր ժամանակներում հաստատվելով տարբեր վանքերում... Գլաձորի համալսարանն այդպիսի ճակատագիր է ունեցել եւ այդպես է ընկալվել դեռեւս միջնադարում: Մատթեոս Ջուղայեցին, Գրիգոր Տաթեւացու

---

[317] Գ. Յովսեփեան, Խաղբակեանք..., էջ 250:

վարքը շարադրելիս, գրում է. «Մեծ փիլիսոփայն Հայոց Յոհաննէս Որոտնեցին... զկնի մահուանն իւր ետ հրաման (Գրիգոր Տաթեւացուն – Ա. Մ.) նստել յաթոռ մեծ համալսարանին Եսայեայ եւ բարունապետ Հայոց Մեծաց»: Այսինքն Տաթեւի համալսարանը շարունակությունն էր «մեծ համալսարանին Եսայեայ»[318]:

1338 թ. Գլաձորի համալսարանը երկրորդ բարունապետ Տիրատուր Կիլիկեցու գլխավորությամբ թողնում է Գլաձորի վանքը եւ հաստատվում Վայոց ձորի Հերմոնի վանքում, որը գտնվում էր Օրբելյանների տիրույթում: Դա կապված էր քաղաքական պայմանների փոփոխության հետ, քանի որ խիստ թուլացել էին Պռոշյանները եւ համալսարանը կորցրել էր հովանավորող տներից մեկին:

Հերմոնի վանքում տեղավորված Հայոց համալսարանի մասին քիչ տեղեկություններ են պահպանվել: Այստեղի աշքի ընկնող սաներից էին Հովհաննես Որոտնեցին, Սարգիսը (հետագայում Որոտնեցու գործակիցը), Սիմեոն Ռշտունցին, Վարդան Ճգնավորը, Կիրակոսը եւ ուրիշներ: Հերմոնի վանքում համալսարանը գոյատեւում է մինչև 1356 թ., ապա տեղափոխվում նոր բարունապետ Հովհան Որոտնեցու հայրենի գավառ:

Հովհան Որոտնեցին (մականունը՝ Կախիկ), որն ինչպես վերը նշվեց, Սարգիս մետրոպոլիտի եղբորորդին էր, ծնվել է 1313 թվականին, Որոտան գավառի Վաղադին գյուղում, Սյունյաց նախարարների հին տոհմից սերող Որոտանի իշխան Իվանեի ընտանիքում: Գլաձորում Եսայի Նչեցուց քահանայական ձեռնադրություն, իսկ Հերմոնում Տիրատուր Կիլիկեցուց վարդապետական աստիճան է ստացել: Իր գործունեության ընթացքում եղել է Մարաղայում, Տփղիսում, Դարանաղյանց գավառում,

---

[318] Ա. Մաթեւոսյան, Հայոց միջնադարյան համալսարանը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1984, 1, էջ 68:

Երուսաղեմում, Գոլթն դավառի Սինեական անապատում, Վաղադնի վանքում, Ծարում, Երնջակի Ապրակունյաց վանքում:

Որոտնեցին համալսարանի բարձունապետությունը ստանձնել է 1356 թվականին: Տաթևի վանքում համալսարան է հիմնել 1373 թ., անհաշտ պայքար մղել կաթոլիկ քարոզիչների ու նրանց հարած հայ ունիթորների դեմ: 1379 թ. Ապրակունյաց վանքից վտարել է կաթոլիկներին, այստեղ դպրոց հիմնել, ղեկավար նշանակելով իր աշակերտ Գրիգոր Տաթևացուն:

Որոտնեցու աշակերտներից ունիթորների դեմ պայքարում աչքի է ընկել հատկապես Մաղաքիա վարդապետ Ղրիմեցին, որ ծնվել էր Կաֆայում, զգալի նյութական միջոցների տեր էր, և իր ողջ ունեցվածքը դրեց ի սպաս Հայ եկեղեցուն: Տեսնելով միջոցների մեջ խտրություն չդնող միաբարների գործելակերպը, Ղրիմեցին նրանց հակադրեց նույն այդ միջոցները եւ բավական հաջողություններ հասավ: Ունիթորները կաշառված մեկի ձեռքով թունավորեցին ու սպանեցին Մաղաքիա Ղրիմեցուն 1384 թ.[319]:

Տաթեւում Որոտնեցին 60 ուսանող ուներ: Ժամանակակիցները նրան մեծարում են «մեծ վարժապետ», «տիեզերալոյս բարձունապետ», «աստուածարեալ բարձունապետ» եւ այլ տիտղոսներով[320]: Ուշագրավ է, որ 1371 թ. հիշատակարանում Գրիգոր Տաթեւացին չեշտում է իր ուսուցչի նաեւ «պարոն» լինելը՝ «...աղաչեմ եւ զբաղմերախտ հոգեշահ պարոն՝ զմեծ վարդապետն Յովհաննէս, որդի քաջի Իւանէի՝ Որոտան իշխեցողի...»[321]:

1386 թ. մի հիշատակարանում Որոտնեցին կոչվում է. «տիեզերահամբաւ եւ երանաշնորհ բարձունապետ Հայաստանեաց եւ վերադիտող տէր Յովհան Որոտնեցի»[322]: Այս առնչութ-

---

[319] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2289, 2301:
[320] Նույն տեղում, էջ 497, 498, 501, 507, 514, 556:
[321] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 497
[322] Նույն տեղում, էջ 560:

յամբ Լ. Խաչիկյանը գրում է. «Վերադիտող» բառացի նշանակում է եպիսկոպոս, ուստի վիճելի կամ ինչ-որ տարիների համար միայն ստույգ պետք է համարել Հ. Աճառյանի հաղորդած տվյալը, ըստ որի «Հրավիրվեց Սյունյաց առաջնորդական աթոռը, բայց նա մերժեց»[323]:

Հովհան Որոտնեցու եպիսկոպոս լինելու ենթադրությունը հաստատելու համար Լ. Խաչիկյանը վկայակոչում է նաեւ նրա աշակերտներից մեկի՝ Հակոբ կրոնավորի հիշատակարանը, ուր ասված է, որ խուսափելով օտար զավթիչներից (որոնք ներխուժել էին Սյունիք, գրավել Որոտան բերդն ու ցանկանում էին ձերբակալել նաեւ Որոտնեցուն «վասն հայրենեացն ժառանգութեան»), նա փախուստ է տալիս ու աղատվում. իսկ ապա՝ կրկին վերադառնում «ի վերայ վանորէից իւրոց, ի գաւառն Երնջակայ», եւ որոշ ժամանակ խաղաղ կյանք վարում. «Շինէր եւ հաստատէր զսուրբ եկեղեցիս շքեղ եւ փառաւոր ի մեջ անօրէն իշխանաց եւ բերթաւագաց»[324]: Այս հիշատակարանից իհարկե չի երեւում, որ Որոտնեցին եպիսկոպոս էր, եւ Լ. Խաչիկյանն իրավացիորեն այն անվանում է «անուղակի տվյալ», սակայն, այնուամենայնիվ եզրակացնում է. «Այս անուղակի տվյալները հուշում են, որ Հովհան Որոտնեցին, եթե նույնիսկ չի օծվել պաշտոնապես Սյունյաց եպիսկոպոս, ապա փաստորեն իր կյանքի վերջին տարիներին վարել է այդ պաշտոնը»[325]:

Հովհան Որոտնեցին 1386 թ. մահանում եւ թաղվում է Երնջակի Ապրակունյաց վանքում, որից հետո համալսարանի բաբունապետ է դառնում Գրիգոր Տաթեւացին:

Այն, որ Սյունիքում այդ տասնամյակներին առաջնորդի պաշտոն վարող այլ եպիսկոպոս չի եղել, ակներեւ է, քանի որ

---

[323] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 192: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ էջ 628:
[324] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 560:
[325] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 193:

այդ դեպքում անպայման կհիշատակվեր Որոտնավանքի, Տաթեւի, Ապրակունիսի կամ երկրամասի այլ վանքերի ու բնակավայրերի ձեռագրերի հիշատակարաններում: Միաժամանակ դժվար է հավատալ, որ եթե նույն Հովհան Որոտնեցին կամ նրան հաջորդած բաբունապետ Գրիգոր Տաթեւացին Սյունյաց եպիսկոպոս լինեին, այդ տիտղոսով չհիշատակվեին իրենց կամ աշակերտների տասնյակ հիշատակարաններում:

Մեր կարծիքով, այս շրջանում Սյունիքում առաջացած քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով հնարավոր չէր նախկին ձեւով շարունակել եպիսկոպոսական, մետրոպոլիտական այն իշխանությունը, որը հիմնել էին Օրբելյան աթոռակալները Ստեփանոս Օրբելյանից սկսած: Դա, փաստորեն, հոգեւոր եւ աշխարհիկ իշխանության յուրօրինակ համատեղում էր: Ճիշտ է, Հովհան Որոտնեցին նույնպես իշխանազուն էր, բայց օժտված չէր այնպիսի ժառանգությամբ եւ իշխանությամբ, որով հնարավոր լիներ Սյունյաց աթոռակալ դառնալ: Նրա համար դժվար էր պահել անգամ հայրենի Որոտանը («Թուրքն էառ զբերդն զՈրոտան եւ Կախիկ վարդապետն գնաց փախստական ի Ծարայ...», «եկին եւ առին զբերդն Որոտան... եւ կամէին ձերբակալ առնել զսուրբ բաբունիս մեր վասն հայրենեացն ժառանգութեան...»)[326]:

Որոտնեցու կատարած մեծագույն գործն այն էր, որ նա դժվարին պայմաններում պահպանեց համալսարանը, ինչպես ժամանակակիցն է վկայում՝ «...ի դառնութեան ժամանակիս... լոյս ծագեաց մթնացեալ եւ խաւարեալ ազգիս՝ մեծ վարդապետն մանկանց Սիոնի... զՅովհաննէս..., որ վերստին զարդարեաց զեկեղեցի եւ սնուցանէր զմանկունս Սիոնի, ջամբելով զկերակուրն կենաց հոգւոց եւ զհանգիստ մարմնաւոր պիտոյից, զցրուեալսն

[326] Մատենադարան, ձեռ. թիվ 7825, էջ 37, թիվ 5707, էջ 485բ:

ի բազում թշուառութեանց՝ ի մի ժողովէր եւ աներկիւղ պահէր ի դէմս ամենայն պակասութեանց հոգւոյ եւ մարմնոյ...»[327]:

Որոտնեցին եւ Տաթեւացին Հայոց համալսարանի բարեւնպաստությունը վարելով, բնականաբար, մեծ հեղինակություն են վայելել եւ որոշ իմաստով համատեղել են նաեւ առաջնորդական տեղապահի դերը: Այս եզրակացությանն ենք հանգում նաեւ Գրիգոր Տաթեւացու գործունեությանը ծանոթանալով:

Գրիգոր Տաթեւացին (աշխարհական անունը Խութլուշահ) ծնվել է 1344 թ.: Նրա հայրը՝ Ամիր Սարգիսը՝ Արճեշից էր, մայրը՝ Փարպի գյուղից: Տաթեւացու ծննդավայրի մասին երկու տեսակետ կա՝ Վրաստանի Թմոգվի բերդավան եւ Վայոց ձոր: Վերջինս վկայված է վարքագրական բնույթի մի հիշատակարանում[328]*: Մանուկ հասակից, նա աշակերտել է Հովհաննես որոտնեցուն: 1371 թ. Հովհան Որոտնեցին, Երուսաղեմ գնալուց վերցնում է նրան իր հետ եւ վերադարձի ճանապարհին, Դարանաղյաց գավառում վարդապետական աստիճան շնորհում:*

Գրիգոր Տաթեւացին Որոտնեցու մահից հետո ստանձնում է համալսարանի բարեւնպաստությունը Ալբակունյաց վանքում, իսկ երկու տարի անց տեղափոխվում է Տաթեւ, ուր ծավա-

---

[327] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 520:

[328] «Գրիգորիոս էր բարեպաշտ ծնաւոյց զաւակ, հաւր անունն Ամիր Սարգիս ի գաւառէն Քաջբերունեաց, ի բաղաքէն Արճիշոյ, եւ մայր նորայ ի գեղջէն Փարպոյ: Եւ վասն հալածման անաւրինաց երրեալ բնակեցան ի գաւառն Սիւնեաց՝ Վայոյ ձոր»: Հիշատակարանում այնուհետեւ ասվում է, որ ծննդաբերության ժամանակ դժվարություն ունենալով Տաթեւացու մայրն աղոթում է՝ բարեխոս ունենալով Գրիգոր Լուսավորչին, տեսիլք է ունենում, եւ դրանից հետո ծննդաբերելով զավակին անվանակոչում Գրիգոր: Ուսման մասին ասվում է՝ «Եւ երթեալ ի Տփխիս Հայոց քաղաք եւ հանդիպեալ մեծ վարդապետին Հայոց Յոհանու Որոտնեցոյ, աշակերտին մեծին յԵսայեայ եւ նայ... առ զմանուկն առ ինքն եւ հանապազաւր վարդապետական ուսմամբ կրթէր: Եւ... առեալ տարաւ զնայ զաստուածակոխ քաղաքն Երուսաղէմ եւ անդ ընկալաւ զաստիճան բահանայութեան... Եւ եկեալ ի գաւառն Եկեղեցոյ յԵզնկայն ետ նմայ զաւագան վարդապետական իշխանութեան եւ անտի դարձեալ եկն ի գաւառն իւր»: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1978, էջ 320–321, տե՛ս նաեւ՝ Հայոց եկեղեցու սրբերը եւ սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ. Մսբեւոսյան, Ս. Էջմիածին, 1999, էջ 204:

լում է ուսումնական, դիտական, հասարակական, մատենագրական բուռն գործունեություն: Այդ շրջանում Տաթևի համալսարանն ապրում է իր ամենածաղկուն շրջանը, որ տևում է շուրջ 15 տարի: Լ. Խաչիկյանը գրում է, որ «Տաթևում եղած տարիներին՝ մինչև 1408 թ., երբ նա «վասն իւիք ինչ պատճառի» ստիպված էր իր դպրոցը տեղափոխել Մեծոփա վանք, Գրիգոր Տաթևացին միաժամանակ (հավանաբար տեղապահի հանգամանքներով) ղեկավարել է Սյունյաց աթոռը»[329]:

Ուսումնասիրողը նաև ավելացնում է, որ Տաթևի վանքում գրված մի շարք հիշատակարանների այն հատվածում, ուր ըստ սովորույթի պետք է հիշատակվեր տեղի եպիսկոպոսը, գտնում ենք միայն Գրիգոր Տաթևացու անունը, որպես «քաջ հռետոր եւ բանիբուն վարդապետ», «ամեներջանիկ դիտապետ Հայոց», «առաջնորդ տանս Սիւնեաց» եւ այլն[330]: Ուշադրավ են հատկապես Հովհաննես գրչի հիշատակարանները, որը 1407 թվականին Տաթևում ձեռագիր է ընդօրինակում «ի տեղապահութեան աթոռոյս... վարժապետին Գրիգորի», մեկ այլ դեպքում խնդրում է հիշել՝ «վարդապետն մեր Գրիգոր..., որ հսկի յաթոռ վարդապետութեան եւ աթոռակալութեան Սիւնեաց վիճակիս»[331]:

Հիշատակարաններում, փաստորեն, նշվում է Տաթևացու տեղապահ լինելու հանգամանքը: Աղբյուրներից երևում է, որ նա չի ստացել եպիսկոպոսական ձեռնադրություն, սակայն բարձունապետի բարձր հեղինակությամբ իրականացրել է Սյունյաց աթոռի «հսկողի» եւ տեղապահի դերը: Այս առումով եւս նա շարունակել է իր նախորդին՝ Հովհան Որոտնեցուն:

Հատկանշական է, որ Ստ. Օրբելյանի Պատմության 1910 թ. հրատարակության վերջում որպես հավելված զետեղված «Շա-

---

[329] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 193:
[330] ԺԵ դարի հիշատականներ, Ա, էջ 34, 60, 77:
[331] Նույն տեղում, էջ 81–82:

բակարգութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց արարեալ ի միաբանից Տաթեւոյ Վանաց» ուշ շրջանի բնագիրը սկսվում է Հովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու անուններով, որոնց մասին ասվում է. «Տէր սուրբ Յովհան Որոտնեցի վարդապետն... Եւ Տէր սուրբ Գրիգոր Տաթեւացին դեր քան զամենայն վարդապետս եկեղեցւոյ, որք թէպէտ ոչ նստան եպիսկոպոսք յաթոռս, այլ ի վեր քան զնստողսն արդիւնաւորեցին զաթոռս Սիւնեաց...»[332]:

Այս շրջանի քաղաքական պատմության մանրամասներին չանդրադառնալով, պետք է նշենք, որ դա լենկթեմուրյան աշխարհավեր արշավանքների շրջանն էր, երբ անհնար էր դիմակայել բազմահազար ասպատակողներին: Հայ իշխանները թեւաթափ էին եղել, երկիրը մնացել էր անպաշտպան: Այս կացությունը բնութագրել է հենց ինքը՝ Տաթեւացին: Նա գրում է. «Յորժամ երկիր առանց իշխանի լինի եւ ժողովուրդն առանց առաջնորդի, բաժանեալ են ի կենդանութեանց, անկեալ ի բարձրութեանց եւ կոխան եղեալ ամենայն մարդկան, եւ ցրուեալք յամենայն հողմոց... որպես ի ժամանակս յայս տեսանեմք յազգս մեր անիշխան եւ անառաջնորդ. իբրեւ զոչխար առանց հովուի՝ գաղանակուր լինին եւ կորչին...»[333]:

Մահմեդական բռնակալների ու ասպատակողների հասցրած հարվածներին այս շրջանում հավելվում էր ժողովրդի հոգեւոր միասնությունը պառակտող ունիթորական շարժումը: Ինչպես նշում է Ս. Արեւշատյանը, Գրիգոր Տաթեւացին «Հովհան Որոտնեցու հետեւորդն էր նաեւ միարարական շարժման, կաթոլիցիզմի գաղափարական ոտնձգությունների դեմ մղվող պայքարում: Պայքարելով միարարների դեմ, Տաթեւացին որպես հեռատես քաղաքագետ բուռն գործունեություն ծավալեց հայոց հոգեւոր կենտրոնը՝ կաթողիկոսական աթոռը հեռավոր եւ

---

[332] Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 524:

[333] Գիրք բարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյ եօթնալոյս վարդապետի, Կ. Պոլիս, 1741, էջ 423:

պապական խարդավանքների ցանցերով խճճված Կիլիկիայից Հայաստան տեղափոխելու համար»[334]: Այդ գաղափարը, որ արծարծել էր դեռ Ստեփանոս Օրբելյանը, իրականություն դարձավ Գրիգոր Տաթեւացու հետեւորդների ու աշակերտների ջանքերով:

1408 թ. Գրիգոր Տաթեւացին Թովմա Մեծոփեցու վկայությամբ «ի հալածմանէ անօրինացն», հեռացել է Սյունիքից, տեղափոխվել Մեծոփավանք եւ այնտեղ դրչության դպրոց հիմնել՝ շուրջ 80 աշակերտ հավաքելով[335]: 1409 թ. նա Երեւանի Անանիա առաքյալի անապատում վարդապետական աստիճան է շնորհել իր տասը աշակերտներին: 1410 թ. Գրիգոր Տաթեւացին վերադարձել է Տաթեւ եւ կարճ ժամանակ անց այնտեղ մահացել: Նրանից հետո Մխիթար վարդապետը դարձել է բաբունապետության աթոռի «տեղապահ»[336]:

3. Սյունյաց աթոռը 15-րդ դարում

Արդեն 14-րդ դարի վերջերին խիստ ծանրանում է Սյունիքի քաղաքական վիճակը: 1386 եւ 1387 թվականներին տեղի են ունենում Լենկթեմուրի (1336–1405) առաջին արշավանքները Սյունիք, ավերվում են մի շարք գավառներ ու ամրոցներ, թուլանում են Օրբելյաններն ու նրանցից վասալական կախման մեջ գտնվող իշխանական տները:

Լենկթեմուրի, ապա Կարա-Յուսուֆի (1405–1420) ու Իսկանդարի (1421–1437) իշխանության շրջանում, պարբերական պատերազմների ու արշավանքների ժամանակ մեծապես ավեր-

---

[334] Ս. Արեւշատյան, Գրիգոր Տաթեւացի, «Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դարեր», (ժողովածու), Երեւան, 1976, էջ 407:
[335] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 79–80:
[336] ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 741:

վում է ինչպես Սյունիքը, այնպես էլ Հայաստանի մեծ մասը: Օրբելյանները, չկարողանալով դիմադրել թշնամու գերազանցող ուժերին, սկսում են աստիճանաբար լքել իրենց կալվածքներն ու ապաստան գտնել Վրաց թագավորության սահմաններում, ուր քիչ թե շատ բարվոք վիճակ էր տիրում: 1412 թվականին Սյունիքից հեռանում են Սմբատ իշխանը եւ նրա որդի Բեշքենը, որոնք իրենց հետ վերցնում են եւ Սյունիքի բնակիչներից մի հոծ զանգված: Իշխանների ու ժողովրդի հետ Սյունիքից հեռանում է նաեւ հոգեւորականների մի մասը եւ հաստատվում Սանահինում: Այս առումով հատկանշական է այդ հոգեւորականներից մեկի՝ Շմավոն վարդապետի հետեւյալ վկայությունը. «Եւ վասն աւերման հրեշտակաբնակ Սուրբ Առաքելոցն (Տաթեւի, ծ. Հ.) զի ընաջինջ աւէր ածին եւ առհասարակ զտներն այրեցին եւ ստացուածքն զամենայն կողոպտեցին. եւ միաբանաւ մերովք փախստական եւ ցանուցիր եղաք աշխարհս Վրաց, աստուածապարգեւ իշխանաւս, մեր եւ ամենայն աւրհնութեանց արժանաւորք պարոնաց Բէշքենաւս, եւ ազատաւք, եւ ժողովրդաւք: Եւ վասն այս պատճառիս բնակեցաք ի սուրբ ուխտս ի Սանահին»[337]:

Իսկ 1417 թ. Գանձասարում գրված մի հիշատակարանում ասվում է. «...ի ժամանակի անիշխանութեանն քրիստոնէից, քանզի այն, որ կայր մնացեալ շառաւիղ տանն Բիւրթելեանց՝ գնաց փախըստական ի Տունն Վրաց, որոյ անուն Սըմբատ կոչիւր... եւ մնացեալ Բ (2) որդիք իւր եկին ի հայրենիս իւրեանց եւ ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց»[338]:

Սյունիքից հեռանում է շուրջ 6000 տուն, սակայն Վրաց թագավորության մեջ եւս նրանց հանգիստ կյանք չէր սպասվում: 1438-ին թունավորում են Բեշքեն Օրբելյանին: «Բեշքենի

---

[337] Նույն տեղում, էջ 470:
[338] Նույն տեղում, էջ 194:

մահվամբ 1438 թ. փաստորեն վերջ տրվեց Օրբելյանների իշխանությանը Հայաստանի հարավ-արևելյան շրջաններում, գրում է Գ. Գրիգորյանը[339]: Օրբելյանների Բուրթելյան ճյուղին նվիրված իր ուսումնասիրության մեջ Լ. Խաչիկյանը ցույց է տալիս, որ Օրբելյանները որպես աշխարհիկ եւ հոգեւոր տերեր շարունակում են հանդես գալ Սյունիքում մինչեւ 15-րդ դարի վերջերը[340], թեեւ նրանք այլեւս չունեին նախկին հնարավորությունները ու իշխանությունը:

1430–50 թվականներին քաղաքական ասպարեզում հանդես է գալիս Բեշքենի որդի Ռուստամ Օրբելյանը, որն օգտագործելով կարակոյունլուների առաջնորդների միջեւ եղած հակասությունները եւ բարձր դիրք գրավելով Սքանդարի արքունիքում, կարողանում է բավականին կալվածքներ ձեռք բերել ինչպես Սյունիքում, այնպես էլ Հայաստանի տարբեր շրջաններում: 1431-ին, հավանաբար Երեւանի նահանգի կառավարիչ լինելով, նա վաճառքի անվան տանկ Ս. Էջմիածնին է նվիրում յոթ մեծ գյուղ: Էջմիածնի վանքի՝ Ռուստամի նվիրած գյուղերի սեփականատեր լինելու հանգամանքը կարեւոր նշանակություն է ունենում 1441 թ. կաթողիկոսական աթոռի այստեղ վերահաստատվելու գործում:

1437-ին քաղաքական իրավիճակի փոփոխության հետեւանքով Ռուստամ Օրբելյանը հեռացել է Սյունիքից եւ հաստատվել Լոռիում, որն Օրբելյանների երբեմնի կալվածքն էր[341]: Սակայն 1451-ին նա կրկին եկել է Սյունիք եւ համաձայն պահպանված կալվածագրի, Տաթեւի վանքին վաճառել չորս գյուղ[342]: Դրանից հետո էլ Սյունիքում պահպանվել են Օրբել-

---

339 Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 260:
340 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 1184–197:
341 Հ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 205:
342 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 186:

յան տոհմի ներկայացուցիչներ, բայց որպես փոքր կալվածատերեր:

Կարելի է ասել, որ 15-րդ դարի կեսերին ավարտվում է Սյունիքի պատմության Օրբելյանների ժամանակաշրջանը:

Այժմ տեսնենք, թե Օրբելյանների իշխանության վերջին շրջանում ինչ վիճակում էր Սյունյաց աթոռը եւ ինչ տեղեկություններ են պահպանվել աթոռակալ եպիսկոպոսների մասին:

*Գրիգոր Տաթեւացու տեղապահության վերջին տարիներին ասպարեզ է գալիս մեկ այլ գիտնական եւ բանաստեղծ հոգեւորական՝ **Առաքել Սյունեցին** (ծն. 1355 թ.)[343], որը Տաթեւացու քրոջ որդին էր եւ հիշվում է որպես եպիսկոպոս (հոր անունն է Դավիթ, մորը՝ Մելիք):*

1401 եւ 1403 թվականներին իր հեղինակած «Ադամգրքի» հիշատակարաններում Առաքելն իրեն կոչում է «Տեր Առաքել»[344], հետեւաբար այդ ժամանակ արդեն եպիսկոպոս էր: Զափածո հիշատակարանում նշում է Օրբելյան իշխաններ Սմբատին եւ նրա եղբայր Բուրթելին, իսկ որպես դժնի ժամանակի բնութագրում՝ հատկանշական են այս տողերը՝

«Զի ես՝ Տէր Առաքեալ միտկս ցընդեալ էր,

Ի յայս ժամանակիս սուլթան Թամուրն էր...»[345]:

Թովմա Մեծոփեցին նշում է, որ երբ 1406 թ. Տաթեւ է գնում Գրիգոր Տաթեւացուն աշակերտելու, այդ ժամանակ տեղի վանահայրը Առաքել եպիսկոպոսն էր. «...դնացաք ի գաւառն Սիւնեաց առ մեծն Գրիգորիոս վարժապետն ամենայն Հայոց... Եւ էր սուրբ ուխտին առաջնորդ հեզահոգին եւ ընտրեալն յորովայնէ սուրբ եպիսկոպոսն Տէր Առաքել եւ մեծ իմաստասէրն՝ քուերորդի մեծ վարժապետի»[346]:

---

[343] Ա. Մադոյան, Առաքել Սյունեցի բանաստեղծը, Երեւան, 1987, էջ 3:
[344] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 10–11, 38:
[345] Նույն տեղում, էջ 35, 38:
[346] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 76–78:

Գրիգոր Տաթեւացին 1407-ին իր «Քարոզգրքի» հիշատակարանում հետեւյալ տողերով է նշում Առաքելին՝

«Նախ քեռորդւոյն իմ ըստ մարմնի
Ծնընդամիտ երդաբանի՝
Առաքելոյ առաքինի,
Եւ Սիւնական գլուխ արհի»[347]:

1422 թվականին Անգեղակոթ գյուղում նա Ավետարան է ընդօրինակել, որի հիշատակարանում նշում է. «Կատարեցաւ սուրբ եւ աստուածախաւս Աւետարանս ձեռամբ Տէր Առաքելոյ Սիւնեաց, յանապատիս Անգեղակութոյ...»[348]: 1425 թվականի մի հիշատակարանում նշվում է, որ նա արդեն մեռած էր՝ «...բաբունապետն զՏէր Առաքել կոչեցեալ՝ զհանդուցեալն ի Քրիստոս»[349]:

Լ. Խաչիկյանն, անդրադառնալով նախորդ հետազոտողներին գրում է. «Ալիշանը Առաքելին Սյունյաց եպիսկոպոս էր համարում 1407–1422 թվականների միջոցին, Ն. Պողարյանը՝ 1407–1416 թվականներն է նշում, Մ. Պոտուրյանը եւ նրան հետեւող Ն. Տեր Ներսեսյանը՝ 1401 կամ 1403-ից են սկսում նրա եպիսկոպոսության տարիները»[350]: Այնուհետեւ ուսումնասիրողը ներկայացնում է իր տեսակետը՝ «Գր. Տաթեւացու եւ Առաքել Սյունեցու մասին ներկայացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ մինչեւ 1407 թվականը Սյունյաց մետրոպոլիտության ղեկը գտնվում էր Տաթեւացու ձեռքում: ...Սյունյաց եպիսկոպոսներն իրենց կենդանության օրոք հաճախ ունենում էին նաեւ փոխանորդ եպիսկոպոսներ, ուստի Առաքելը անձնիշ-

---

[347] ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 73:
[348] Նույն տեղում, էջ 292:
[349] Նույն տեղում, էջ 336:
[350] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 194:

խան Սյունյաց եպիսկոպոս կարող էր լինել միայն Գր. Տաթեւացու Մեծոփա վանք մեկնելուց (1408 թ.) հետո»[351]:

Ինչպես վերը տեսանք, Տաթեւացին եպիսկոպոս չէր, իսկ Առաքելը 1401-ին արդեն իրեն «Տէր Առաքել» անվանելով խոստովանում է եպիսկոպոս լինելը: 1406-ին Թովմա Մեծոփեցին նրան կոչում է Տաթեւի վանահայր եւ «սուրբ եպիսկոպոս», իսկ 1407-ին՝ Գրիգոր Տաթեւացին՝ «Սիւնական գլուխ արհի», ոչ մի կասկած չթողնելով, որ այդ ժամանակ Առաքելը Սյունյաց աթոռակալն էր: Ըստ երեւույթին Տաթեւացու «տեղապահությունը» 15-րդ դարի սկզբից ի վեր զուգորդվել է Առաքելի եպիսկոպոսությամբ:

Առաքել Սյունեցու վերջին շրջանում Սյունյաց աթոռը ունեցավ Օրբելյան տոհմից մեկ այլ աթոռակալ՝ Ստեփանոս-Իվանե անունով: 1406 թ. Տաթեւում գրված մի հիշատակարանում նա հիշվում է հոր եւ եղբոր հետ. «յիշխանութեան պարոն Սմբատին եւ որդոց նորին Բէշքէնին եւ Իւանէին»[352]: Երբ կարակոյունլուները գրավեցին Բուրթելյանների կալվածքները, Սմբատն ու նրա որդի Բեշքենը գաղթեցին Վրաստան: 1412-ին Վրաստանի Աֆլիսցիխե գյուղաքաղաքում Մելքիսեդեկ գրիչը հիշատակարանում գրում է. «...եղեւ զրաւ գրչութեան սորա յաշխարհս Վրաց... ի գեղաքաղաքիս Աֆլիսցիխէ... իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի եւ որդւոյ նորին պարոն Բէշքենին, որ ի յաստմանէ չարին վտարեցան ի հայրենեաց իւրեանց...»[353]: Ինչպես տեսնում ենք Սմբատի մյուս որդին՝ Իվանեն նրանց հետ չէր: Նա հոգեւոր կոչում էր ստացել եւ մնացել Սյունիքում:

1419 թ. Հերմոնի վանքում Գրիգոր Ախալցխեցու գրած արժեքավոր հիշատակարանից իմանում ենք, որ Իվանեն՝ Ստեփա-

---

[351] Նույն տեղում:
[352] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 58:
[353] Նույն տեղում, էջ 133:

նոս-Իվանե հոգեւոր-աշխարհիկ երկանունով (շարունակելով Օրբելյան նախորդ եպիսկոպոսների անվանակրության ավանդույթը) հանդես է գալիս որպես Սյունյաց եպիսկոպոս. «ի հայրապետութեան այսմ նահանգի Տէր Ստեփանոսի, մականուն Իւանէի, որդի Սմբատայ եւ եղբայր Բէշքէնի»[354]:

Լ. Խաչիկյանն անդրադառնալով «Օրբելյան-Բուրթելյան գերդաստանի պարոնտերերին», գրում է. «ուշագրավ է, որ Հովհաննես-Օրբելից բացի, բոլորն էլ հոգեւոր կոչումն ընդունելով՝ Ստեփանոս անունն են ժառանգել, բայց պահել են նաեւ իրենց աշխարհական անունները»[355]:

Վերոհիշյալ հիշատակարանում Գրիգոր Ախալցխեցին հայտնում է, որ այդ թվականին Կիլիկիայում աթոռակալող Պողոս կաթողիկոսը (1418-1430) սուրբ մեռոն եւ օրհնության նամակ է ուղարկել Սյունիք: Գրիչը նաեւ նկարագրում է, թե ինչ ծանր վիճակում էր հայտնվել Սյունիքում դեռեւս մնացած Օրբելյան պայազատների իշխանությունը, մասնավորապես նշելով Ստեփանոս-Սուլթանշահի եղբայր Գորգունի որդի Տարսայիճի մասին. «Գրեցաւ գիրքս... ի գաւառիս Եղեգեաց, ի վանքս, որ կոչի Հերմոնի... ի հայրապետութեան սուրբ ուխտիս եւ գաւառիս պարոն Տարսայիճին, որդւոյ Գուգունին, որդոյ Ինանիկին, որդոյ Բուրթէլին: Զի յայսմ ամի յոյժ ի նեղութիւն, ի տառապանք եւ յաղքատութիւն անկաւ, զի նա, որ բոլոր գաւառիս իշխէր, այժմ ոչ միոյ ագարակի կամ գեղջ ոչ կարէ իշխել զի խլեալ եւ յափշտակեալ էին ի նմանէ զամենայն գեւղ եւ զքաղաք, զվանք եւ յանապատ ի նմանէ եւ նայ փախեալ եւ թագուցեալ էր ի ծերպս վիմաց եւ ի մայրիս, մինչեւ այց արասցէ նմա Տէր Աստուած եւ յառաջին փառսն եւ իշխանութիւնն դարձուսցէ զնայ»[356]:

---

[354] Նույն տեղում, էջ 656:
[355] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 198:
[356] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 656:

Այս Տարսայիճի Սմբատ անունով որդու զավակն էր Սյունիքի Եղիշե արքեպիսկոպոսը՝ հիշված 1490–96 թթ.[357] (նրա մասին կխոսվի ստորև):

Ստեփանոս-Իվանեի անունը հիշատակվում է նաեւ 1421 թ. Տաթեւում Թումա գրչի հիշատակարաններում. «ի յառաջնորդութեան Տէր ըՍտեփաննոսի ի զարմէն Պուռթելեանց»[358]: 1422 թվականին նույն Թումա գրիչը Տաթեւում գրած հիշատակարանում նշում է Ստեփանոս-Իվանեի մահվան մասին, որը մեկնել էր Վրաստան, մորը տեսության եւ այնտեղ էլ կնքել մահկանացուն. «Գրեցաւ ի վանս Ստաթէի...յառաջնորդութեան տանս Սիսականայ Տէր Ստեփաննոսի՝ որդոյ պարոն Սմբատին, որ եւ յայսմ ամի գնացեալ ի Տուընն Վրաց, առ մայրն իւր՝ փոխեցաւ ի Քրիստոս...»[359]: Ուշագրավ է, որ Ստեփանոս-Իվանեին հաջորդել է Տաթեւի վանքի փակակալ Հովհաննեսը, որպես տեղապահ՝ «...որ է այժմ տեղապահ եւ աթոռակալ նորին՝ Տէր Ստեփանոսին Սիւնեաց վիճակին»[360]:

Հարկ է նշել, որ մինչեւ հոգեւոր կոչում ստանալը Ստեփանոս-Իվանեն ամուսնացած է եղել եւ ունեցել է Սմբատ անունով որդի: Վերջինս 1471 թ. ստացած ձեռագրի հիշատակարանում նշում է նաեւ մոր անունը՝ Մարգարիտ Խաթուն[361]:

Լ. Խաչիկյանը Ստեփանոս-Իվանեի աթոռակալության ավարտով ավարտված է համարում Սյունյաց աթոռի միասնականության շրջանը: Նա գրում է. «Այս Ստեփանոսից հետո Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, որ դարեր շարունակ հոգեւոր իր իշխանության տակ էր պահում Սյունյաց աշխարհի 12

---

357 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրբելյան ճյուղը, էջ 185, 188:
358 ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 258:
359 ԺԵ դարի հիշատակարաններ, Գ., էջ 360:
360 Նույն տեղում:
361 «Ես՝ պարոն Սմպատ առի զկենսաբեր Աւետարանս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ զհայրն իմ Ստեփանոս, մայրն իմ Մարգարիտ-Խաթուն, զպապն իմ Սմպատ, զմեծ պապն Իվանիկ...»: ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 317:

դավառները, փեղկվում է տարբեր մասերի: Սյունիքի տարբեր դավառների՝ Վայոց ձորի, Ծղուկի, Դողթնի վանական հաստատություններում շարադրված հիշատակարանները տեղեկություններ են հաղորդում հաճախ նույն տարիներին կամ տասնամյակներին եպիսկոպոս եղած անձնավորությունների մասին: Ուստի սխալ կլիներ միահյուս շարահարությամբ կազմել Սյունյաց թեմի առաջնորդների դավազանագիրքը 15-րդ դարի 20-ական թվականներից հետո»[362]:

Այս տեսակետը հերքվում է, երբ ծանոթանում ենք 1441 թ. կաթողիկոսական աթոռը էջմիածնում վերահաստատող նշանավոր ժողովի մասնակիցների Թովմա Մեծոփեցու ներկայացրած ցանկին, ուր նշված է նաեւ Սյունիքից ներկաների անունները: Դրանք են. Շմավոն վարդապետ՝ Տաթեւի առաջնորդ, Տեր Ստեփանոս «տեղապահ Սիւնեաց աթոռոյն» եւ Տեր Զաքարիա՝ Նորավանքի եպիսկոպոս[363]: Ինչպես ստորեւ կտեսնենք Շմավոնը նույնպես եպիսկոպոս էր, իսկ նրա եղբորորդի Ստեփանոսը՝ արքեպիսկոպոս: Փաստորեն, թեեւ այս շրջանում Տաթեւի, Նորավանքի (նաեւ մի քանի այլ վանքերի) առաջնորդները եպիսկոպոսական կոչում ունեին եւ բնականաբար կարող էին հիշատակվել «նույն տարիներին կամ տասնամյակներին», սակայն նրանց թվում կար առաջատար մեկը, որ համարվում է «առաջնորդ եւ վերադիտող աթոռոյ Սիւնեաց», «արքեպիսկոպոս նահանգի», կամ, ինչպես Ստեփանոսի պարագայում է՝ «տեղապահ Սիւնեաց աթոռոյն»: Իհարկե, քաղաքական միասնականությունը կորցրած Սյունիքում այսպիսի կոչում կրողն այլեւս նախկին իշխանությունը չուներ, սակայն դա չի նշանակում, որ 15-րդ դարի 20-ական թվականներց սկսած կարելի է խոսել Սյունյաց աթոռի «փեղկվելու» մասին:

---

[362] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրբելյան ճյուղը, էջ 194:
[363] Թովմա Սեծոփեցի, Պատմագրություն, էջ 218–220:

Այժմ տեսնենք, թե ովքեր են հաջորդել Ստեփանոս-Իվանեին:

Շմավոն Անգեղակոթցու անվանն առաջին անգամ հանդիպում ենք 1437 թ. Սանահնում գրված, վերը վկայակոչված հիշատակարանում, ուր նա տեղեկություն է հաղորդում իշխան Բեշքենի Սյունիքից արտագաղթելու եւ Վրաստանում հաստատվելու մասին: Ձեռագրի մանրանկարիչ Հովհաննես Սանահնեցու հիշատակարանում նա կոչվում է «...երանաշնորհ եւ երջանիկ բաբունին՝ զՇմաւոն՝ առաջնորդ եւ վերադիտող առաքելական աթոռոյ Սիւնեաց»[364]: Իսկ իր հիշատակարանում Շմավոնը Ռոստամ Օրբելյանին կոչում է իր հոգեւոր որդին («...պարոն Ռոստամին, որ եւ է ինձ հոգեւոր որդի»)[365]: Նշենք, որ Ռոստամ Օրբելյանը 1451 թ. հենց Շմավոնի անունով է Տաթեւի վանքին 4 գյուղ վաճառել[366]:

1459 թ. հիշատակարանում Շմավոնը հայտնում է, որ իր եղբորորդու՝ Ստեփանոս արքեպիսկոպոսի համար ձեռագիր է ձեռք բերել[367]: Ինչպես վերը նշեցինք, Շմավոնն ու Ստեփանոսը միասին մասնակցել են 1441 թ. կաթողիկոսական աթոռը էջմիածնում վերահաստատող ժողովին: Հարկ է նշել, որ սյունեցիներն ընդհանրապես մեծ դեր են ունեցել աթոռի տեղափոխման գործում: Եւ պատահական չէ, որ այս իրադարձության պատմությունը գրելիս Թովմա Մեծոփեցին ժողովականների թվարկումը սկսում է հենց նրանցից:

Շմավոնի մասին ուշագրավ հիշատակություն է տեղ գտել Ստ. Օրբելյանի Պատմության վերջում, որպես հավելված հրատարակված «Շարակարդութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց» ցանկում. «Տէր Սիմէոն (Շմաւոն, Ա. Մ.) եպիսկոպոսն Անգեղակոթ-

---

364 ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 470:
365 Նույն տեղում, էջ 468:
366 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրբելյան ճյուղը, էջ 195:
367 ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 123:

ցի... յոյժ ջանակուռ եղեւ վասն շինութեան եւ պայծառութեան սրբոյ աթոռոյս: Եւ զի տաճիկք բռնութեամբ յափշտակեալ էին զրաղում անդս եւ անդաստանս սրբոյ աթոռոյս, սա... վերստին սեփհականեալ է սրբոյ տանս զիլեցեալսն զամենայն»[368]:

Շմավոն եպիսկոպոսը վերջին անգամ հիշատակվում է 1471 թ. Տաթեւի վանքում գրված ձեռագրի հիշատակարանում, եղբորորդու՝ Ստեփանոս արքեպիսկոպոսի հետ[369]: *«Շմավոնը 1471-ին դեռ ապրում էր, հավանաբար մահացել է մեկ-երկու տարի հետո»*[370], *- գրում է Լ. Խաչիկյանը: Տաթեւում պահպանվել է Շմավոնի հոգու փրկության համար Ստեփանոս արքեպիսկոպոսի կանգնեցրած խաչքարը, հետեւյալ արձանագրությամբ. «Ես Ստեփանոս արհեպիսկոպոս Սիւնեաց կանգնեցի զխաչս կամաւն Աստուծոյ ի փրկութիւն հոգւոյ հաւրեղբաւր իմոյ Շմաւոն վարդապետին. թվ ՉԻԱ (1472)»*[371]: *Ըստ այդմ, Շմավոնը մահացել է 1472 թվականին:*

Սյունյաց հաջորդ եպիսկոպոս, Շմավոնի եղբորորդի եւ աթոռակից Ստեփանոսին առաջին անգամ հիշատակում է Թովմա Մեծոփեցին 1441 թ. Էջմիածնի ժողովի առնչությամբ՝ «Տէր Ստեփանոս տեղապահ Սիւնեաց, ի յազատաց»[372]: *Հիշատակարաններում Ստեփանոսը կոչվում է «Ստեփանոս արհեպիսկոպոս», կամ «Տէր Ստեփանոս արհեպիսկոպոս Սիւնեաց նահանգէ»*[373]:

Հետաքրքիր է, որ Ստեփանոսը 1444 թվականից առաջ եղել է Սսում եւ այնտեղից վերադառնալիս իր հետ Տաթեւ բերել Հայսմավուրքի մի ընտիր օրինակ: Այդ մասին վկայող հիշատա-

---

368 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1919, էջ 525:
369 ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 317:
370 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 195:
371 Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 32:
372 Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 220:
373 ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 123–124:

կարանը հրատարակելիս Լ. Խաչիկյանը կարծել է, թե խոսքը Ստեփանոս-Իվանեի մասին է (մահ. 1422)[374]: Մինչդեռ վերջինիս հոր անունը Սմբատ է, իսկ 1444 թ. հիշատակարանում նշվում է, որ իշխան Իվանեի որդին է ձեռագիր բերողը, որը նաև ժամանակի եպիսկոպոսն էր. «(զգիրքս) զոր Տէր մեր Ստեփանոս՝ որդի մեծափառ իշխանին Իւանէին Որոտնեցւոյ եբեր ի Սսոյ յաստուածաբնակ ուխտն Եւստաթէի սուրբ առաքելոյն եւ մեծ վարդապետն մեր քաջ եկկլեստիատէս Հայոց Սիմէոն՝ ստացող օրինակի սորին...»[375]: Փաստորեն, Ստեփանոսը ձեռագիրը բերել է հորեղբորը՝ Շմավոնին:

Հիշատակարանի շնորհիվ հայտնի է դառնում, որ Ստեփանոսի հայրը Որոտանի իշխան Իվանեն է, եւ հասկանալի է դառնում, թե ինչու է Մեծոփեցին եպիսկոպոսի ծագման մասին նշում՝ «ի յազատաց», իսկ անանուն վարքագիրը նրան անվանում՝ «յազատ տանէ եւ ի մեծ ազգէ»[376]:

Ստեփանոս արքեպիսկոպոսը հիշատակվում է նաեւ 1474 թ. Եղեգիսում եւ Հերմոնի վանքում գրված մի Հայսմավուրքի հիշատակարանում որպես «պարոնտեր»: Գրիչ Զաքեոսը երախտագիտությամբ խնդրում է հիշել՝ «նաեւ պարոնտիրին Տէր Ստեփանոս արհեպիսկոպոսին, որ առաջնորդ եղեւ գրոցս եւ դթայր ի վերայ մեր, որպէս հայր ի վերայ սիրելի որդոյ...»[377]:

Աղ-կոյունլուների զորահրամանատար Սուֆի-Խալիլը մի միջադեպի առիթով բանտարկում է Ստեփանոս արքեպիսկոպոսին եւ ստիպում ընդունել մահմեդականություն, սակայն նա, հինգ տարի շարունակ անմարդկային խոշտանգումներին դիմանալով, հավատը չի ուրանում: Բանտից ազատվելով վերադառնում է Տաթեւ, ապա մեկ տարի անց ուխտի գնում Երուսաղեմ:

---

[374] ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 789:
[375] Նույն տեղում, էջ 560:
[376] Հայոց նոր վկաները, գիտական հրատարակութիւն, աշխատասիրութեամբ Հ. Սանանդեանի եւ Հ. Ամատեանի, Վաղարշապատ, 1903, էջ 313:
[377] ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 358:

Վերադարձից հետո մահանում է 1483 թվականին: Ստեփանոսը համարվում է Հայոց նոր վկաներից, որպես «Ստեփաննոս խոստովանող արքեպիսկոպոս Տաթեւու»[378]: Վարքագիրը նշում է, որ Ստեփանոսի քրոջ որդին նույնպես եպիսկոպոս էր[379]:

Հավանաբար Ստեփանոսին հաջորդել է Օրբելյան տոհմից սերող վերջին եպիսկոպոս Եղիշեն, հիշատակված 1490–96 թվականներին: Լ. Խաչիկյանը նրա մասին գրում է. «Տարասայիճի թոռ, Սմբատի որդի Եղիշեն՝ 15-րդ դարի վերջերին, եղել է արքեպիսկոպոս: Նրա մասին տեղեկություններ են պահպանվել 1490 թ. Վերին Նորավանքում եւ 1495–1496 թթ. Եղեգիսում շարադրված հիշատակարաններում. այսպես. «յարհեպիսկոպոսութեան մերոյս նահանգի տէր Եղիշէի՝ յազգէ Բուրթելանց» (ԺԵ, Գ, 147) եւ «վերադիտող այսմ նահանգի պարոնտէր Եղիշա արքեպիսկոպոսի» (ԺԵ, Գ, 213, նաեւ 229): Ըստ այդմ Եղիշեի հոդեւոր իշխանության սահմանները սահմանապակվել են Եղեգնաձորի շրջանակներով, ուստի նրա անունը պետք է դուրս հանել Սյունյաց եպիսկոպոսների գավազանացանկից»[380]:

Գիտնականի այս տեսակետը թերեւս բխում է նրա վերը բերված պնդումից, թե Ստեփանոս-Իվանեից հետո Սյունյաց աթոռը «փեղկվում է տարբեր մասերի»: Սակայն Լ. Խաչիկյանի կազմած Սյունյաց եպիսկոպոսների գավազանացանկում Եղիշեի անվան հիշատակության թվականների դիմաց ուրիշ մեկի անունը չկա: Հիշատակվում է Ստեփանոս եպիսկոպոսը՝ մինչեւ 1485 թ., որից հետո՝ Շմավոն Բ-ը՝ 1508-ից[381]: Նկատենք նաեւ, որ 1490 թ. Վերին Նորավանքում աշխատող Աբրահամ գրիչը,

---

[378] Հայոց նոր վկաները, էջ 313–319: Հայոց եկեղեցու սրբերը եւ սրբակենցաղ անձինք, էջ 207–209:

[379] Նույն տեղում, էջ 313–314: Հավանաբար նա է 1474 թ. հիշատակարանում նշված Տեր Գրիգորը. «...ողորմի Քրիստոս... առաւել պարոնտիրին Տէր Ստեփանոսին եւ ծնօղացն եւ նորին շառաւիղին Տէր Գրիգորին եւ իւր ծնողացն...»: ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 359:

[380] Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, էջ 197:

[381] Նույն տեղում, էջ 198:

երբ նշում է՝ «...եղեւ աւարտ գրչութեան... ի յերկիրս որ է Վայոց ձոր կոչեցեալ... ի հայրապետութեան Վաղարշապատու տեառն Սարգսի եւ յարհեպիսկոպոսութեան մերոյս Նահանգի տէր Եղիշէի՝ յազգէ Բուրթէլանց»[382], ամենայն հավանականությամբ «Նահանգ» ասելով նկատի ունի ողջ Սյունիքը: Նույն կերպ Եղեգիսում 1495-ին մեկ այլ գրիչ նշում է՝ «ի կաթողիկոսութեանն տեառն Սարգսի՝ յաթոռ սուրբ Էջմիածնի, եւ վերադիտող այսմ Նահանգի պարոն տէր Եղիշա արքեպիսկոպոսի՝ որդոյ իշխանաց իշխանի պարոն Սմպատա, որդոյ մեծին Տարսաիճի...»[383]:

Ինչպես վերը նշեցինք, Սյունիքի տարբեր վանքերում այս (նաեւ նախորդ ու հետագա) տարիներին հանդես են գալիս եպիսկոպոսական կոչումով առաջնորդներ ու վանահայրեր: Սակայն Եղիշեն նրանց մեջ առանձնանում է ոչ միայն արքեպիսկոպոսական հանդամանքով, այլեւ տոհմական ծագումով, ուստի կարծում ենք պետք է դավազանագրքում պահպանել նրա անունը, ինչպես որ այդ արել են Ղ. Ալիշանը («Եղիշէ Օրպելեան»), Ն. Պողարյանը («Եղիշէ եպս. Օրբելյան») եւ Գ. Գրիգորյանը (Եղիշե Բուրթելյան)[384]:

Ամենայն հավանականությամբ նույն Եղիշեն է հիշատակվում 1475 թ. Բոլորաբերդի անապատում գրված ձեռագրի հիշատակարանում, ուր նշվում է, որ մատյանը գրվել է «...ի յարհիեպիսկոպոսութեան մերում դաւառի Տէր Յոհանիսի... թոռին մեծին Պռոշայ, որ է առ դրան Սուրբ Գեղարդեան», ապա ավելացնում՝ «...եւ միւս եպիսկոպոսի Տէր Եղիշայի՝ մաքուր եւ սուրբ հայրապետի՝ թոռին մեծին Բիւրթելեանց»[385]

---

[382] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Գ, էջ 147:
[383] Նույն տեղում, էջ 213:
[384] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 21: Ն. Ծովական, Տաթեւ, «Սիոն», 1950, յունիս-յուլիս, էջ 202: Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 281:
[385] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 375:

Հետաքրքիր է, որ Եղիշեն թեեւ ի տարբերություն նախորդ Օրբելյան եպիսկոպոսների հոգեւոր եւ աշխարհական անուններից բաղկացած երկանուն չունի, բայց իր նախորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի նման հիշվում է հոգեւոր եւ աշխարհական իշխանության իմաստն արտահայտող «պարոնտեր» կոչումով: Եղիշեի անվամբ ավարտվում է Օրբելյանների «եպիսկոպոսական ճյուղը», հասնելով մինչեւ 15-րդ դարի վերջ:

Սյունյաց հաջորդող եպիսկոպոսների աթոռակալության ժամանակաշրջանը դուրս է մեր հետազոտության շրջանակից:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Սյունյաց աթոռի 14-րդ դարի առաջին կեսի վերելքին (մինչեւ Ստեփանոս-Սուլթանշահ), հաջորդում է փորձությունների շրջանը, մետրոպոլիտական փառավոր աթոռը զրկվում է նախկին դիրքից եւ անգամ որոշ ժամանակ՝ աթոռակալից, ունենալով միայն տեղապահներ: Այդ դերը ստանձնում են հայոց վարդապետարանի նշանավոր բաբունապետները՝ Հովհաննես Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին: 15-րդ դարի սկզբներից կրկին շարունակվում է եպիսկոպոսների շարքը: Նախորդ շրջանի ավանդությամբ, Օրբելյաններից բացի երբեմն հանդես են գալիս այլ տոհմերից սերող ազգակից եպիսկոպոսներ:

Չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, զրկվելով երբեմնի զորեղ հայ իշխանների, մասնավորապես Օրբելյանների հովանավորությունից, Սյունյաց աթոռը շարունակում է հոգեւոր-մշակութային իր առաքելությունը:

Սյունյաց աթոռի վերաղարթոնքի մի նոր շրջան կապված է 17–18-րդ դարերի կրոնա-լուսավորչական, ազգային-ազատագրական շարժումների հետ, որն առանձին ուսումնասիրության նյութ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը, համառոտակի նշենք նյութից բխող եզրահանգումները:

- Սյունյաց մետրոպոլիտությունը հաստատվել է Աբրահամ Աղբաթանեցու ժամանակ (607–615), կապված Հայ եկեղեցում նվիրապետական ինը դաս ունենալու անհրաժեշտության հետ:

- Ջնայած նախապես Սյունյաց մետրոպոլիտին արգելվել էր եպիսկոպոս ձեռնադրել, սակայն արդեն 10-րդ դարում Սյունյաց մետրոպոլիտն իրեն իրավունք է վերապահում եւ եպիսկոպոսներ ձեռնադրում, հավանաբար, հիմնականում իր իշխանության ներքո գտնվող թեմերի համար: Հիշատակություններ կան, որ եպիսկոպոս են ձեռնադրել Հակոբ մետրոպոլիտն ու Ստեփանոս Գ-ը, իսկ Ստեփանոս Օրբելյանն առանց վերապահության նշում է, որ Սյունյաց մետրոպոլիտի իրավունքն էր եպիսկոպոս ձեռնադրել:

- Ստ. Օրբելյանը եպիսկոպոս ձեռնադրելու իրավունքն իրագործել է իր հաջորդին՝ Հովհաննես-Օրբելին նախ եպիսկոպոս ձեռնադրելով, ապա մետրոպոլիտ կարդելով:

- Սյունիքում Օրբելյանները հաստատվում են Սյունյաց աթոռակալ Ստեփանոս Գ Ցախը Էլ Մսեհի (1170–1216) աջակցությամբ, որը սերտ կապեր էր հաստատել ինչպես սելջուկյան բռնակալների, այնպես էլ Վրաց արքունիքի հետ: Նա իր քրոջ աղջկան ամուսնացրել է սելջուկյան գերիշխանությունից ազատվելու համար ուղիներ որոնող Ելիկում Օրբելյանի հետ եւ հետագայում մեծ օժանդակություն ցույց տվել Ելիկումի որդուն՝ Լիպարիտին, Սյունիք տեղափոխվելու, այն ազատագրելու եւ նոր իշխանատոհմ հաստատելու գործում:

- Ստեփանոս Գ-ը Տաթեւի շինությունների ավերակ լինելու պատճառով, Նորավանքը հաստատում է որպես աթոռանիստ:

Նկատի ունենալով Հայ եկեղեցում գոյություն ունեցող պառակտումներն ու անկայուն վիճակը, նա Սարգիս Ա-ին ձեռնադրվելու է ուղարկել Աղվանքի կաթողիկոսի մոտ՝ որպես Սյունիքում իրեն հաջորդ աթոռակալ: Սակայն սա չի նշանակում, թե այս ձևով Սյունյաց աթոռը միացել է Աղվանքի աթոռին, որովհետև մի քանի տարի հետո, Սյունյաց աթոռի ներքին հարցերի կարգավորման համար, Սարգիս Ա-ը դիմում է ոչ թե Աղվանքի կաթողիկոսին, այլ Կիլիկիայում նստող Հայոց կաթողիկոսին:

- Սարգիս Ա-ի (1216–1242) ժամանակ երկփեղկվում է Սյունյաց աթոռը՝ Տաթեւ ու Նորավանք աթոռանիստ կենտրոններով: Սարգիս Ա-ը այցելում է Կիլիկիա, Կոստանդին Ա Բարձրբերդցու միջոցով Նորավանքը վերջականապես հաստատում որպես առանձին վիճակ, այսպիսով լռելյայն կերպով վավերացնելով նաեւ Տաթեւի առանձին վիճակ լինելը: Այնուհետեւ, երկար ժամանակ ճգնելով Մելիճո վանքում (Կիլիկիա), գնում է Երուսաղեմ եւ նահատակվում այդտեղ ոչ թե Ջալալեդդին խորեզմշահի (ինչպես գրում է Օրբելյանը), այլ Սալահեդդինի (Եգիպտոսի մամլուքների) կողմից:

- Հովհաննես Ը-ը (1216–1254), ձեռնադրվելով Աղթամարում, Սարգիս Ա-ի եւ Կոստանդին Բարձրբերդցու կողմից չհանդիպելով որեւէ լուրջ դիմադրության, Տաթեւը հռչակում է որպես ինքնուրույն աթոռ:

- Նորավանքի Սարգիս Բ եպիսկոպոսի (1262–1298) ժամանակ Պռոշ իշխանը փորձում է Սյունիքի իրեն ենթակա շրջանները անջատել Տաթեւի ու Նորավանքի աթոռներից ու ստեղծել առանձին թեմ Երնջակում: Սակայն Տարսայիճ իշխանի եւ Տաթեւի ու Նորավանքի եպիսկոպոսների ջանքերով այդ փորձը ձախողվում է:

- Հայրապետ Ա-ը (1254–1296) վերանորոգում է Տաթեւի ավերված եկեղեցիները եւ հիմնադրում դպրոց, ուր սովորում է

նաեւ Ստ. Օրբելյանը: Հայրապետ Ա-ը ուխտագնացություն է կատարել Երուսաղեմ, իսկ այնուհետեւ այցելել է Կիլիկիայի թագավոր Լեւոն Գ-ին (1270–1289): Նրա բացակայության ընթացքում Տաթեւի աթոռն զբաղեցրել է Սողոմոն եպիսկոպոսը, որն այնուհետեւ Հայրապետի հետ միասին աթոռակալել է 20 տարի: Հայրապետ Ա-ը եւ Հովհաննես Թ-ը փորձել են խանգարել Ստ. Օրբելյանի՝ Սյունյաց աթոռը միավորելու ջանքերը, որը, սակայն, նրանց չի հաջողվել:

- Ստ. Օրբելյանը (1286–1303), կրթությունն ստանալով Տաթեւում ու Գլաձորում, նախ որպես աթոռակալ ընտրվում է Սյունիքում, ապա ուղեւորվում Կիլիկիա, ուր Կոստանդին Կատուկեցուց ձեռնադրվում է որպես մետրոպոլիտ՝ իր անմիջական իշխանության ներքո ունենալով Սյունիքի 12 եպիսկոպոսական աթոռները: Տաթեւի եպիսկոպոսները փորձում են խոչընդոտել Օրբելյանին՝ իր ծրագրերն իրագործելու, սակայն նա կարողանում է ստանալ մոնղոլ խաների համաձայնությունը եւ իր հոր՝ Տարսայիճ իշխանի օժանդակության շնորհիվ նորից միավորել Սյունյաց աթոռը: Սյունիքում նոր թափ է ստանում շինարարությունը, ծաղկում եկեղեցական ու մշակութային կյանքը:

- Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի նամակին ի պատասխան Ստ. Օրբելյանը Սյունիքի ու հարակից շրջանների եպիսկոպոսների, վարդապետների եւ իշխանների ժողով է գումարում (Նորավանքի Ա ժողով), ուր միաձայն կերպով որոշվում է մերժել Անավարզեցու նորամուծությունների պահանջը: Օրբելյանը Հայ եկեղեցու դավանանքի անսասանության դիրքերից հիմնավոր փաստերով մերժում է կիլիկյան օտարամոլությունը եւ խոսքը եզրափակում՝ «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել եւ ոչ ընդ Հռոմոց յերկինս ելանել»: Այս նամակը չափազանց մեծ նշանակություն է ունենում Հայ եկեղեցու որդեգրած դավանաբանական սկզբունքների ու եկեղեցական-ազգային սրբազործված ավանդույթների պահպանման գործում:

- Ստ. Օրբելյանի շրջանից սկսած, Անավարզեցու գործելակերպի պատճառով, Սյունյաց մետրոպոլիտներն ու եպիսկոպոսները ձեռնադրության համար այլևս չէին դիմում Հայոց կաթողիկոսին, չէին մեկնում Կիլիկիա, այլ յուրաքանչյուր մետրոպոլիտ ձեռնադրում էր իր հաջորդին:

- Մոնղոլների տիրապետության պայմաններում Սյունյաց հոգևոր իշխանության հաստատուն իրավական կարգավիճակն ապահովելու համար Օրբելյաններն ընտրում են հոգևոր եւ աշխարհիկ իշխանության յուրօրինակ զուգորդման ուղին: Տարսայիճ իշխանը որդուն՝ Ստ. Օրբելյանին դարձնում է Տաթեւի, Նորավանքի, Ցախացքարի ու Արատեսի հայրենատեր, իսկ մոնղոլ իշխող Արղունը հաստատում է այդ («վերստին հաստատեաց ի մեզ զբովանդակն՝ կրկին իշխանութեամբ՝ հոգեւոր եւ մարմնաւոր»): Միաժամանակ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանություն վարելու իրավունքը փոխանցվեց Ստեփանոս Օրբելյանի հաջորդներին:

- Օրբելյան տոհմի հաջորդ եպիսկոպոսները, իրականացնելով հոգեւոր եւ աշխարհիկ իշխանություն, իրենց հոգեւոր (ձեռնադրության ժամանակ ստացած) անվանը զուգահեռ պահպանում էին նաեւ աշխարհական անունները, որով առաջանում էր յուրօրինակ երկանուն. **Հովհաննես-Օրբել, Ստեփանոս-Տարսայիճ, Ստեփանոս-Սուլթանշահ, Ստեփանոս-Իվանե:**

- Հովհաննես-Օրբելը (1300–1324)՝ Ստ. Օրբելյանի եղբոր թոռը, աշակերտել է Եսայի Նչեցուն եւ դեռեւս Ստ. Օրբելյանի կենդանության ժամանակ ճանաչվել որպես Սյունյաց հաջորդ մետրոպոլիտ: Նյութապես օժանդակել է Գլաձորի համալսարանին, հանդես եկել որպես այդ կրթօջախի հովանավորողներից մեկը:

- Հովհաննես-Օրբելի ժամանակ Կիլիկիայից Սյունիք է գալիս Կոնստանդին Գ Կեսարացու պատվիրակը՝ կաթոլիկ եկեղեցուն արվելիք զիջումների պահանջով, որի համար մետրոպոլի-

տի գլխավորությամբ դումարվում է Նորավանքի Բ ժողովը եւ մերժողական պատասխան ուղարկվում:

- Ստեփանոս-Տարսայիճը (1314–1331)՝ Ստ. Օրբելյանի եղբոր որդին, նույնպես աշակերտել է Եսայի Նչեցուն: Հովհաննես Օրբելի հետ միասին պայքարել է ունիթորների դեմ, օժանդակել Գլաձորի համալսարանի գործունեությանը:

- Ստեփանոս-Սուլթանշահ եպիսկոպոսի սպանությունից հետո (14-րդ դ. 70-ական թվականներ), Սյունյաց աթոռը ժամանակավորապես կառավարվել է տեղապահների միջոցով, որոնք եղել են հայոց վարդապետարանի բաբունապետեր Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին:

- Չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին՝ Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին կարողացել են տեղից տեղ փոխադրվելով (Որոտնավանք, Ապրակունիս, Տաթեւ) պահպանել հայոց համալսարանը, ստեղծել աստվածաբանական երկեր, ընդօրինակել տալ բազմաթիվ ձեռագրեր, կրթել հարյուրավոր սաներ:

- 15-րդ դարի սկզբներից Օրբելյանները հալածանքների են ենթարկվել եւ իշխանների մի մասը դաղթել են Վրաստան: Սյունյաց աթոռը զրկվել է հովանավորությունից, սակայն շարունակել է իր գործունեությունը, զորացրել ժողովրդի ոգին, պահպանել դպրոցները, հնարավորություն գտել շարունակելու պայքարը օտարների դավանական ոտնձգությունների դեմ:

- 14–15-րդ դարերում, բացի Օրբելյաններից, Սյունիքում հանդես են եկել եպիսկոպոսներ այլ տոհմերից, որոնք եւս ազգակից փոքր խմբեր են կազմում: Դրանք են՝ ա. Որոտանի իշխանական տնից ծագող գործիչները՝ Սարգիս մետրոպոլիտը եւ նրա եղբայր Իվանե իշխանի որդին՝ Հովհան Որոտնեցին, բ. Գրիգոր Տաթեւացին եւ նրա քրոջ որդի Առաքել Սյունեցին, գ. Շմավոն Անգեղակոթցին եւ նրա եղբայր Իվանե իշխանի որդի Ստեփանոս արքեպիսկոպոսը:

- Սյունյաց աթոռի գահակալները, Օրբելյան վերջին շառավիղներից Ռոստամը եւ սյունեցի եկեղեցական գործիչները մեծապես նպաստել են 1441 թ. Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Ս. Էջմիածնում վերահաստատվելու գործին:

- Օրբելյան տոհմից սերող վերջին եպիսկոպոսը 1490–1496 թթ. հիշատակվող Եղիշեն է, որին ժամանակակիցը կոչում է նաեւ «պարոնտեր»:

Ուսումնասիրության արդյունքում կազմվել է Օրբելյանների շրջանի Սյունյաց եպիսկոպոսների գավազանագիրքը եւ տոհմագրությունը, որոնք ներկայացվում են հավելվածում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրբելյանների շրջանի Սյունյաց եպիսկոպոսների գավազանագիրքը եւ տոհմագրությունը

Մեր ուսումնասիրությունների հիման վրա կազմված Սյունյաց եպիսկոպոսների ստորեւ ներկայացվող ցանկն ընդգրկում է 12-րդ դարի վերջից մինչեւ 15-րդ դարի վերջն ընկած ժամանակաշրջանը, իր մեջ առնելով Օրբելյանների իշխանության շրջանը: Սյունյաց եպիսկոպոսական աթոռի պատմության Օրբելյանների շրջանի առանձնահատկություններից մեկն այն է, որ եկեղեցական իշխանությունն առավել չափով մերձեցած է եղել տիրապետող իշխանական տան հետ, որոնք իրապես հավատավոր ու եկեղեցասեր անձնավորություններ են եղել, դեռեւս Սյունիքում Օրբելյանների սկզբնավորման շրջանում:

Մեր քննած ժամանակաշրջանի սկզբում Սյունյաց աթոռը երկփեղկված էր (Նորավանք, Տաթեւ) եւ միավորվեց Ստեփանոս Օրբելյանի ժամանակ: Քանի որ Սյունիքում, հատկապես Ստ. Օրբելյանից սկսած, սովորական էր գործող եպիսկոպոսի հետ նաեւ հաջորդի համաժամանակյա աթոռակալությունը, ցանկում աթոռակալների տարեթվերը միշտ չէ, որ հաջորդական շղթա են կազմում: Եթե հայտնի չեն եպիսկոպոսների աթոռակալության եւ մահվան ստույգ թվականները, նշում ենք նրանց մասին աղբյուրներից հայտնի ծայրային թվականները: Միայն Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին են ներկայացվում ծննդյան եւ մահվան թվականներով:

Սյունյաց աթոռակալները

12-րդ դ. վերջ – 15-րդ դ.

Նորավանքում

Ստեփանոս Գ
(Ծախր էլ Մսեհ) – 1170–1216
Սարգիս Ա – 1216–1242
Ստեփանոս Դ – 1242–1260
Գրիգոր Զ – 1260–1261
Սարգիս Բ – 1261–1298

Տաթեւում

Հովհաննես Ը – 1216–1254
Հայրապետ եւ Սողոմոն – 1254–1296
Հովհաննես Թ – 1296–1299
Գրիգոր Է – 1297–1305

Ստեփանոս Ե Օրբելյան – 1286–1303
Հովհաննես-Օրբել – 1300–1324
Ստեփանոս-Տարսայիճ – 1314–1331
Սարգիս Գ – 1333–1337
Ստեփանոս-Սուլթանշահ – 1366
Հովհան Որոտնեցի (տեղապահ) – 1313–1386
Գրիգոր Տաթեւացի (տեղապահ) – 1344–1410
Առաքել Սյունեցի – 1401–1422
Ստեփանոս-Իվանե – 1419–1421
Շմավոն Անգեղակոթցի – 1437–1472
Ստեփանոս Զ – 1441–1483
Եղիշե – 1490–1496

Սյունյաց եպիսկոպոսների տոհմագրությունը ներկայացնող ստորեւ բերվող երեք աղյուսակներից առաջինը վերաբերում է Օրբելյանների իշխանության սկզբում Նորավանքում եւ Տաթեւում եղած աթոռակալ եպիսկոպոսներին, երկրորդը՝ Օր-

բելյան տոհմի եպիսկոպոսներին, որոնք, որպես մետրոպոլիտ Սյունյաց, իշխում էին ողջ Սյունիքում, ինչպես նա- պատմական Սյունիքից դուրս Օրբելյաններին ենթակա տարածքներում, եւ երրորդը՝ այս ժամանակաշրջանում այլ տոհմերից սերող եպիսկոպոսներին ու տեղապահներին:

Աղյուսակներում եպիսկոպոսների եւ նրանց ծնողների անուններից բացի տոհմերի այլ ներկայացուցիչների անունները չեն ներկայացվում, բացառությամբ Ռոստամ Օրբելյանի (աղյուսակ երկրորդ), որի անունն առնչվում է կաթողիկոսական աթոռի էջմիածնում վերահաստատվելու իրադարձության հետ: Եպիսկոպոսների անունների հետ ներկայացվում են աղբյուրներում նրանց հիշատակության թվականները (ըստ դավազանագրքի):

ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՏՈՀՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Օրբելյանների իշխանության սկզբում)



ՍՅՈՒՆՅԱՑ ՕՐԲԵԼՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՏՈՀՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ԱՅԼ ՏՈՀՄԵՐԻՑ



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղբյուրներ

(Հայերեն)

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1983, 560 էջ:

2. Դիվան հայ վիմագրության, պր. Բ, (կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան), Երեւան, 1960, 240 էջ:

3. Դիվան հայ վիմագրության, պր. Գ, (կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան), Երեւան, 1967, 426 էջ:

4. Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, 225 էջ:

5. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելյանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, 45 էջ:

6. ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Ա. Մաթեւոսյան), Երեւան, 1984, 989 էջ:

7. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Ա, Երեւան, 1955, 812 էջ:

8. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Բ, Երեւան, 1958, 598 էջ:

9. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Գ, Երեւան, 1967, 712 էջ:

10. Իբն Ալ-Ասիր, թարգմ. ընդգրից, առաջաբան եւ ծան. Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, 442 էջ:

11. Խաչիկյան Լ., ԺԴ դարի ձեռ. հիշատակարաններ, Երեւան, 1950, 756 էջ:

12. Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, 383 էջ:

13. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երեւան, 1961, 424 էջ:

14. Կոստանեանց Կ., Վիմական տարեգիրք, Ս. Պետերբուրգ, 1913, 292 էջ:

15. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1978, 940 էջ:

16. Հայոց նոր վկաները, գիտական հրատարակութիւն, աշխատասիրութեամբ Հ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, 795 էջ:

17. Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, (աշխարհաբար թարգմ. եւ ծան. Գ. Թոսունյանի), Երեւան, 1996, 398 էջ:

18. Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երեւան, 1983, 140 էջ:

19. Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, Երուսաղէմ, 1990, 674 էջ:

20. Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 11, Երուսաղէմ, 1991, 469 էջ:

21. Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, 386 էջ:

22. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Սանկտ Պետերբուրգ, 1885, 438 էջ:

23. Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, 618 էջ:

24. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, նախաբությունը եւ ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, 614 էջ:

25. Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, Երեւան, 2001, 164 էջ:

26. Վրաց ժամանակագրություն, թարգմ. հին վրացերենից, առաջաբանը եւ ծան. Պ. Մուրադյանի, Երեւան, 1971, 222 էջ:

27. Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, «Արարատ», 1897, էջ 129–144:
28. Տեառն Ստեփաննոսի նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756, 188 էջ:
29. Տէր-Ավետիսեան Ս., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, 926 էջ:
30. Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, 257 էջ:
31. Փիրղալեմեան Ղ. Նշխարք պատմութեան հայոց, 1884, Մատենադարան, ձեռ. թիվ 4515, 232 էջ:

(Անգլերեն)

32. A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, By Avedis K. Sanjian, Los Angeles-London, 1976, 863 p.

2. Գրականություն

(Հայերեն)

1. Աբրահամյան Ա., Գլաձորի համալսարանը, Երևան, 1983, 183 էջ:
2. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, 592 էջ:
3. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, 740 էջ:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, 674 էջ:
5. Աճեմեան Շ., Մետրոպոլիտութիւնը Հայոց մէջ, «Նորավանք» ժողովածու, Մոնրեալ-Երեւան, 2001, էջ 26–32:
6. Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, 360 էջ:
7. Արեւշատյան Ս., Գրիգոր Տաթեւացի, «Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5–18-րդ դարեր», (ժողովածու), Երևան, 1976, էջ 406–416:

8. Արեւշատյան Ս., Մաթեւոսյան Ա., Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երեւան, 1984, 58 էջ:

9. Գեւորգյան Ա., Վայոց ձորի եւ Որոտանի մանրանկարչությունը 13–14-րդ դդ., Երեւան, 2003, 184 էջ:

10. Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյ եօթնալոյս վարդապետի, Կ.Պոլիս, 1741, 740 էջ:

11. Գրիգորյան Գ., Սյունիքի վանական կալվածատիրությունը 9–13-րդ դարերում, Երեւան, 1973, 266 էջ:

12. Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երեւան, 1981, 316 էջ:

13. Զամինյան Ա., Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջեւան, 1914, 241 էջ:

14. Խաչիկյան Լ., Սյունյաց Օրբելյանների Բուլթելյան ճյուղը, Բանբեր Մատենադարանի, 9, Երեւան, 1969, էջ 173–199:

15. Մովսիսյան Ն., Տաթեւ, «Սիոն», 1950, յունիս-յուլիս, էջ 200–221:

16. Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երեւան, 1966, 219 էջ:

17. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. Բ, Երեւան, 1984, 688 էջ:

18. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. Գ, Երեւան, 1976, 1024 էջ:

19. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. Դ, Երեւան, 1972, 680 էջ:

20. Հայոց եկեղեցու սրբերը եւ սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ. Մաթեւոսյան, Ս. Էջմիածին, 1999, 246 էջ:

21. Մադոյան Ա., Առաքել Սյունեցի բանաստեղծը, Երեւան, 1987, 186 էջ:

22. Մաթեւոսյան Ա., Հայոց միջնադարյան համալսարանը, «Լրաբեր» հասարակական դիտություններ, 1984, 1, էջ 62–71:

23. Մաթեւոսյան Կ., Դրվագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմությունից, «Նորավանք» ժողովածու, Մոնրեալ-Երեւան, 2001, էջ 62–76:

24. Մանանդյան Հ., Երկեր, Բ, Երեւան, 1978, 646 էջ:

25. Մանանդյան Հ., Երկեր, Գ, Երեւան, 1977, 504 էջ:

26. Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեւան, 1980, 253 էջ:

27. Մնացականյան Աս., Միջնադարյան հայրենասիրական մի նոր-բահայտ պոեմ «Տաղ Տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին», «Բանբեր Մատենադարանի», 1967, 8, էջ 291–317:

28. Մելքոնյան Հ., Ցաղաց քարի վանքի պեղումները եւ նորա-հայտ արձանագրությունները, «Նորավանք» ժողովածու, Մոնթ-রեալ-Երեւան, 2001, էջ 84–98:

29. Մեսրոպ արքեպս. Սմբատեանց, Տեղագրութիւն Գեղարքունի ծովազարդ գաւառի, Էջմիածին, 1895, 849 էջ:

30. Մկրտչյան Ա., Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյան-ների իշխանության ժամանակ, «Էջմիածին», 1988, Ե-Զ, էջ 35–43, Է, էջ 49–54, Ը, էջ 32–40:

31. Մկրտչյան Աբրահամ վարդապետ, Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995, 109 էջ:

32. Մնացականյան Սա., Վարպետաց վարպետներ, Երեւան, 1982, 180 էջ:

33. Յովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմու-թեան մէջ, Անթիլիաս, 1969, 523 էջ:

34. Յովսեփեան Գ., Տարսայիճ Օրբելյան եւ Մինա Խաթունի սե-ռունդը, «Հասկ» հայագիտական հանդես, Ա տարի, Անթիլիաս, 1948, 28 էջ:

35. Նոր Բառագիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Երեւան, 1981, 1057 էջ:

36. Զամչյան Մ., Հայոց պատմութիւն, հ. Գ, Երեւան, 1984, 896 էջ:

37. Ռիչար Ժ., Ավինյոնի պապությունը եւ Հայաստանը, Պատմա-բանասիրական հանդես, 2001, 1, էջ 152–157:

37. Ռիշար Ժ., Ավինյոնի պապությունը եւ Հայաստանը, Պատմաբանասիրական հանդես, 2001, 1, էջ 152–157:

38. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, 1072 էջ:

39. Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, 935 էջ:

40. Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, 1010 էջ:

(Ռուսերեն)

41. Григорян Г. М., Очерки истории Сюника IX–XV вв., Ереван, 1990, 390 с.

42. О. Халпахчян, Архитектурные ансамбли Армении, Москва, 1980, 479 с.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՄԻՆՉԵՒ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԸ

1. Մատենագրական վկայություններ Սյունյաց մետրոպոլիտության վերաբերյալ 19
2. Սյունյաց աթոռը Օրբելյանների տիրապետության նախօրյակին 32

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ

1. Սյունյաց աթոռի ամրապնդումը Նորավանքում (Ստեփանոս Գ, Սարգիս Ա) 43
2. Տաթեւի եւ Նորավանքի աթոռները 13-րդ դարի կեսերին 57
3. Սյունյաց աթոռը մինչեւ Ստեփանոս Օրբելյանի գահակալությունը 64

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ

1. Ստեփանոս Օրբելյանի աթոռակալությունը 71
2. Ստեփանոս Օրբելյանի թուղթը Գրիգոր Անավարզեցուն 82
3. Հովհաննես-Օրբելի աթոռակալությունը 90
4. Ստեփանոս-Տարսայիճի աթոռակալությունը 103

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Սյունյաց աթոռը 14-րդ դարի կեսերին 113
2. Հովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի 121
3. Սյունյաց աթոռը 15-րդ դարում 129

Եզրակացություններ 144

Հավելված
Օրբելյանների շրջանի Սյունյաց եպիսկոպոսների գավազանագիրքը եւ տոհմագրությունը 150

Օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկ 156

ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, просп. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshall Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[1700 դ]

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0612673

II
A 105485